

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԽՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Ապրիլ 17, 2015

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ФИЛОСОФИИ И ПСИХОЛОГИИ
КАФЕДРА СОЦИАЛЬНОЙ ПСИХОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF PHILOSOPHY AND PSYCHOLOGY
DEPARTMENT OF SOCIAL PSYCHOLOGY

МАТЕРИАЛЫ КОНФЕРЕНЦИИ

**ПАТОПСИХОЛОГИЧЕСКИЕ И СОЦИАЛЬНО-
ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ГЕНОЦИДА**

Апрель 17, 2015

CONFERENCE PROCEEDINGS

**PATHOPSYCHOLOGICAL AND SOCIAL-
PSYCHOLOGICAL CONSEQUENCES OF ARMENIAN
GENOCIDE**

April 17, 2015

YEREVAN – ЕРЕВАН
YSU PRESS – ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
2015

ՀՏԴ 159.9:316.6:06.053

ԳՄԴ 88.5

Ց 337

Ժողովածուի հրատարակումն երաշխավորված է
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհրդի կողմից

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝

հոգ. գիտ. դոկ., պրոֆ. **Գ. Մ. Շահվերդյան**
փիլ. գիտ. դոկ., պրոֆ. **Էդ. Ա. Հարությունյան**
հոգ. գիտ. թեկ., դոց. **Ս. Ֆ. Սարգսյան**
հոգ. գիտ. թեկ., դոց. **Ն. Հ. Հարոյան**
հոգ. գիտ. թեկ., դոց. **Ա. Թ. Կոբեղյան**
հոգ. գիտ. թեկ., ասիստ. **Ի. Ա. Ղազարյան**
դասախոս **Գ. Ս. Պետրոսյան**
դասախոս **Ֆ. Ն. Բազոյան**
դասախոս **Մ. Վ. Ավետիսյան**
դասախոս **Ս. Ա. Շահվերդյան**

Ց 337 «Ցեղասպանության ախտահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետևանքները»:
Գիտաժողովի նյութեր: ԵՊՀ: Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, Սո-
ցիալական հոգեբանության ամբիոն, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 188 էջ:

Սույն ժողովածուն ներառում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին
նվիրված գիտաժողովի նյութերը:

Գիտաժողովի կազմակերպմանն աջակցելու համար
շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԿՆ ԳՊԿ-ին

ՀՏԴ 159.9:316.6:06.053

ԳՄԴ 88.5

ISBN 978-5-8084-1976-6

© ԵՊՀ հրատ., 2015

© Կազմողի համար, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ/СОДЕРЖАНИЕ/CONTENT

ՆԱԽԱԲԱՆ	9
ПРЕДИСЛОВИЕ	10
PREFACE	11
 Դավիթ Գևորգյան	
Հոգեցնման դերը բացասական կոգնիտիվ սխեմաների ձևավորման հարցում	12
Давид Геворгян	
Роль психотравмы в формировании негативных когнитивных схем	18
Davit Gevorgyan	
The role of psychotrauma in the formation of negative cognitive schemes	18
 Արմեն Ներսիսյան	
Հետտրավմատիկ սթրեսային խանգարումները ցեղասպանությունը վերապրածների և նրանց սերունդների մոտ	19
Армен Нерсисян	
Посттравматические стрессовые расстройства у людей переживших геноцид и у их потомков	26
Armen Nersisyan	
Post-traumatic stress disorders in the armenian genocide survivors and their generation	26
 Տիլվա Պետրոսյան	
Հայոց ցեղասպանության ազդեցությունն ազգային ինքնության վրա. որոշ փիլիսոփայական և հոգեբանական դիտարկումներ	27
Сильва Петросян	
Влияние геноцида армян на национальную идентичность: некоторые философские и психологические наблюдения	32
Silva Petrosyan	
The impact of armenian genocide on national identity: some philosophical and psychological observations	32
 Սյուզան Մարգարյան	
Հիշողության միջսերնդային փոխանցում. դեպքի վերլուծություն	33
Сюзан Саргсян	
Трансгенерационная передача памяти: анализ случая	37
Suzan Sargsyan	
Transmission of transgenerational memories. analysis of a case	38
 Ասրէդ Արյան	
Ցեղասպանության սոցիալ-հոգեբանական և ախտահոգեբանական հետևանքները	39

Асбед Арян

Социально-психологические и патопсихологические последствия геноцида	46
---	----

Asbed Aryans

Social-psychological and pathological consequences of genocide	46
--	----

Nane Movsisyan

The analysis of armenian and turkish identity in the context of genocide	47
--	----

Նանե Մովսիսյան

Հայկական և թուրքական ինքնության վերլուծությունը ցեղասպանության համատեքստում	53
--	----

Нанэ Мовсисян

Анализ армянской и турецкой идентичности в контексте геноцида армян	53
---	----

Արթուր Կոբեղյան

Ցեղասպանությունը՝ որպես էթնիկական անհանդուրժողականության ծայրահեղ դրսևորում	54
--	----

Артур Кобелян

Геноцид как крайнее проявление этнической интолерантности	63
---	----

Artur Kobelyan

Genocide as an extreme manifestation of ethnic intolerance	64
--	----

Գագիկ Պետրոսյան

Ցեղասպանության հոգեախտածին հետևանքները	65
--	----

Гагик Петросян

Психопатогенные последствия геноцида	73
--	----

Gagik Petrosyan

Psychopathogenic consequences of genocide	73
---	----

Նելլի Հարոյան

Պատմահոգեբանական գործոնների ազդեցությունը հայ ազգային մտածելակերպի ձևավորման վրա	74
---	----

Нелли Ароян

Влияние социально-исторических факторов на формирование армянского национального мышления	77
--	----

Nelli Haroyan

The influence of historical and social factors on the formation of the armenian national thinking	77
--	----

Մատեոսյան Ս.Ն., Տեֆանենկո Դ. Գ., Զմուրին Ի.Է., Կիտայնա Օ.Մ.

Взаимосвязь исторической памяти и этнической идентичности армян	78
---	----

Մաթևոսյան Ս. Ն., Ժմուրին Ի. Ե., Ստեֆանենկո Տ. Գ., Կատաինա Օ. Մ.

Հայերի էթնիկական նույնականացման և պատմական հիշողության փոխկապակցվածությունը	85
--	----

Matevosyan S.N., Stefanenko T. G., Zhmurin I.E., Katayna O.M.

The relationship between ethnic identity and historical memory of Armenians	85
---	----

Մատեոսյան Ս.Ն., Տեֆանենկո Դ. Գ., Զմուրին Ի.Է., Կիտայնա Օ.Մ.

Особенности этнической идентичности армян в условии сохранения ими исторической памяти о геноциде	86
--	----

Մաթևոսյան Ս. Ն., Ժմուրին Բ. Ե., Ստեֆանենկո Տ. Գ., Կատաինա Օ. Մ.	
Հայերի էթնիկական նույնականացման առանձնահատկությունները ցեղասպանության վերաբերյալ պատմական հիշողության պահպանման պարագայում.....	95
Matevosyan S.N., Stefanenko T. G., Zhmurin I.E., Kataina O.M.	
The characteristics of armenian's ethnic identity in the condition of maintaining historical memory of genocide.....	95
Гаяне Шавердян	
Армения и ее супостат	96
Գայանե Շահվերդյան	
Հայաստանը և նրա հակառակորդը.....	120
Gayane Shaverdyan	
Armenia and its supostat	121
Սերա Շահվերդյան	
Սոցիոմշակութային գործոնների դերը տնտեսական վարքում	122
Седя Шахвердян	
Роль социокультурных факторов в экономическом поведении	126
Seda Shahverdyan	
The role of socio-cultural factors in economic behavior	126
Մերյոժա Մանուկյան, Լիլի Ներսիսյան, Մարիամ Պետրոսյան	
Վրեժի խորհուրդը «Սասունցի դավիթ» էպոսում	127
Сережа Манукян, Лили Нерсисян, Мариам Петросян	
"Замысел мести" в эпосе сасунци давид.....	132
Seryoja Manukyan, Lily Nersisyan, Mariam Petrosyan	
"The idea of revenge" in the epicdavid of sassoun	132
Владимир Микаелян	
Проекция тени: к проблеме этнической деструктивности.....	133
Վլադիմիր Միքայելյան	
Ստվերի պրոյեկցիան. էթնիկական ապակառուցողականության խնդրի շուրջ	139
Vladimir Mikaelyan	
A projection of shadow: on the problem of ethnic destructiveness.....	139
Հայկունիի Կնյազյան	
Հայոց ցեղասպանության հոգեկան տրավմայի ներկա դրսևորումները.....	140
Айкуи Князян	
Сегодняшние проявления психической травмы армянского геноцида.....	145
Haykuhi Knyazyan	
The present displays of the psychologic trauma of the armenian genocide	145
Իզաբելլա Դազարյան	
Ցեղասպանության հիմախնդրի քաղաքական-հոգեբանական հայեցակետերը	146
Изабелла Казарян	
Политико-психологические аспекты проблемы геноцида армян	150
Izabella Ghazaryan	
Political-psychological aspects of armenian genocide problem	150

Александр Манасян

Заявление нпо “академия политических исследований” в связи со 100-летней годовщиной мец егерна международно-политические последствия ненаказанности егерна/геноцида армян 151

Ալէքսանդր Մանասյան

«Քաղաքական հետազոտությունների ակադեմիա» ՀԿ-ի հայտարարությունը մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի կապակցությամբ.
հայերի եղեռնի/ցեղասպանության անպատժելիության
միջազգային-քաղաքական հետևանքները 159

Alexandr Manasyan

«Political research academy» ngo declaration on the 100th anniversary of genocide international political consequences of armenian yeghern/ genocide impunity 160

Խաչատուր Գասպարյան, Գայանե Ղազարյան, Լիլիթ Մնացականյան

Ազատ զուգորդումների մերժող՝ որպես ցեղասպանության պատճառած հոգեբանական տրավմայի ուսումնասիրման միջոց..... 161

Хачатур Гаспарян, Гаяне Казарян, Лилит Мнацаканян

Метод свободных ассоциаций, как способ изучения психологических травм причиненных геноцидом 169

Khachatur Gasparyan, Gayane Ghazaryan, Lilit Mnatsakanian

Free associations as a method to study of psychological trauma caused by genocide 169

Մարի Ավետիսյան

Անձի կոգնիտիվ սխեմաների դերը վշտի ապրման գործընթացում 170

Мари Аветисян

Роль когнитивных схем личности в процессе переживания горя 173

Mari Avetisyan

The role of cognitive schemas of personality in the process of grieving 174

Ֆենյա Բազոյան

Հայերի էթնոհոգեբանության պատմամշակութային տեսանկյունները..... 175

Феня Базоян

Историко-культурные аспекты этнопсихологии армян 179

Fenya Bazoyan

Historical and cultural aspects of armenian ethnopsychology 179

Նելլի Վարդանյան

Հայոց ցեղասպանության փաստի ընկալման տարիքային առանձնահատկությունները. կրտսեր դպրոցական, դեռահասության և վաղ պատանեկության տարիք..... 180

Нелли Варданян

Возрастные особенности восприятия геноцида армян. младший школьный возраст, подростковый и юношеский возраст 186

Nelly Vardanyan

The specifics of perception of the fact of armenian genocide among difeerent age groups 186

ՆԱխաբան

Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի սոցիալական հոգեբանության ամբիոնը պատասխանատու է հոգեբանության չորս բանգավառների՝ սոցիալական, կլինիկական, քաղաքական և իրավաբանական, ուսուցման և գիտական զարգացման համար:

Բնական է, որ Օսմանյան կայսրության կողմից իրագործված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ ամբիոնն արձագանքեց «Ցեղասպանության սոցիալ-հոգեբանական և ախտահոգեբանական հետևանքները» խորագրով կոնֆերանսով և դրա նյութերի հիման վրա հրատարակված հոդվածների համանուն ժողովածուով:

Ժողովածուի մեջ հնարավորինս խոր ուսումնասիրվում են ցեղասպանության հոգեբանական և հոգեախտաբանական հետևանքները: Հայերի ցեղասպանությունը կարելի է դիտարկել որպես հետտրավմատիկ սթրեսային խանգարում, չնայած տերմինին, տվյալ խանգարումը համարվում է նորմալ հակազդում ոչ նորմալ և սուր տրավմատիկ իրավիճակներին: Դրա համար հիմք են հանդիսացել հայերի մոտ դրսևորվող տվյալ խանգարման հիմնական 2 ախտանիշները. տրավմատիկ կաշուն հիշողությունները և տրավմատիկ թեմայից անընդհատ խուսափելն ու փախուստը:

Դիտարկվում է նաև Ցեղասպանության հոգետրավմայի դերը կոգնիտիվ կառույցների ձևավորման գործընթացում երեք սերունդների մոտ, որոնք ծնվել են Ցեղասպանությունից հետո, նաև կլինիկական-հոգեբանական այլ ազդեցությունները:

Այդ տրավմայի սոցիալ-հոգեբանական վերլուծությունը ներառում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հայերի Ցեղասպանությունը և նույնականությունը, վրեժի սիմվոլիկան, Ցեղասպանության ազդեցությունը հայերի մտածողական տիպի ձևավորման վրա, էթնիկական թերաթեքության հիմնախնդիրը, Ցեղասպանության քաղաքական, հոգեբանական տեսանկյունները, Ցեղասպանության փաստի ընկալման հոգեբանական տարիքային առանձնահատկությունները, Ցեղասպանությունը որպես էթնիկական անհանդուրժողականության ծայրահեղ դրսևորում և այլն:

Փորձ է արված նաև տեսական-համեմատական հետազոտություն անցկացնել հայերի և թուրքերի էթնոհոգեբանության միջև:

Ժողովածուում քննարկվում են Ցեղասպանության պատճառները և մատնանշվում, որ այդ պատճառների ամբողջական պատկերացման համար անհրաժեշտ է ներառել փաստերի պատճառականության ոգեղեն, հոգեբանական և քաղաքական տեսանկյունները:

Ժողովածուն հասցեագրված է ուսանողներին, նաև հոգեբանության և հարակից գիտությունների դասախոսներին:

**ԵՊՀ սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր Գայանե Շահվերդյան**

ПРЕДИСЛОВИЕ

Кафедра Социальной психологии факультета Философии и психологии ЕГУ ответственна за обучение и научные разработки в четырех областях психологии: социальная, клиническая, политическая и юридическая психология.

Естественно, что на 100-летие Геноцида Армян со стороны Османской империи кафедра откликнулась организацией конференции на тему: “Социально-психологические и патопсихологические последствия геноцида” и одноименным сборником статей по материалам конференции.

В сборнике по возможности глубоко проанализированы социально-психологические и патопсихологические последствия геноцида. Показано, что геноцид армян можно рассматривать как посттравматическое стрессовое расстройство (несмотря на термин, данное расстройство считается нормальной реакцией на ненормальную и остро травмирующую ситуацию). Основанием к этому является наличие у армян двух основных симптомов данного расстройства: навязчивые травматические воспоминания или постоянное избегание травмирующей темы. Рассмотрена также роль психотравмы геноцида в процессе формирования когнитивных схем у трех поколений, родившихся после геноцида и другие клиничко-психологические влияния геноцида.

Социально-психологический анализ данной травмы включает такие проблемы как: геноцид и идентичность армян, проблемы символики мести, влияние геноцида на процесс формирования мыслительного типа армян, проблема этнической неполноценности, политико-психологические аспекты геноцида, психолого-возрастные аспекты восприятия факта геноцида, геноцид как крайнее проявление этнической нетолерантности и т.д. Предпринята также попытка сравнительного теоретического исследования этнопсихологии армян и турок.

В сборнике рассмотрены также причины геноцида и показано, целостное представление об этих причинах должно включать духовные, психологические и политические аспекты причинности события.

Сборник адресован студентам, а также преподавателям психологии и смежных дисциплин.

**Заведующая кафедрой Социальной психологии ЕГУ
Профессор Гаяне Шавердян**

PREFACE

Department of Social Psychology of Yerevan State University, is responsible for the education and scientific development of four fields of psychology: social psychology, clinical psychology, political psychology and forensic psychology.

Naturally, the department responded to the 100-year anniversary of the Armenian genocide perpetrated by Ottoman Empire, with "The pathopsychological and social-psychological consequences of Armenian Genocide" conference and its proceedings based on articles published in the same collection. The pathopsychological and social-psychological consequences of Armenian Genocide are deeply studied and presented by the authors in the conference proceedings. Armenian Genocide can be considered as Posttraumatic stress disorder. Although the term, the disorder is a normal reaction to abnormal and acute traumatic situations. It is based on the 2 main symptoms of this disorder manifested in Armenians: traumatic intrusive recollections and constant avoidance from traumatic theme.

It is observed the role of Armenian Genocide impact on the formation of cognitive structures in three generations born after Genocide and also other patho-psychological effects.

The social-psychological analysis of the trauma includes issues such as the Armenian Genocide and identity, revenge symbolism, the impact of the genocide on the formation of Armenians thinking style, the problem of ethnic inferiority, political, psychological aspects of genocide, psychological perception of age features of genocide, genocide as ethnic extreme intolerance, etc. The theoretical-comparative research between Armenians and Turks ethnopsychology is also conducted in this materials.

The conference proceedings discusses the reasons and indicated that it is necessary to include spiritual, psychological and political aspects of the facts for complete understanding of these reasons.

The book is addressed to students and lecturers of psychology and related sciences.

Head of Department of Social Psychology, YSU
Professor Gayane Shahverdyan

ՀՈԳԵՑՆՑՄԱՆ ԴԵՐԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈԳՆԻՏԻՎ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հանգուցային բառեր՝ կոգնիտիվ սխեմա, խորքային համոզմունք, հոգեցունց փորձ:

Կոգնիտիվ հոգեթերապիայում սխեմա, համոզմունք, կանոն, կոգնիտիվ ձևանմուշ (պատերը), կոգնիցիա հասկացություններն ընդհանուր առմամբ ունեն նման սահմանումներ և հաճախ փոխարինում են միմյանց: Այնուամենայնիվ, կոգնիտիվ հոգեթերապիայի հայր Աարոն Բեքը համարում է, որ կոգնիտիվ սխեմաները մարդու փորձը և վարքը կազմակերպող կոգնիտիվ կառույցներ են, որոնց բովանդակությունն արտացոլվում է համոզմունքներում և կանոններում: [1]

Անձի կոգնիտիվ տեսություններում սխեմաները սահմանվում են որպես հարաբերականորեն կայուն կոգնիտիվ մոդելներ, որոնց միջոցով անձը դասակարգում և համադրում է ստացվող տեղեկատվությունը, ընդ որում սխեմաները դիտարկվում են արդեն ոչ միայն որպես կոգնիտիվ կառույցներ, այլ որպես փորձի ձեռքբերման գործընթացում ձևավորվող և առանցքային համոզմունքներ պարունակող կոգնիտիվ-աֆեկտիվ համալիրներ: [4]

Համոզմունքների կարևոր բնութագրիչներից է դրանց հիերարխիկ բնույթը: Գոյություն ունեն մակերեսային համոզմունքներ՝ մտքեր, որոնք մեծամասամբ արտացոլում են ընթացիկ իրավիճակը, հեշտ են գիտակցվում և չեն կրում իրենց ներքո բավարար վերլուծական հիմք: Այս մակարդակի մտքերը որոշակի վերապահումով կարելի է նույնացնել «ավտոմատիկ մտքերի» հասկացության հետ: Ավելի խորը մակարդակներում, համաձայն Ջ. Բեքի հասկացման [2], ներկայացված են անձի միջանկյալ և խորքային համոզմունքները, որոնք կազմում են նրա ինքնագիտակցության առանցքը: Միջանկյալ համոզմունքները, լինելով ավելի քիչ գիտակցվող, ուղղակիորեն ներագրում են անձի ավտոմատիկ մտքերի «ուղղության» վրա: Միջանկյալ համոզմունքները ներառում են սեփական անձի, հարաբերությունների և անձին շրջապատող իրադրությունների վերաբերյալ սպասումներ և ենթադրություններ, կանոններ և վերաբերմունքներ:

Խորքային (կենտրոնական, առանցքային) համոզմունքներն անձի մտածողության ամենախորը մակարդակն են, մեծամասամբ՝ չգիտակցվող, և ներառում են նրա հիմնարար պատկերացումները սեփական անձի, աշխարհի և շրջապատի մարդկանց վերաբերյալ: Խորքային համոզմունքների ձևավորումը սկսվում է վաղ մանկության ընթացքում, երբ երեխան փոխներգործում է նշանակալից անձանց հետ և

ձեռք է բերում կենսափորձ: Երեխային առաջին տպավորությունները աշխարհի և իր մասին կառուցվում են դեռևս մինչև խոսքային մակարդակում:

Հենվելով օբյեկտային հարաբերությունների տեսության վրա՝ Յանոֆ-Բուլմանը [3] պնդում է, որ խորքային համոզմունքների ձևավորման առավել կարևոր բաղադրիչը մեծահասակի պատասխանն է երեխայի ճիշդին: Արդեն յոթ ամսեկանում երեխան սկսում է կառուցվաքայնեցնել սեփական փորձը՝ ստեղծելով խորքային համոզմունքներ շրջապատող աշխարհի բարյացակամության, արդարության վերաբերյալ, ինչպես նաև սիրուն և հոգատարությանը արժանի /կամ անարժան/ սեփական Ես-ի վերաբերյալ:

Այսպիսով, հոգեթերապիայի համատեքստում սխեման դիտարկվում է գերազանցապես որպես մարդու կենսափորձի իմաստավորման կազմակերպիչ սկզբունք (organizing principle): Կարևոր հանգամանք է այն, որ սխեմաների ձևավորման գործընթացը, սկիզբ առնելով վաղ մանկությունից, ընթանում է նոր սխեմաների բարդ վերադրմամբ, արդեն իսկ գոյություն ունեցող սխեմաների վրա, ինչի արդյունքում և ոչ մի վարք կամ փորձառություն, նույնիսկ եթե այն նոր է անձի համար, չի կարող դիտարկվել որպես բացարձակ սկիզբ: Նման վերադրումը ընթանում են մեծամասամբ գիտակցությունից դուրս և ներառում է Պիաժեի կողմից առաջարկվող ասիմիլյացիայի և ալոմոդացիայի գործընթացների հերթափոխ:

Ասիմիլյացիան նոր օբյեկտի ներառումն է արդեն առկա գործողությունների սխեմայի մեջ: Ըստ Պիաժեի [5], այս գործընթացում տեղի է ունենում նոր փորձի ռեդուկցիա, «ստեղծվում» արդեն գոյություն ունեցող զգայաշարժողական և հայեցակարգային կառույցների ներքո: Այն դեպքում, երբ նոր փորձը ոչ ամբողջապես է ներառվում առկա սխեմաներում, գործարկվում է ալոմոդացիայի գործընթացը, այսինքն արդեն հենց սխեմաների վերակառուցում, դրանց հարմարում նոր փորձին: Այսպիսով, զարգացման գլխավոր մեխանիզմը կայանում է ասիմիլյացիայի և ալոմոդացիայի գործընթացների ճկուն հերթափոխի մեջ:

Հենվելով Պիաժեի տեսության վրա, կարող ենք ենթադրել, որ կյանքի ընթացքում բախվելով նոր փորձին՝ անձը միաժամանակ գործարկում է նշված գործընթացներից յուրաքանչյուրը՝ մի կողմից ասիմիլյացնելու նոր փորձը հին պատկերացումների հետ, ապահովելու դրա ճանաչելիությունն ու «մարսելիությունը», մյուս կողմից՝ ընդլայնելու հին պատկերացումները և հետևաբար՝ աշխարհայացքը ընդհանուր առմամբ: Առաջին գործընթացն առավելապես ծառայում է «կոգնիտիվ հաստատունության» պահպանման պահանջին՝ սեփական անձի և աշխարհի վերաբերյալ կայուն պատկերացումների պահպանմանը, նույնիսկ եթե իրականում դրանք ոչ ճշգրիտ են կամ աղճատված: Մա գերազանցապես պաշտպանական գործառույթ է, որը փոփոխող միջավայրային պայմաններում էվոլյուցիոն անհրաժեշտություն է՝ արտացոլված Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից սահմանված հոգեկան առողջության առաջին չափանիշում, այն է. սեփական ֆիզիկական և հոգեկան Ես-ի գիտակցում և դրա մշտականության, անընդհատության և նույնականության զգացում:

Կոգնիտիվ սխեմաների ընդլայնման, ալոմոդացիայի գործընթացն արդեն ծառայում է փոփոխվող միջավայրային պայմաններում առավել արդյունավետ հարմարվելու և զարգանալու գործառույթին, ինչը, առաջին հայացքից լինելով իր էությանը հակադիր ասիմիլյացիայի գործընթացին, սակայն նույն չափով հանդիսանում է

էվոյուցիոն անհրաժեշտություն: Այս գործընթացի շնորհիվ անձը շտկում և ընդլայնում է աշխարհի և իր մասին հին պատկերացումները, ձևավորում է նոր պատկերացումներ, աճում է և զարգանում: Արդյունքում նա ունակ է լինում կյանքի հանգամանքների փոփոխություններից կախված փոփոխելու իր վարքը, ինչը նույնպես արտացոլված է ԱՀԿ հոգեկան առողջության չափանիշներում:

Այսպիսով, հաջորդիվ հասկանալու համար հոգեցունց (psychotraumatic) իրադրությունների ներազդման առանձնահատկությունները անձի կոգնիտիվ կառույցների վրա, կարելի է առանձնացնել հետևյալ ամփոփիչ դրույթները:

1. Մխեմաները ձևավորվում են վաղ մանկությունից կենսափորձի ձեռքբերման գործընթացում, իրենցից ներկայացնում են նոր տեղեկատվությունը/փորձը կառուցվածքայնեցնող կոգնիտիվ կառույցներ, որոնք կրում են ընդգծված հուզական ծանրաբեռնվածություն:

2. Մխեմաների ձևավորումն իրականանում է նոր փորձի և արդեն առկա սխեմաների փոխներգործության՝ ասիմիլյացիայի և ալոմոդացիայի գործընթացների հերթափոխման շնորհիվ:

3. Մխեմաները կարող են ունենալ ճկունության տարբեր աստիճաններ: Ոչ ճկուն, ռիգիդ սխեմաներն ապահարմարման հիմնական պատճառն են, քանի որ թույլ չեն տալիս անձին ընդլայնելու սեփական վերաբերմունքների և վարքի ձևանմուշները:

4. Մխեմաների բովանդակությունը կազմող համոզմունքները գոյացնում են որոշակի հիերարխիա՝ մակերեսային, միջանկյալ և խորքային համոզմունքներ: Խորքային համոզմունքները արտացոլում են առավելապես ընդհանրական, վերացական և միանշանակ վերաբերմունքներն աշխարհին և սեփական անձին:

Յանոֆ-Բուլմանի [3] կողմից առաջադրվել է բազիսային (խորքային) համոզմունքների հայեցակարգ, որը բացատրում է անձի վրա հոգեցունց ազդեցության մեխանիզմը: Ըստ այս հայեցակարգի, բազիսային համոզմունքների համակարգը ներառում է անձի համոզմունքները (1) արտաքին աշխարհի բարյացակամության վերաբերյալ, (2) աշխարհի արդարության վերաբերյալ և (3) սեփական անձի արժեքի վերաբերյալ:

Աշխարհի բարյացակամության վերաբերյալ խորքային համոզմունքները դրսևորվում են «դրական-բացասական» մոդալականություններով: Սովորաբար մարդկանց մեծամասնությունը հիմնային պատկերացումների մակարդակում աշխարհը և մարդկանց համարում է վստահության արժանի, ապահով և բարյացակամ: Այս դրական համոզմունքները կարևորագույն հիմք են հանդիսանում անձի հոգեկան բարօրության, հոմեոստազի պահպանման և ներքին ռեսուրսների առավելագույն զարգացման համար: Նման դեպքում անհաջողությունները և բացասական փորձը դիտարկվում են քիչ հավանական, պատահական և անցողիկ:

Շրջապատող աշխարհի արդարության վերաբերյալ բազիսային համոզմունքները, ըստ Յանոֆ-Բուլմանի, արտացոլում են անձի պատկերացումները հաջողությունների և դժբախտությունների բաշխման սկզբունքների վերաբերյալ: Այս համոզմունքները ներառում են անձի խորքային վստահությունը նրանում, որ մարդկանց հետ տեղի ունեցող իրադարձությունների բաշխումը իրականանում է արդարության սկզբունքով (յուրաքանչյուրը ստանում է այն, ինչին արժանի է):

Մյուս բնութագրիչը համապատասխանում է անձի այն համոզվածությանը, որ մարդիկ կարող են սեփական գործողությունների միջոցով կանխել ծանր իրադարձությունները (եթե մարդը ճիշտ է վարվում, նա կարող է խուսափել բացասական իրավիճակներից): Մեկ այլ բնութագրիչ է լավ և վատ իրադարձությունների բաշխումը «պատահականություն-օրինաչափություն» սկզբունքով (ոչինչ պատահական չէ):

Սեփական Ես-ի կարևորության վերաբերյալ խորքային համոզմունքը իր մեջ ներառում է մարդու պատկերացումներն իր մասին որպես սիրո և հարգանքի արժանի մարդու: Այս բազիսային համոզմունքում նաև արտացոլվում են անձի պատկերացումներն այն մասին, որ նա ունակ է վերահսկելու իր հետ տեղի ունեցող իրավիճակները, իսկ եթե նույնիսկ ոչ, ապա նա կարող է իրեն համարել բախտավոր և դրանով իսկ պահպանել սեփական անխոցելիության զգացողությունը:[3,4]

Դրական բազիսային դիրքորոշումները երեխային ապահովում են պաշտպանվածության և աշխարհի հանդեպ վստահության զգացողությամբ, նպաստում են անձի՝ նոր փորձառության և հաղորդակցման նկատմամբ բաց լինելուն, Կ. Հորնիի հայեցակարգի հասկացությունների համատեքստում՝ բազային տագնապի նվազմանը, «դեպի մարդիկ» ուղղվածության ամրապնդմանը, հոգեբանական կոմֆորտի և ապահովության բարձրացմանը: Խոշոր հաշվով, այս դրական սխեմաների աշխատանքի շնորհիվ երեխան ակտիվորեն հետազոտում, փոխազդում, ճանաչում և յուրացնում է աշխարհը, ինչը հիմքն է նրա բնականոն հոգեկան զարգացման:

Ակնհայտ է, որ դրական ինքնավերաբերմունքի, աշխարհի և մարդկանց բարյացակամության, ինչպես նաև արդարության խորքային սխեմաներն առավելապես ենթակա են հոգեցունց իրադրության ազդեցությանը: Անսպասելիորեն անձը բախվում է կազմալուծող, դեստրուկտիվ իրականության և սեփական խոցելիության և անպաշտպանության գիտակցման հետ: Մինչ այդ առկա սեփական անձի պաշտպանվածության և աշխարհի ու մարդկանց բարյացակամության մեջ վստահությունը խարխլվում է, «ներքին հենարանների» համակարգն արագորեն կազմաքանդվում է:

Հոգեցունց փորձի ասիմիլյացիայի և ակոմոդացիայի գործընթացներն երկուսն էլ խաթարվում են: Նոր փորձն այն աստիճան իր աֆեկտիվ և տրամաբանական բովանդակությամբ անհամապատասխան է և նույնիսկ՝ հակասում է առկա խորքային համոզմունքներին, որ «հին» կոգնիտիվ սխեմաները ոչ մի կերպ չեն «տեղավորում» իրենց մեջ այդ փորձը, մերժում են այն, դուրս են վանում ընկալման հարացույցից: Նման ծայրաստիճան կոգնիտիվ դիսոնանսը կաթվածահար է անում նաև ակոմոդացիայի գործընթացը, ինչի արդյունքում նոր փորձը չի նպաստում առկա սխեմաների վերակառուցմանը և ընդլայնմանը, այլ «բյուրեղանում» է անգիտակցական մակարդակում, «պարկուճապատվում» (trauma encapsulating) և մեծապես նպաստում ինքնագիտակցման և վարքի բացասական ձևանմուշների արագ ձևավորմանը:

Արդյունքում, անձը կորցնում է ներքին հաստատունության և նույնականության զգացողությունը, հաճախ ունենում է դիսոցիատիվ պաշտպանական հոգեվիճակներ, որոնք կարող են վերաճել ավելի կայուն և տևական հոգեկան խանգարումների՝ դեպրեսիվ խանգարումներ, հետորավմատիկ սթրես խանգարում և այլն: Այս պարագայում արդեն դիտվում է կոգնիտիվ «տեղաշարժի» երևույթը, երբ հուզական խանգարումն արդեն լիովին պայմանավորում է հետագա փորձի ընկալման և ներքնայնացման գործընթացը՝ ապահովելով բացասական, դիսֆունկցիոնալ համոզ-

մունքների ամրապնդումը: Հնարավորություն չունենալով անձին չվնասող ձևով «յուրացնելու» աշխարհի, մարդկանց և սեփական անձի մասին նոր բացասական փորձը՝ հոգեցնցմանը ենթարկված մարդն անքննադատորեն փոխարինում է իր նախկին խորքային համոզմունքները նոր, ծայրահեղ բացասական և դեստրուկտիվ սխեմաներով, որոնցով արդեն շարունակում է արձագանքել արտաքին ազդակներին:

Որպես նշված կոգնիտիվ տեղաշարժի մեխանիզմ՝ սովորաբար գործում է հետևյալ տրամաբանական շղթան. անձի մոտ նոր ձևավորված բացասական խորքային համոզմունքը հենվում է հոգեցունց փորձի վրա և նպաստում է իրականության աղճատված ընկալմանը ներկայում: Այս խորքային համոզմունքներից ժամանակի ընթացքում սերվում են միջանկյալ համոզմունքներ, որոնք կրելով վերաբերմունքի, կանոնի կամ ենթադրության բնույթ՝ որոշակիորեն թուլացնում են անձի խորքային համոզմունքի բացասական ազդեցությունը Ես-կոնցեպցիայի վրա՝ ստանալով վարքային դրսևորում կայուն փոխհատուցող ռազմավարությունների միջոցով: Ստացվում է, որ հոգեցունց իրադարձությունից որոշակի ժամանակ հետո անձի մոտ դիտվող տիպական վարքային ձևանմուշները՝ խուսափում, գոհի կարգավիճակի ստանձնում, ագրեսիվ և անգամ՝ ինքնագրեսիվ գործողություններ և այլն, հանդիսանում են պաշտպանիչ ռազմավարություններ՝ հենվող որոշակի կանոնների և ենթադրությունների վրա, բայց որոնք իրենց հերթին ամրապնդում են բացասական համոզմունքները:

Օրինակ, ենթադրենք կինը փոքրուց ձևավորել է աշխարհի վերաբերյալ դրական խորքային համոզմունքներ, որոնք հնչում են այսպես. «Կյանքը կանխատեսելի է, մարդիկ հոգատար և բարյացակամ են»: Բախվելով սեռական բռնությանը՝ այս կնոջ կոգնիտիվ համակարգն առճակատվում է նոր, հոգեցունց փորձի հետ, ինչի արդյունքում նա դադարում է այլևս հավատալ իր դրական համոզմունքներին և սևեռվում է հակադիր, բացասական համոզմունքների վրա՝ «Աշխարհը և մարդիկ անվստահելի են, ես անգոր եմ դիմակայել նրանց կողմից պատճառվող ցավին»: Ակնհայտ է, որ այս համոզմունքները կրում են մեծ հուզական ծանրաբեռնվածություն՝ տազնապներ, դեպրեսիա, ապաթիա: Հուզական լարվածությունն իջեցնելու և ներհոգեկան հոմեոստազը վերականգնելու նպատակով գեներացվում են որոշակի միջանկյալ համոզմունքներ. «Պետք չէ մարդկանց մոտիկ թողնել, այլապես նրանք կվնասեն ինձ», «Եթե ես չլինեմ հուզական, մարդիկ ինձ կհամարեն ուժեղ և կզգուշանան», «Քանի որ մարդիկ անկանխատեսելի և չար են, ես պետք է հույսը դնեմ միայն ինձ վրա»: Հեշտ կանխատեսելի է նման համոզմունքներից ձևավորվող վարքը, որն ամենայն հավանականությամբ կդրսևորվի սոցիալական մեկուսացման, հարաբերություններում ագրեսիվ ինքնապաշտպանության, գերապահովագրող քայլերի, հուզական վերահսկողության միջոցով: Այս վարքային ձևանմուշները ծառայում են որպես խորքային համոզմունքները փոխհատուցող պաշտպանական ռազմավարություններ, որոնք մի կողմից մեղմում են բացասական ինքնընկալումն ու վերաբերմունքն աշխարհին, սակայն մյուս կողմից՝ ամրապնդում են դրանք՝ հնարավորություն չտալով անձին «մարսելու» հոգեցունց փորձը, վերադարձնելով նրան կրկին անգամներ նույն ապրումներին, անգիտակցական «կախման» մեջ դնելով նրան հոգեցունց փորձի հիվանդագին վերապրումներից: Այս մեխանիզմի միջոցով հնարավոր է դառնում հասկանալ հոգեցունց փորձի յուրահատուկ կաշունդությունը և անձի «համառ»

վերադարձը դիսֆունկցիոնալ, ապահարմարողական մտածական և վարքային սխեմաներին նույնիսկ ապահով և նպաստվոր միջավայրային պայմանների վերականգնման պարագայում: Նորից գործարկվում է «կոգնիտիվ կայունությունը» պահպանելու մեխանիզմը, որը սակայն այս պարագայում արտացոլվում է բացասական սխեմաների ամրապնդման և պահպանման մեջ՝ դրդված լինելով հոգեցունց փորձի ոչ բավարար վերաիմաստավորմամբ և խիստ բացասական հուզական հիշողությամբ՝ «Դա չպետք է ինձ հետ պատահեր, և ես ամենինչ կանեմ, որ նման բան երբևէ չկրկնվի»:

Նման կարծրացած, ինքնամրապնդվող կոգնիտիվ կառույցների հետ հոգեթերապևտիկ աշխատանքը, առաջին հերթին, ուղղվում է բազիսային դրական համոզմունքների վերականգնմանը, ինչի արդյունքում այդ համոզմունքներն ենթարկվում են որակական վերակառուցման՝ մինչև հոգեցնցումը եղած համոզմունքների հետ համեմատ [4]: Դրանց վերականգնումն իրականանում է ոչ ամբողջապես, մինչև որոշակի աստիճան, որն ազատում է մարդուն սեփական անխոցելիության և աշխարհի միանշանակ կառավարելիության վտանգավոր պատրանքից՝ միևնույն ժամանակ թույլ չտալով նրան բացարձակապես կորցնել ապահովության կողմնորոշիչները: Հոգեցնցում ապրած և այն հաջողությամբ հաղթահարած մարդու աշխարհի պատկերը մոտավորապես այսպիսին է՝ «Աշխարհն ընդհանուր առմամբ բարյացակամ և արդար է իմ նկատմամբ: Ես ունեմ ընտրության իրավունք և իմ կյանքը վերահսկելու հնարավորություն: Բայց այսպես լինում է ոչ միշտ»: Ակնհայտ է, որ նման մտածողությունն առանձնանում է իր ռացիոնալությամբ և կյանքի որակապես ուրիշ փիլիսոփայության ձևավորման արդյունք է, ինչին հնարավոր է հասնել հոգեթերապևտիկ խորքային աշխատանքի ընթացքում:

Ցեղասպանությունն, անշուշտ, ունեցել է խիստ հոգեցունց ազդեցություն ամբողջ ազգի վրա, որի կործանիչ հետևանքներն արտացոլվում են հետագա սերունդներում: Հստակ գիտակցելով, որ անհատի և ազգի մակարդակներում նմանատիպ փորձի ազդեցության մեխանիզմներն էականորեն տարբերվում են, այնուամենայնիվ, հնարավոր է որոշակի վերապահումով անցկացնել հստակ զուգահեռներ: Ցեղասպանությունը վերապրած ժողովրդի սերունդները զանգվածայնորեն կրում են դրական խորքային համոզմունքների կազմալուծման և դեստրուկտիվ կոգնիտիվ սխեմաների ձևավորման արդյունքները, ինչը հնարավոր է նկատել մեզանում առկա ինքնակործանիչ մտածական և վարքային ձևանմուշներում և վիկտիմիզացիայի հստակ դրսևորումներում: Օրինակները, ցավոք, բազմաթիվ են: Բարեբախտաբար, մարդու ինքնապաքինման գործընթացները նույնպես անկասելի են, սակայն դրանք խթանման կարիք ունեն, ինչն անհատի մակարդակում դժվար խնդիր լինելով հանդերձ՝ անգամներ ավելի բարդ է աշխարհասփյուռ ազգի մակարդակում: Այս գործընթացն ենթադրում է նպատակային, երկարատև և բազմակողմանի վերականգնողական ծրագրերի իրականացում ինչպես անհատների, այնպես էլ ազգի լայն շերտերի շրջանակում՝ ինքնակործանիչ «ազգային» կոգնիտիվ սխեմաների վերակառուցման նպատակով:

1. Beck, A.T. (1975). Cognitive therapy and the emotional disorders. Madison, CT: International Universities Press,
2. Beck, J. S. (1995). Cognitive therapy: Basics and beyond. New York: Guilford.
3. Janoff-Bulman, R. (1998). Rebuilding shattered assumptions after traumatic life events: coping processes and outcomes. In: C.R.Snyder (Ed.) Coping: The psychology of what works. N.Y. Oxford University Press.
4. Падун М., Тарабрина Н. Психическая травма и базисные когнитивные схемы личности. Московский психотерапевтический журнал, 2003, № 1, 121-140
5. Пиаже Ж. Избранные психологические труды. М., 1969.

Դավիդ Գեվորգյան

*Факультет философии и психологии ЕГУ
Ассистент кафедры социальной психологии*

РОЛЬ ПСИХОТРАВМЫ В ФОРМИРОВАНИИ НЕГАТИВНЫХ КОГНИТИВНЫХ СХЕМ

Ключевые слова: *когнитивная схема, глубинные убеждения, травматический опыт.*

В статье рассматривается понятие когнитивных схем и лежащих в их основе глубинных убеждений, которые формируют определенную иерархию и отражают способ реагирования индивида на внешние стимулы. Подробно анализируется механизм воздействия травматического опыта на положительные базисные когнитивные схемы, которые резко трансформируются в свою противоположность и уже по принципу когнитивного сдвига определяют дальнейшее негативное структурирование опыта. Психотерапия травматического опыта подразумевает постепенное восстановление позитивных когнитивных схем посредством реконструкции и расширения глубинных травматических убеждений.

Davit Gevorgyan

*Faculty of Philosophy and Psychology, YSU
Assistant of the Department of Social Psychology*

THE ROLE OF PSYCHOTRAUMA IN THE FORMATION OF NEGATIVE COGNITIVE SCHEMES

Keywords: *cognitive schema, core beliefs, traumatic experience.*

The article discusses the concept of cognitive schemes and underlying core beliefs that form a hierarchy and reflect the individual's way of responding to external stimuli. The detailed analysis of the mechanism of influence of traumatic experience on the positive basic cognitive schemes is given. As a result these schemes dramatically transform into their opposite, and now on the principle of cognitive shift determine negative structuring of further experience. Psychotherapy of traumatic experience involves the gradual recovery of positive cognitive schemes through reconstruction and expansion of the core traumatic beliefs.

ՀԵՏՏՐԱՎՄԱՏԻԿ ՍԹՐԵՍԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄՈՏ

Հանգուցային բառեր՝ *ցեղասպանություն, հետտրավմատիկ խանգարում, պարբերական հիվանդություն, «flashback», հոգեթերապիա:*

Ցեղասպանությունը՝ որպես երևույթ, գիտության տարբեր ոլորտներում լիովին ուսումնասիրված չէ, և տրված չէ նրա ամբողջական գնահատականը՝ պատմական, քաղաքական, իրավական, բարոյական, հոգեբանական, հոգեախտաբանական տեսանկյուններից:

Այսօր բավականին մեծ դժվարություն է ներկայացնում Մեծ Եղեռնի զոհերի սերունդների հոգեբանական և հոգեախտաբանական վերլուծությունը ցեղասպանությունից 100 տարի անց, քանի որ գիտական տեսակետից իր ժամանակին չեն հետազոտվել և չկան բավարար փաստեր թե՛ հոգեբանության և թե՛ բժշկագիտության մեջ: Ակնհայտ է, որ ցանկացած հոգեկան տրավմա թողնում է իր հետքը հոգեկան առողջության և տարբեր հիվանդությունների առաջացման կամ սրացման վրա, հետևապես կարևոր է բացահայտել ցեղասպանությունը վերապրած զոհերի հետտրավմատիկ սթրեսային խանգարումները և դրանց հեռավոր հետևանքները՝ արտացոլված տարբեր հիվանդություններում: Թերևս այսօր նման հարցերի ուսումնասիրման համար դժվարությունը մեթոդոլոգիայի ճիշտ ընտրության մեջ է: Վերը նշված խնդրի հետազոտման համար որպես մեթոդ ընտրված է փիլիսոփայական հետմենտիկան [4], որը հնարավորություն է տալիս, պատմական մոտեցում ցուցաբերելով հետազոտվող հիմնախնդրին՝ անալոգիայի, ինդուկցիայի, դեդուկցիայի և ամբողջական սիստեմային մոտեցման միջոցով, հասկանալ ներկայի և անցյալի փոխկապակցվածությունն ու փոխհարաբերությունները:

Հետազոտման համար որպես չափորոշիչ վերցրված են հետտրավմատիկ սթրեսային խանգարմանը վերաբերող ժամանակակից գիտական հետազոտությունները [6] և այն հիվանդությունները, որոնք իրենց մեջ կրում են ազգային և տարածաշրջանային բնույթ [2,3,21], մասնավորապես միջերկրածովյան ընտանեկան տենդը կամ պարբերական հիվանդությունը, ժողովրդի մեջ հայտնի որպես երևանյան հիվանդություն: Իսկ ուսումնասիրության հիմնական առանցքն է, գրականության մեջ նկարագրված ցեղասպանությունը վերապրածի հոգեախտաբանությունը [11]:

Այսպիսով, ի՞նչ նշաններով է արտահայտվել հոգեկան տրավման ցեղասպանությունը վերապրածի մոտ, և ինչպե՞ս են այսօր արտացոլվում հետտրավմատիկ

սթրեսային խանգարման հեռակա հետևանքները ջարդերը վերապրածների սերունդների մոտ, 100 տարի անց:

Գրականության մեջ ռուս հեղինակների կողմից 1929 թ.-ին նկարագրվել է [11] Կոստանդնուպոլսից գաղթած 29 տարեկան հայ հիվանդի հոգեախտաբանությունը և ուղեկցվող հիվանդությունները (ծանր դեպրեսիա, 12 տարի տևողությամբ ոչ շաքարային դիաբետ), որոնք նրանք կապում էին հայկական ջարդերի հետ, երբ 14 տարեկան երեխայի աչքի առաջ գլխատել են ծնողներին և երկու եղբորը: Անամնեզում առկա են բազմաթիվ հոգեկան տրավմաներ: Նա գաղթել է Հունաստան, որտեղ երկար տարիներ բազմաթիվ զրկանքներ է կրել: Այդ տարիներից սկսած սառը ջրի մեծ պահանջ է զգում, երբեմն դա նույնիսկ հիվանդագին պահանջմունքի է վերածվում: Իր իսկ խոսքերով՝ օրական նա խմում էր 1.5-2 դույլ ջուր: Կարգավիճակի հակիրճ նկարագիր՝ քաշը 32.7 կգ, հասակը 156 սմ: Սովի զգացումն ավելի հեշտ է տանում, քան ջրի պակասը: Ներքին օրգանները նորմալ վիճակում են, միզապարկը գերլցված է: Հոգեպես ընկճված վիճակում է, քունն անհանգիստ, ուղեկցվող գիշերային սարսափներով, ջլային ռեֆլեքսները թուլացած են: Մեզի անալիզ՝ տեսակարար կշիռը 1000, ընդհանուր առմամբ շեղումներ չկան: Տեսողությունը՝ աչքի հատակը խախտված չէ: Օրական խմում է 14.2-14.5 լ ջուր, արտադրվում է 15,2-16,4 լ մեզ: Դեղորայքային բուժումը արդյունք չի տվել (գիպոֆիզին չի օգտագործվել):

Ելնելով այն հանգամանքից, որ հիվանդի մոտ առկա է եղել հոգեկան տրավմա, որի հետևանքով էլ առաջ է եկել վերը նկարագրված ախտաբանությունը, իրականացվել է հոգեթերապիա՝ անուղղակի ներշնչանք արթուն վիճակում: Հիվանդին նշանակվել է թուրմ (200 մլ սամիթի թուրմ մեկ ճաշի գդալի չափով օրը 3 անգամ) և ասվել է, որ դա չափազանց օգտակար դեղամիջոց է: Նշվել է նաև, որ առողջացման համար անհրաժեշտ է ընդունել յուրահատուկ մի դեղորայք, որը նա երբևիցե չի ստացել, և որը լիովին կապաքինի իր հիվանդությունը: Բուժման առաջին իսկ օրից սկսած հիվանդին ասվել է, որ յուրաքանչյուր գդալի հետ իր ծարավն ավելի ու ավելի կպակասի, և նա կխմի այնքան ջուր, որքան նրան նշանակվել է:

Այսպիսի ներշնչումը իրականացվել է 10 օրվա ընթացքում: Ստորև ներկայացված գրառման մեջ ակնհայտ երևում է անուղղակի ներշնչանքի դրական ազդեցությունը: Եթե նախկինում հիվանդը խմում էր 14,2 լ ջուր և արտադրվում էր 16,2 լ մեզ, ապա կատարված ներշնչանքներից և սամիթի թուրմի օգտագործումից հետո միզարձակման պատկերը փոխվել է: Ծարավի զգացողության թուլացման հետ մեկտեղ հիվանդը դարձել է ավելի կենսունակ, վերականգնվել է նրա ախորժակը: Օրեցօր հիվանդի ինքնազգացողությունը լավացել է, և երեք շաբաթ իրականացված հոգեթերապիայից հետո հիվանդը դուրս է գրվել: Այդ ընթացքում հիվանդի կողմից օգտագործված հեղուկի քանակը չի գերազանցել իրեն նշանակված նորման՝ 3,2 լ: Մեռական ակտիվությունը ևս կարգավորվել է: Աստիճանաբար վերադարձել է իր նախկին մասնագիտական աշխատանքին: Քաշը ավելացել է 9 կգ-ով: Եթե նախկինում դժվարանում էր աշխատել, ապա այժմ արհեստավորի իր վարպետությունը կրկին վերականգնվել է:

Այսպիսով տեսնում ենք, թե ինչպես են հոգեթերապիայի միջոցով կարգավորվել ցեղասպանությունը վերապրած հիվանդի մանկության տարիներին ձեռք բերած հետտրավմատիկ սթրեսային խանգարումները՝ արտահայտված դեպրեսիայի և ոչ

շաքարային դիաբետի տեսքով: Հավանաբար, մանկական հասակում ցեղասպանությունը վերապրած երեխաների մոտ ընտանիքի մոդելի, հայրենիքի կորուստը, ինչպես նաև չվերապրած վիշտը կարող էր արտամղման մեխանիզմի՝ սոմատիկ-զացիայի միջոցով արտահայտվել ոչ շաքարային դիաբետի ձևով [12]:

Ինքնին հարց է առաջանում. ի՞նչ հոգեմարմնական հետևանքներ են թողել ցեղասպանությունը վերապրած հազարավոր որբերի մոտ չբուժված հետտրավմատիկ սթրեսային խանգարումները, և ինչպես են դրանք հետագայում դրսևորվել նրանց սերունդների մոտ, որոնց մի մասը մնացել է Թուրքիայի տարածքում, մյուսը՝ գաղթել Հայաստան և աշխարհի տարբեր երկրներ: Հայտնի է, որ ցեղասպանությունից տասնյակ տարիներ անց հայ գաղթականների մոտ ի հայտ էր գալիս անհայտ մի հիվանդություն, որը հաճախ անվանում էին նաև հանելուկային: Այն ուղեկցվում էր պարբերաբար առաջացող ուժեղ ցավերով, որոնց չէր օգնում ոչ մի դեղորայք և ոչ մի վիրաբուժական միջամտություն. այն ինքնուրույն անցնում էր՝ իրենից հետո չթողնելով ոչ մի ախտաբանական խանգարում [21, 22]: Համարյա բոլոր հիվանդների, և հատկապես տղամարդկանց մոտ, նույնի ժամանակ նկատվում էր քաշի կորուստ [2, 5, 10, 11, 18, 21], բացի այդ հիվանդների մեծ մասը տառապում էր ոչ շաքարային դիաբետով: Անհայտ ծագում ունեցող և մասնավորապես էթնիկական բնույթ կրող այս հիվանդությունը ստացավ միջերկրածովյան ընտանեկան տենդ անվանումը: Օտարագրի հեղինակները նկարագրում են Լիբանանի Անճառ գյուղում գաղթական մի հայկական ընտանիք, կազմված 52 անդամներից, որից 4-5 սերունդներում 22-ը տառապում էին պարբերական հիվանդությամբ [14, 23]:

Պարբերական հիվանդության (ՊՀ) մանիֆեստացիան արտահայտվում է հիմնականում մանկական և պատանեկան տարիքում: Ինտերնիստները, մանրակրկիտ նկարագրելով հիվանդի հոգեախտաբանությունը՝ դեպրեսիա, տագնապ, վախ, վարքագծային խանգարումներ և այլն, որին նախորդում են ցավային նոպաները, անտեսել են դրա կարևորությունը հիվանդության առաջացման գործընթացում՝ շեշտը դնելով սոմատիկայի՝ ցավերի և ասեպտիկ բորբոքման վրա: 1938 թ.-ին Լ. Ա. Հովհաննիսյանը, աշխարհում առաջինը նկարագրելով ՊՀ-ն, իր «Հոգեկանի և մարմնականի փոխհարաբերությունները ներքին հիվանդությունների կլինիկայում» աշխատության մեջ ՊՀ-ի պաթոգենեզի և բուժման վերաբերյալ ցուցաբերեց ամբողջական և միջառարկայական մոտեցում, որն էլ հետագայում հիմք հանդիսացավ ՊՀ-ի հոգեմարմնական էության բացահայտմանը: Ինտերնիստը չպետք է հեռացնի տեսադաշտից նյարդահոգեկան խանգարումները, որոնք լինում են սոմատիկ հիվանդությունների ժամանակ, քանի որ նրանք շատ հաճախ մարմնական խանգարումների պատճառ են դառնում: Հոգու և մարմնի կատեգորիաները անջատ չեն, և նրանց չի կարելի բաժանել. նրանք այնքան խորը փոխհարաբերության մեջ են, որ հոգեկան բոլոր վիճակներն անդրադառնում են օրգանիզմի մորֆոֆունկցիոնալ պրոցեսներին վրա [10]:

Հետագայում Ա.Ա.Այվազյանը 1982 թ.-ին, նշելով նյարդահոգեկան խանգարումների կարևորությունը, որոնք նկարագրված են այս հիվանդության ժամանակ, հանգում է այն եզրակացության, որ այս հիվանդության վաղ ախտորոշումը, պաթոգենեզը և բուժումը պետք է փնտրել հոգեկան աշխարհում [2]: 1993 թ. Է. Ե. Նազարեթյանն առաջ է քաշում այն վարկածը, որ ՊՀ-ն պատկանում է աղապտացիոն հիվանդությունների շարքին (փսիխոսոմատիկ հիվանդություն) [3]:

Մեր հետազոտությունները [7] հաստատեցին հեղինակների՝ ՊՀ-ի փսիխոսոմատիկ խանգարումների վերաբերյալ վերը նկարագրած մոտեցումները: ՊՀ-ն իր սկզբնական շրջանում ընթանում է հոգեկան սոմատիզացիայի երևույթներով [9], և նախքան ասեպտիկ բորբոքման ի հայտ գալը, այն հիվանդների մոտ ընթանում է անձի պրոֆիլի փոփոխություններով: Հետագայում այդ փոփոխությունները բերում են սոմատոֆորմ խանգարումների [8], որոնց էլ հաջորդում են հոգեմարմնական խանգարումները՝ պայմանավորված պրեմորբիդում անձի ալեքսիթիմիայով [15]: Սոմատոֆորմ փոփոխությունների շրջանի վաղ ախտորոշումը, հիմնված ժամանակակից գենետիկ հետազոտությունների վրա, շատ կարևոր է ՊՀ-ի հետագա ընթացքի և ասեպտիկ բորբոքման կանխարգելման համար: Այս շրջանի վաղ ախտորոշումն ու բուժումը՝ հոգեթերապիայի [1, 10] և հոգեմետ դեղորայքի օգտագործման միջոցով, հնարավորություն է տալիս կանխարգելել ՊՀ-ի հետագա կլինիկական ձևերի զարգացումը և ասեպտիկ բորբոքման առաջացումը: Պետք է նշել, որ նույնիսկ հիվանդության հետագա շրջանում, վերը նշած բուժական մեթոդները կանխարգելում են ՊՀ-ի նուպաները:

Ցեղասպանությունը վերապրածների հետտրավմատիկ սթրեսային խանգարումները ակնհայտ երևում են պարբերական հիվանդությամբ տառապող հիվանդների նախանուպային շրջանում:

Հիվանդ, 27 տարեկան, 4 տարեկանից տառապում է պարբերական հիվանդությամբ: Նախնիները ցեղասպանության ժամանակ զաղթել են Մուշից: Նուպաները հաճախացել են 16 տարեկանում. ամիսը մեկից երկու անգամ, կապված տատիկի, իսկ այնուհետև նաև հոր մահվան հետ: Հիվանդը նշում է, որ նուպաները ավելի հաճախանում և փոխում են իրենց բնույթը զարնանը, ապրիլ ամսին և հատկապես ապրիլի 22-ին և 23-ին: Հետաքրքրական է, որ հիվանդը չի կարողանում դիտել ֆիլմեր, կապված հայկական ջարդերի կամ առհասարակ բռնության տեսարանների հետ, քանի որ իրեն պատկերացնում է զոհի դերում, և շատ անգամ դա կարող է նուպայի առաջացման պատճառ դառնալ:

«Նուպաներից երեք օր առաջ ինձ մոտ առաջանում էր շատակերություն, սկսում էի անկանոն սնվել: Ինձ թվում էր, թե աշխարհի վերջն է, և այլևս մեր տանը հաց չի լինելու, սկսում էի ագահորեն ուտել: Ունենում էի գիշերային սարսափներ, տրամադրության անկում, առանձնանում էի բոլորից, առաջանում էր ատելություն, կատաղություն բոլորի, նույնիսկ հարազատներիս նկատմամբ: Նուպաներից առաջ ունենում էի ուժեղ արտահայտված ծարավի զգացում. մոտ 8-10լ ջուր պետք է լիներ, անպայման սառը վիճակում, որպեսզի ներսս հագեցնեի: Նուպաների ընթացքում քաշս 3-4 կգ-ով պակասում էր, ուժեղ հոդացավեր ունեի, կարծես հարյուր հազարավոր կիլոմետրեր էի քայլել: Երբ աչքերս փակում էի, աչքիս առաջ երևում էին սարսափելի տեսարաններ. կարծես ինձ հետապնդում էին, փորձում էին վնասել, ու ես, ահաբեկված, վախ էի վերապրում: Եվ որպեսզի պաշտպանվեմ այս ամենից, աշխատում էի ավելի արագ վերածել ապրումները որովայնային ցավերի, որովհետև հոգու ցավը տանելը ավելի դժվար է, քան մարմնի ցավերը, և այդպիսով ես ավելի «հանգստանում էի»: Նուպայի վերջում զգում էի ինձ թուլացած, ծեծված-ջարդված վիճակում», - նշում է հիվանդը:

Հիվանդը բուժվել է հոգեթերապիայով [1, 9], մասնավորապես նարեկաբուժությամբ, որից հետո երկու ամիսների ընթացքում վերացել են նուպաները և վերը

նկարագրված գանգատները: Հոգեթերապիայի դրական արդյունքը ևս մեկ անգամ ապացուցում է, որ ՊՀ-ն իր պաթոգենեզում ունի հետտրավմատիկ սթրեսային խանգարման երևույթներ:

Վերը նկարագրածից ակնհայտ երևում է, որ ՊՀ-ի նախանոպային շրջանում նկատվում են ոչ շաքարային դիաբետի նշաններ, որը մենք տեսնում ենք նաև Ցեղասպանությունը վերապրած երեխայի մոտ: Ցեղասպանությունը վերապրածների սերունդների մոտ հետտրավմատիկ սթրեսային խանգարման երևույթների հեռակա հետևանքները flashback-ի ձևով [16, 18, 19] երևում են պարբերական հիվանդության նոպայի նախանշանների մեջ, իսկ միջնոպայական շրջանում հոգեբանական պաշտպանական մեխանիզմներով քողարկված են արտամղման ձևով: Նոպան ի հայտ է գալիս հատկապես այն սթրեսոգեն իրավիճակներում, երբ դրանք սիմվոլիկ ձևով հիշեցնում են Ցեղասպանությունը վերապրածի հոգեկան տրավման՝ կապված անձին և ընտանիքին ուղղված հոգեկան և մարմնական բռնությունների հետ: Պարբերաբար կրկնվող նոպաները նույնպես հաստատում են հետտրավմատիկ սթրեսային խանգարմանը բնորոշ պարբերականությունը: Նոպայի նախանշաններից սկսած հոգեախտաբանական երևույթների անցումը մարմնականին և հակառակը պայմանավորված է դետումատիզացիայի և ռետումատիզացիայի երևույթներով [12]:

ՊՀ-ի հետտրավմատիկ սթրեսային խանգարման բնույթը երեխաների մոտ երևում է գիշերային սարսափների առկայությամբ, որն իր մեջ ներառում է հոգեկան և ֆիզիկական տրավմա [17]: Դիսոցացիաների հետ կապված՝ հիվանդների մոտ առկա է դեպերսոնալիզացիա, ցրվածություն, անձի երկակիություն և հոգական տրավմային բնորոշ մի քանի անձերի առկայությունը, որը մենք տեսնում ենք 12 տարեկան ՊՀ-ով տառապող երեխայի նկարներում:



Դիսոցացիա՝ բազմակի անձերի առկայությամբ

Ինտերնիստների կողմից նկարագրված վեգետատիվ, նեյրոէնդոկրին խանգարումները, որոնք կրում են սթրեսոգեն բնույթ [2], հանդիպում են նաև հետտրավմատիկ սթրեսային խանգարման ժամանակ [6]:

ՊՀ-ն միջերկրյածովյան ավազանում նախկինում և հիմա ապրող այն հին ազգերի սերունդների հիվանդությունն է, որոնք ունեցել են պետականության լրիվ կամ մասնակի կորուստ, ենթարկվել են բռնությունների, ցեղասպանության՝ ազգի, ցեղի, ընտանիքի մակարդակով [16, 19, 20], տեղահանվել են իրենց հայրենիքից՝ ապրելով օտար երկրներում:

Միջերկրյաժոկյան ընտանեկան տենդն անցյալում կրած տառապանքների (հոգեկան, մարմնական) ներկա հիշողությունն է (flashback), որը նմանատիպ սիմվոլ ազդակով վեր է հանում անցյալում ստացած «վնասվածք»։ Նուպայից առաջ այդ հիշողություններն արտահայտվում են նյարդահոգեկան խանգարումների տեսքով (տագնապ, դեպրեսիա, գրգռվածություն, ագրեսիա, աուտոագրեսիա, դիսֆորիա, սուիցիդալ մտքեր, վախ, անհանգստություն, տրամադրության անկում, վշտի, կորստի զգացում, մեղավորության զգացում, մոտեցող անհասկանալի վտանգի զգացում) [18]։ Վերը թվարկված նշանները ուղեկցվում են վեգետատիվ (սիմպատիկ կամ խառը բնույթի) խանգարումներով [5]։ Նուպայի ժամանակ անձի գիտակցական և ենթագիտակցական աշխարհում տեղի է ունենում դիսոցացիա՝ կապված տրավմայի կոնֆլիկտի հետ, որից հետո այդ հոգեբանական լարվածության լիցքաթափումը արտահայտվում է սոմատոֆորմ խանգարումների տեսքով՝ հոգեկանից անցնելով մարմնականի [13]։ Հոգեկանում արտացոլվող հոգեախտաբանական խանգարումները (վախ, տագնապ, ագրեսիա) արտահայտվում են մարմնում՝ ցավերի և վերը նշված վեգետատիվ խանգարումների տեսքով։ Նուպայի արտահայտման կլինիկան ձևը (կրծքային, հոդային, որովայնային) կապված է անցյալից եկող գենետիկ հիշողության մեջ թաքնված տրավմայի տեսակի հետ։ ՊՀ-ով հիվանդ երեխաների և նրանց հարազատների գենետիկ հիշողության մեջ թաքնված տրավման արտահայտվում է գիշերային սարսափների ձևով [17]։ Նեզատիվ էմոցիաների մարմնականացումը (սոմատիզացիա) կապված է հոգեբանական պաշտպանական մեխանիզմների թուլացման հետ [12]։ Մարմնական պաշտպանական մեխանիզմները (բորբոքում, ջերմություն, արյան մակարդեղիության խանգարումներ, իմունիտետի փոփոխություններ և այլն) գործում են նաև ի պատասխան սոմատիզացված հոգեկան տրավմայի։ Նմանատիպ երևույթները դիտվում են ՊՀ հիվանդների մոտ նուպայի ժամանակ։

Այսպիսով, Ցեղասպանությունը, դարերի ընթացքում կրած տառապանքները, խոշտանգումները և երկարատև սթրեսային իրավիճակները՝ որպես «վնասվածք» (տրավմա) իրենց հետքն են թողել անհատի, ընտանիքի, ազգի գենետիկ հիշողության մեջ, որոնք էլ սերնդեսերունդ փոխանցվում և ի հայտ են գալիս «flashback» ֆենոմենով՝ սթրեսային իրավիճակներում (երբ ներկայում անձին ուղղված հոգեմարմնական վտանգը սիմվոլիկ կերպով իրեն է հիշեցնում անցյալում կրած սթրեսները)։ Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների թուլացման հետևանքով գենետիկ հիշողության ամբողջ հոգեախտաբանությունն արտացոլվում է մարմնականում (հոգեկան սոմատիզացիա)՝ որպես «վնասվածք»։ Հոգեթերապիայի տարբեր մեթոդներով և հոգեմետ դեղորայքով հնարավոր է կարգավորել գենետիկ հիշողության մեջ ցեղասպանության թողած տրավման, որը սերունդների մոտ այսօր արտահայտվում է պարբերական հիվանդության ձևով։

Գրականություն

1. Ներսիսյան Ա.Հ., Պարբերական հիվանդությամբ տառապող երեխաների բուժումը հոգեթերապիայի միջոցով, Հոգեբույժների միջազգային գիտաժողով, Երևան, 2004:
2. Айвазян А.А. Периодическая болезнь. Ереван: Айастан, 1982.
3. Арутюнян В.М., Назаретян Э.Е., Еганян Г.А., Акопян Г.С. Периодическая болезнь как болезнь адаптации. В.сб.: Актуальные вопросы клинической медицины, Ереван, 1995; 55-59.
4. Гадамер Х.Г. Истина и Метод, Москва, 1988; 380-385.
5. Геворкян Э.М., Геворкян А.П., Периодическая Болезнь: Психоневрологические аспекты, Ереван, 2003.
6. Джеймс Л.Джекобсон, Алан М.Джекобсон, «Секреты психиатрии», 2005, Москва, стр.121-126
7. Нерсисян А.А. Психосоматические расстройства при периодической болезни. Дис. канд. мед. наук., Ереван, 2008.
8. Нерсисян А.А. Средиземноморская семейная лихорадка и соматоформные нарушения. Вопросы теоретической и клинической медицины, научно-практический журнал, том 8, № 4 (38), Армения. 2005; 53-55.
9. Нерсисян А.А., Даниелян К.Г. Периодическая болезнь с явлениями психической соматизации. Независимый психиатрический журнал I, Москва, 2007.
10. Оганесян Л.А. О взаимоотношениях между психической и соматической сферами в клинике внутренних болезней, Ереван, 1961; 266-268.
11. Платонов К.И. Слово, как физиологический лечебный фактор. Медгиз, 1962, стр.167-168
12. Сандомирский М. Психосоматика и телесная психотерапия, Москва, 2005; 82.
13. Lipowski Z.J., Somatization: The Concept and its Clinical Application//Am.J.Psychiatry, 1988; 145 (11): 1358-1368.
14. Mamou H., Maret R. Etude Anatomo-Cliniquew d'une Epanalepsie Meconnua chez un Arménien. Sem.Hop.Paris, 1956, 32, 3197.
15. Nersisyan A. "Alexithymia with patients suffering from Familial Mediterranean fever." 2005 march 12-13, World Psychiatric Association Regional Intersectional Congress. Abstracts Issue, p.38.
16. Nersisyan A. Posttraumatic Stress Disorders 90 years after the Armenian Genocide qualitative study, International Psychological Trauma Symposium IV, Istanbul, Turkey, 2005; 143-144
17. Nersisyan A. Psychic disorders in children suffering from familial Mediterranean fever, 18th Panhellenic Congress of Psychiatry. Abstract Issue. Kos, Greece, 2004, 186.
18. Nersisyan A., Danielyan K. Familial Mediterranean Fever and Affective Disorders in Armenians, International Conference on Mood disorders, Istanbul, 2006.
19. Nersisyan A., Danielyan K. Periodic Disease as a consequence of Posttraumatic Stress Disorders as a historical Long-Term Stress and Rising After the Armenian Genocide, 3-rd young medics international conference, Yerevan, 2005; 134.
20. Nersisyan A., Danielyan K., Nazaretyan E. Familial Mediterranean Fever and Armenian Genocide: Qualitative Study and Literature Review, Armenian Journal of Mental Health, 2010; 2(3).
21. Reiman H. Periodic diseases, Philadelphia, 1963.
22. Siegal S. Familial paroxysmal poliseritis, Amer. J.Med. 1964; 36: 893.
23. Siguier F. La maladie dite periodique in maladiées-Vedetts. Maladies d'Avenir, Maladies quotidiennes, Maladies d'Exception, Masson et Cie, Paris, 1957.

ПОСТТРАВМАТИЧЕСКИЕ СТРЕССОВЫЕ РАССТРОЙСТВА У ЛЮДЕЙ ПЕРЕЖИВШИХ ГЕНОЦИД И У ИХ ПОТОМКОВ

Ключевые слова: геноцид, посттравматические, рецидива заболевания, «flashback», психотерапия.

Геноцид - это сильнейшая психологическая травма, которая имела серьезные последствия для психического и физического здоровья людей, которым удалось выжить. Сегодня эта травма проявляется в виде посттравматических стрессовых расстройств у их потомков. Наша генетическая память несет всю стрессовую информацию этой трагедии. Но где и каким образом проявляются последствия неизлеченных посттравматических расстройств у тысячи детей того поколения? Вся скорбь, боль, чувство утраты, тревоги и депрессии в связи с потерей родины и близких передалась из поколения в поколения. И в виде так называемого Flash Back феномена, мы сегодня видим эту информацию отраженную в генетической болезни называемой Семейная средиземноморская лихорадка (периодическая болезнь). Только совокупное изучение физических и психических расстройств, которые проявляются при периодической болезни, дает возможность для развития нового подхода к ее лечению.

Armen Nersisyan
National Center for AIDS Prevention, psychotherapist

POST-TRAUMATIC STRESS DISORDERS IN THE ARMENIAN GENOCIDE SURVIVORS AND THEIR GENERATION

Keywords: genocide, post-traumatic disorder, recurrent disease, «flashback», psychotherapy.

Genocide is a huge trauma that had serious consequences on the mental and physical health of people who overlived it and manifest as particular post-traumatic stress disorders at its generation. We carry this enormous stressful information in our genetic memory. So where and how are the further consequences of uncured post-traumatic stress disorders reflected on thousands of children of this generation? After the genocide the sorrow, sense of loss, anxiety and depression for losing the motherland and relatives are transferred to the generation. Today we see it as a Flash Back phenomenon particularly in the genetic disease called Familial Mediterranean Fever or Periodic disease. The discovery of corporal and mental disorders, forming the essence of the Periodic Disease, is a very important step towards developing a new approach to the disease and its treatment.

Միլվա Պետրոսյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
փիլիսոփայության պատմության ամբիոնի դոցենտ
davnansilan@gmail.com

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ.
ՈՐՈՇ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

Հանգուցային բառեր՝ հայոց ազգային ինքնություն, ինքնության շերտեր, ցեղասպանություն, ինքնության տրավմա, հայոց դյուցազներգություն:

Միսալ պիտի գործեինք անշուշտ, եթե շարունակ աչքի առջև չունենայինք այս կորուստին մեծությունը՝ այժմեան թոպեին հանդեպ վերապրողներուն պարտականությանը չափն ու եղանակը ըստ այնմ գծելու համար: Ավելի մեծ սխալ մը գործած պիտի ըլլայինք սակայն, եթե այդ կորուստին մեծութենէն ընկճվելով՝ դեպքերուն մեր ժողովրդին համար ստեղծած նոր կացության դրական և հուսադրիչ կողմերն ալ չտեսնեինք...

Արշակ Չոպանյան

Հայոց չարաղետ եղեռնը ծրագրվեց և իրականացվեց հենց նպատակ ունենալով սասանել (եթե հաջողվեր՝ իսպառ բնաջնջել) հայոց մշակութային ինքնութենական տիպը: Սակայն, ինչպես պատմական յուրաքանչյուր իրողություն, այնպես էլ ցեղասպանությունը ոչ միանշանակ ազդեցություն ունեցավ հայերի վրա: Մի կողմից այն առաջացրեց անելանելիության, դատապարտվածության և վախճանաբանական զգացումներ, մյուս կողմից, այդուհանդերձ, այն դարձավ նոր ստեղծագործականության, չարիքին բարով ու արարումով պատասխանելու նոր մղման շարժառիթ:

Ինքնության գիտակցման և արժևորման մակարդակում այն նույնպես հակասական, բևեռայնորեն հակադիր մոտեցումներ առաջ բերեց: Հայ ժողովրդի որոշ զավակներ, հարվածի ուժգնությունից ցնցված. փորձեցին փախուստ կատարել՝ մոռացման մատնել իրենց հայկական ինքնությունը: Սակայն դա նրանց ամբողջովին չհաջողվեց, քանի որ ինքնության մեջ, ինչպես նշում է նախորդ դարի ամենամեծ հոգեբաններից մեկը՝ Կարլ Գուստավ Յունգը, առկա է սկզբունքորեն անճանաչելի մի շերտ, և մարդը, որքան էլ ձգտի, չի կարող իր ինքնությունը ճանաչել և, հետևապես, մերժել մինչև վերջ: Յունգը գրում է. «Որպես էմպիրիկ հասկացություն ինքնությունը նշանակում է մարդու հոգեկան երևույթների ամբողջական սպեկտր: Այնքանով, որքանով հոգեկան ամբողջականությունը, որը բաղկացած է գիտակցական և անգիտակցական բովանդակություններից, պոստուլյատիվ է, այն իրենից

ներկայացնում է տրանսգենդենտալ հասկացություն, քանի որ ենթադրում է էմպիրիկ հիմք ունեցող անգիտակցական գործոնների գոյություն և, այսպիսով, բնութագրում է որոշակի կեցություն, որը կարող է նկարագրվել միայն մասնակիորեն, քանի որ մյուս մասը մնում է (ցանկացած տվյալ պահի) չճանաչված ու անսահման» [1, c. 505]: Մա ցույց է տալիս, որ ինքնությունն ինչ-որ իմաստով ինքնին իր է, սկզբունքորեն ամբողջապես անճանաչելի, սակայն դրանում կան տարրեր, որոնց մասին կարելի է որոշակիորեն դատել: Ինքնությունն ունի նվազագույնը երկու շերտ՝ ինքնին իր ինքնությունը և գիտակցված ինքնանույնությունը, որոնք ոչ միշտ են ներդաշնակ ու համահունչ միմյանց [2, էջ 3-15]: Ցեղասպանության պես մեծ ցնցումներն այդ շերտերի միջև հակասություններ են առաջ բերում և ծնում անձնավորության և ինքնության մետամորֆոզներ, որոնցից երկուսը ստորև կքննարկենք:

Դեպք թիվ 1. Անգլիալեզու արձակագիր Մայքլ Առլենը, որի անունը մինչև 24 տարեկանը Տիգրան Գույումջյան էր: Տարագրվելով Մեծ Բրիտանիա, նա փոխում է անունը, իր ճանապարհը գրական աշխարհում հեշտացելու նպատակով: Բայց այդ փոփոխությունը միայն արտաքին չէր, դա միայն գրական կեղծանուն չէր: Դա հայկական ինքնությունից հրաժարվելու փորձ էր: Մակայն այն լիովին չի հաջողվում, քանի որ ինչպես վերը նշվեց՝ ինքնությունն ունի երկու շերտ. պատմական տրանսգենդենտալ և գիտակցված անհատականը: Հրաժարվելով գիտակցված անհատականից, հնարավոր չի եղել ջնջել պատմական տրանսգենդենտալը: Տիգրան Գույումջյանը տանն էլ էր խոսում անգլերեն, խուսափում էր իր հայկական ծագումը հիշելուց: Նրա որդին՝ Մայքլ Առլեն կրտսերը, գրում է, որ մի անգամ հորեղբայրը հորն իր ներկայությամբ հարցրել է, թե վերջինս տղային ինչու հայերեն չի սովորեցրել: Իսկ տղան համոզված էր, որ ինքն անգլիացի է, չէ՞ որ անգլերեն է խոսում: Մայքլ Առլեն կրտսերի «Դեպի Արարատ» գիրքը հայոց ինքնության վերագտնման պատմություն է, որտեղ նկարագրվում է ցեղասպանության հետևանքով տեղի ունեցած մի դաժան հոգեբանական էքսպերիմենտ. իրեն անգլոամերիկացի կարծող հասուն մարդը սկսում է բացահայտել իր կոլեկտիվ անգիտակցականն, իրեն ձգող, ու սկզբնական շրջանում նաև երբեմն վանող հայկականությունը [3, էջ 7-15]: Իսկ ի՞նչն էր վանում: Տարտամ զգացողությունն առ այն, որ այդ մարդկանց տանջել են, որ նրանք անմեղ մեղավոր են և որ տխուր են ու ռեսենթիմենթ կրող: Մայքլ Առլեն կրտսերը հայերի հետ իր առաջին շփումներից հետո մտածում է մի՞թե սրանց մեջ չկան բարգավաճող, հզոր մարդիկ, մի՞թե հայերը թախժոտ են ու տագնապով լեցուն: Նա հասկանում է, որ իր հոգում պաշտպանական որոշակի մեխանիզմ է աշխատում, որի պատճառով սկզբնական շրջանում ինքը խուսափում էր հայերից: Մակայն այնուհետև ինքնության պատմական շերտը նրան գրավում է, և նա սկսում է հետազոտել հայոց ծագումը, մեր պատմության վաղ անցյալն ու աստիճանաբար գալ դեպի հայկական ինքնություն: Մայքլ Առլեն ավագի երևույթը Ռիտա Գույումջյանը մեկնաբանում է այսպես. «Վերապրող Մայքլ Առլենը ցեղասպանության փորձառության տրավմային դիմադրելուց հետո, մերժեց հուզական ազդեցությունը տրավմայից ազատվելու համար՝ մերժելով «հայկական ջարդերի մասին» որևէ երևույթ, նա իր որդուն փոխանցում է լրություն անասելի իրավիճակի վերաբերյալ, որի հետևանքով անհայտ է դառնում նրանց ծագումը» [4, էջ 224]: «Հայերի ինքնության խախտման վերլուծությունում նկատում ենք, -շարունակում է Ռ. Գույումջյանը, - որ արմատների ուրացումը և ինքնության շփոթմունքը սկիզբ են առնում ցեղասպան

ծրագրից, որտեղ հայ լինելը հավասար է մահվան: Հակառակ դրան, սարսափի դիմաց ինքնության խախտումն ի հայտ է գալիս որպես հիմնական հետևանք: Հայկական ծագումը ուրացվում է իրականության ազդեցությունը հերքելու և «հայ լինելը = մահ» հավասարումը ջարդելու համար» [4, էջ 226]: Սակայն նման հերքումը լիովին չի իրականանում, քանի որ ինքնության կառուցակազմիչ խորքային շերտում պահպանվում են արքետիպային ձգող տարրերը, սիմվոլները, աշխարհագրացողության կերպը և այլն: Սա նշանակում է, որ թեպետ առաջին հայացքից թվում է, թե ինքնությունը կարելի է գիտակցաբար ընտրել կամ մերժել, սակայն դրանում առկա նախաապրումն ունի զարգացման իր սեփական ընթացքը...

Այժմ դիտարկենք երկրորդ դեպքը: Կերպարվեստում վերացական արտահայտչապաշտության (աբստրակտ էքսպրեսիոնիզմի) ուղղության ներկայացուցիչ, ամերիկյան արդի գեղանկարչության վրա մեծ ազդեցություն թողած հայ ժողովրդի մեծանուն զավակ Ոստանիկ Մանուկ Ադոյանի Արշիլ Գորկի դառնալու պատմությունը: Ադոյանը ցեղասպանությունը տեսավ ձևավորվող մարդու համար, երևի, ամենակարևոր տարիքում, դեռահասության փուլում: Տասներեքամյա տղայի համար ողջ կյանքն ավերող ցնցում եղավ, երբ իր ձեռքերին սովից մահացավ մայրը... [5, p. 15]: Տարագրվելով ԱՄՆ՝ Ոստանիկը փոխում է իր ինքնությունը և ներկայանում որպես ռուս գրող Մաքսիմ Գորկու հեռավոր բարեկամ: Նրա կենսագիր Նուրիցա Մաթոսյանը դա համարում է արվեստի աշխարհում ընդունելություն գտնելու համար կատարված քայլ: Ըստ նրա՝ «Մանուկն, ով ցեղասպանությունից հետո փախել էր Երևան, այնուհետև՝ 1920 թ. ԱՄՆ, ինչպես ռուսական ղեկավարության տակ գտնվող Հայաստանում, այնպես էլ ԱՄՆ-ում «այն հայերից» էր, ում մատով էին ցույց տալիս: Այնպես, ինչպես այսօր մայրերն իրենց երես առած, ճաշը չուտող երեխաներին Աֆրիկայի երեխաներին են օրինակ բերում, 20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ի մայրերը ճաշը չուտող երեխաներին վախեցնում էին՝ ասելով՝ «Կեր, թե չէ հայ կդառնաս»: Իսկ Բոսթոնում նկարչության մասնավոր դասերի առաջին ուսուցիչը Մանուկին ասել էր, որ հայն ԱՄՆ-ում չի կարող նկարիչ դառնալ: Գերմանացիներին ու ռուսներին վայել էր նկարիչ լինելը, իսկ հայերի տեղը հյուղակ գործարաններն ու ածխահանքերն էին: Մանուկն ակադեմիա ընդունվում է Արշիլ Գորկի անունով, բոլորը նրան ճանաչում էին որպես Ռուսաստանից փախած վրացի, գրող Մաքսիմ Գորկու հեռավոր բարեկամ: Գորկին ժամանակակից արվեստի թանգարանին տված իր ինքնակենսագրականում գրել է, թե ծնվել է Նիժնի Նովգորոդում, երեք ամիս աշխատել է ռուս նկարիչ Վասիլի Կանդինսկու մոտ: Արվեստի շրջանակ անցել է կեղծ անցյալով: Այդպես է ընդունվել [6]: Ն. Մաթոսյանի դրույթն այն է, որ թեպետ Գորկին փրկվել է 1915 թ. ցեղասպանությունից, նա վերապրել է ցեղասպանությունը, սակայն Գորկու արվեստի նկատմամբ անարդարացի կլինի պատմությունը քննել լոկ ցեղասպանության տեսանկյունից, անձնական պատմությունը ողբերգականացնել: Ն. Մաթոսյանն այստեղ իավացի չէ: Գուցեն իրոք նրա կարծածի պես լինեք, եթե չպարզվեր, որ Գորկու էթնիկ պատկանելության, նրա ինքնության մասին չեն իմացել անգամ նրա ընտանիքի անդամները՝ դստերը և կինը: Երեխաները փոքր էին, երբ Արշիլն ինքնասպանություն գործեց, բայց չէ որ նա կարող էր իր մասին պատմել կնոջը՝ Ազնես Մագրուդերին, ով իր թոռնուհու նկարահանած «Առանց Գորկու» փաստագրական կինոնկարում ասում է, թե որքան է զարմացել, երբ ամուսնու մահվանից հետո իմացել է նրա հայկական ծագման մասին: Սա կովան է

այն հանգամանքի օգտին, որ անգամ ընտանիքում հայ նկարիչը չի ցանկացել բարձրաձայնել իր ինքնությունը, քանի որ այն խաթարված էր: Հայ մարդն իրեն լիարժեք չէր զգում հայ լինելով... Ստիպված էր նույնանալ Արևմուտքի հասարակության համար առավել ընդունելի կերպով...

Բայց ինքնությունն, ինչպես վերը նշվեց, երկու շերտից է բաղկացած: Ինքնության ստորին շերտը տրանսցենդենտալ է, այն գոյություն ունի ինքնին, անկախ անգամ այն հանգամանքից. մարդն ուզում է ընդունել այն, թե հակադրվում է դրան [1, c. 507]: Արշիլ Գորկու իսկական արվեստաստեղծի, պարագայում ինքնության արտաքին կեղծ-մերժումը ի չիք է դառնում նրա ողջ ստեղծագործության ներքին շարժիչ ուժերը քննելիս: Նա կերտում է իր ինքնությունն արվեստում, թեպետ հանրային կյանքում քաջություն չի ունենում բարձրաձայնելու այդ մասին: Նրա գլուխգործոցներն ուսումնասիրողները չեն կարող շրջանցել Հայոց եղեռնի փաստը, նրանք նշում և վերլուծում են այն, քանի որ արվեստի (առավել ևս աբստրակտ էքսպրեսիոնիզմի) վերացական ու խորհրդավոր լեզուն, այնուամենայնիվ, պահպանում է ցավն ու բողոքը և աղաղակում դրանց մասին: Բրիտանացի արվեստի տեսաբան Էնդյու Գրեհեմ Դիքսոնը հայագի Նուրիցա Մաթոսյանից առավել խորաթափանցությամբ է վերլուծում Գորկու ստեղծագործության կապը սև եղեռնի հետ, գրելով. «Գորկին հնարել էր պատմություն, որ աշխատել էր Կանդինսկու արվեստանոցում որպես օգնական, իրեն որպես Մաքսիմ Գորկու հեռավոր ազգական ներկայացնելով: Իրականում, նրա անցյալը մութ էր և աղետալից: Միլիոնից ավելի կանայք, տղամարդիկ և երեխաներ էին սպանվել կամ սովալլով արվել թուրքական բանակի կողմից: Գորկու մայրը մահացել էր իր ձեռքերին: Մոդեռն, նոր և հեղափոխական արվեստին նրա նվիրումը մասամբ կապված է սեփական անցյալը մոռանալու կարիքի կամ ցանկության հետ: Բայց անցյալը լիովին, միանգամայն մոռանալ նա երբևէ չկարողացավ...» [7, p. 623]: Գորկու արվեստին նվիրված իր դասախոսության մեջ Գրեհեմ Դիքսոնը նշում է, որ Գորկու ողջ ստեղծագործությունը ինքնության որոնման, ինքնության կերտման գործընթաց էր, որի խորքում, սակայն, ցեղասպանության գույներն էին (անգամ կարմիր ծաղիկներն այնպես են նկարված, որ, ըստ բրիտանացի արվեստաբանի, գուգորդումներ են առաջացնում թափված արյան ու վերքերի հետ) [8]: Գորկու գեղանկարներում հստակորեն խորհրդանշվում են կորսված հայրենիքի գույները, բնանկարի ուրվագծերը, ազգակիցների բնավորությունն ու պարը...: Դե իսկ «Նկարիչը և իր մայրը» կտավում մոր ձեռքերն անավարտ թողնելը անուղղակիորեն մատնանշում է կորստյան ահռելիության այնպիսի չափի մասին, որն «աննկարելի» է, հնարավոր չէ նկարել, հնարավոր չէ խոսել... Դա կարելի է տալ միայն սիմվոլիկ կերպով: Միմվոլ, որը տվյալ համատեքստում մարդկությանը քսաներորդ դարասկզբին համակած ախտի սիմպտոմ է նաև... Փաստորեն, վերացական էքսպրեսիոնիզմին դիմելն ու իր ուրույն արվեստի լեզուն ստեղծելն իսկ մեկ նպատակ է հետապնդել. ոչ բառերով, ոչ ուղղակի պատկերումներով, այլ խորապես թաքնված, ձևի և գույնի փոխակերպումներ ապրած սիմվոլների միջոցով սեփական վիշտը և ինքնության կորստյան ցավը պատմելը: Եթե ֆրանսահայ նկարիչ Ժանսենը կերտում է եղեռնին նվիրված գեղանկարների շարք, որտեղից մեզ են նայում կմախքացած, լլկված կանայք, երեխաներ ու տղամարդիկ, որտեղ մահը թնաձում է թե՛ դիակների, թե՛ այլանդակվածների պատկերների տեսքով, Ադոլանը չէր կարող իր ցավը նորից ապրել նման արվեստ ստեղծելով... Ընդհակառակը, նա ուզում էր

հաղթահարել այն, տոնել կյանքի հաղթանակը մահվան վրա, բարու հաղթանակը չարիքի վրա... Նա արևելահայ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Մարյանի նման ցանկանում էր, որ իրականության մեջ չլինեք ցեղասպանություն ասվածը.... Մարյանը էջմիածնում գաղթից փրկվածներին տեսնելով այնպես էր ցնցվել, որ որոշել էր միայն ծաղիկներ նկարել... Նա չէր կարող սևը, ավերը, կոտորածը տանել նաև արվեստ... Գորկին, որ ինքն անձամբ էր ապրել արհավիրքը ո՛չ դիսկուրսի միջոցով, ո՛չ վիզուալ ուղղակի բովանդակությամբ չէր ցանկանում արծարծել ցեղասպանությունը... Ավաղ, այն այնպիսի խոր ազդեցություն էր թողել հայոց կոլեկտիվ անգիտակցականի վրա, որ Գորկու ցանկացած, անգամ ամենավերացական կտավում, հստակ երևում է ցավը և դրանից ազատվելու մեծ ցանկությունը... Ի տարբերություն Մայքլ Առլեն ավագի, Գորկին նպատակ ուներ արևմտյան հասարակությանը բացահայտելու իր հայկական ինքնությունը, սակայն ցանկանում էր դա անել ճանաչում ստանալուց հետո: Ցավոք, ճանաչումը եկավ նրա ինքնասպանությունից հետո... Բայց տվյալ պարագայում դա խոչընդոտ չէ, քանի որ նրա արվեստի շատ գործեր դարձան հայոց ինքնության վիզուալ խորհրդանիշեր, ցեղասպանության մահաբեր ուժի դեմ ստեղծագործական ուժի կենսարար պատասխաններ...

Ցավոք, ցեղասպանությունը ոչ միայն քաղաքական և տարածքային ավերակներ թողեց, այն նաև շատ հոգիներ ավերակեց: Հայը դադարեց հայ լինելու համար հպարտանալուց, վախեցավ ու հուսահատվեց... Հայ բանաստեղծ և գրաքննադատ Արշակ Զոպանյանն այդ դաժան տարիներին, տեսնելով, թե ինչպես են կոտրվում իր հայրենակիցները, և թե ազգային ոգին պահելու համար որքան կարևոր է սեփական ինքնագնահատականը, կոչ է անում վերանայել հայոց պատմությունն ու ներկան և տեղի ունեցողն անվանել ոչ թե ողբերգություն կամ վայերգություն, այլ՝ դուրացականություն:

«Դյուցազներգություն, այո՛, և ո՛չ ողբերգություն:

Սև են լուրերը, որ մեր երկրերն կուգան,

Ավելի սև, քան հավաքված սևությունը բոլոր գիշերներուն,

Որ աշխարհի ծնունդեն ի վեր արևն սքողեցին...

Գետերը հիմա կարմիր են հոն՝ մեր մարտիրոսներուն արյունովը,

Դաշտերը հիմա ճերմակ են հոն՝ շեղջակուտակմամբ մերկ դիակներուն....

Աշխարհ ամբողջ, Արհավիրքի տիրապետության տակ կքած,

Կցնցվի այս գերագույն արհավիրքեն, որ իր մեծությամբը

կգերազանցե բոլոր սխրագործությունները չարին.

Աշխարհ ամբողջ զարհուրած.... կգոչե՝ «Անօրինակ ողբերգություն,

մեծագո՛յնը ողբերգութանց...»

Ես կըսեմ **դյուցազներգություն ու մե՛ծագույնը դյուցազներգությանց.**

Ու եթե չէք հավատար, պահ մը ձեր աչքերը փակեցեք

ներկա ժամու տեսարանին,

Եվ դարերու անհուն կտավի վրա տեսեք պարզվիլը

հերոսական վեպին, զոր այդ ժողովուրդը հոն գծած է... »:

Այո, իրոք, դյուցազներգություն, քանի որ հոգու ավերակներից հառնելն իրապես դյուցազնական կամք է պահանջում... Մեր ժողովրդի հերոսական վեպը դեռևս շա-

րունակում է գծվել և առջևում ազգային ինքնության զարթոնքի ու ստեղծագործական թռիչքի նոր դարաշրջաններ են լինելու....

Գրականություն

1. Юнг К., Психологические типы, Минск, 1988.
2. Ս. Պետրոսյան, Ինքնության հիմնահարցի փիլիսոփայական վերլուծության որոշ խնդիրներ, Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ, Փիլիսոփայություն, Հոգեբանություն, թիվ 136.4, Երևան, 2012, էջ 3-15:
3. Ադլեն Մայքլ, Դեպի Արարատ, Եր., 2000:
4. Կույումջյան Ռիտա, XX դարի առաջին ցեղասպանությունը: Հայկական հիշողության վերադարձը, Եր., 2012:
5. N. Matossian. Black Angel. The life of Arshile Gorky. London, 2000.
6. «Արևմտահայաստանի և արևմտահայերու ուսումնասիրության կեդրոնի» կայք.
<http://akunq.net/am/?p=20214>
7. Andrew Graham-Dixon, *Arshile Gorky*, 2010 // Sunday Telegraph Reviews, 2004-2013.
<http://www.andrewgrahamdixon.com/archive/readArticle/623>
8. Էնդրյու Գրահամ Զոնսոնը խոսում է Արշիլ Գորկու մասին, տե՛ս
<https://www.youtube.com/watch?v=j5X3QV4GL50>:

Сильва Петросян

*Факультет философии и психологии ЕГУ
Доцент кафедры истории философии*

ВЛИЯНИЕ ГЕНОЦИДА АРМЯН НА НАЦИОНАЛЬНУЮ ИДЕНТИЧНОСТЬ: НЕКОТОРЫЕ ФИЛОСОФСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ

Ключевые слова: *Армянская национальная идентичность, идентичность полосы, геноцид, личность, травмы, армянского эпоса.*

Геноцид был нацелен не только на физическое существование армян и на территорию, он был осуществлен также для истребления культурной идентичности. Но несмотря на травматические последствия для выживших, полностью истребить армянскую идентичность не удалось. В статье исследуются случаи Тиграна Гуюмджяна - Майкла Арлена и Востаника Манука Адояна - Аршила Горку. Показывается, что несмотря на внешнее отрицание самости, ее внутренняя трансцендентальная составляющая продолжает существовать трансформируясь в произведения искусства.

Silva Petrosyan

*Faculty of Philosophy and Psychology, YSU
Associate Professor of the Department of History of Philosophy*

THE IMPACT OF ARMENIAN GENOCIDE ON NATIONAL IDENTITY: SOME PHILOSOPHICAL AND PSYCHOLOGICAL OBSERVATIONS

Keywords: *Armenian national identity, identity stripes, genocide, identity, trauma, Armenian epic.*

Author affirms that genocide was aimed to the sense of Armenian national identity and ruined it for the whole generation of survivors. Two cases are examined: the story of Tigran Guyumjyan-Mikael Arlen and Vostanik Manuk Adoyan- Arshile Gorky. In both cases the crisis of identity is seen, but following the Jung's notion about two layers of identity, it is possible to insist that Identity is preserved and transformed into art creations.

Մյուզան Մարգարյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դոցենտ
suzisargsyan09@rambler.ru

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ. ԴԵՊՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հանգուցային բառեր՝ գենային հիշողություն, միջսերնդային փոխանցում, անգիտակցական:

Մտքերը՝ արտահայտված և չարտահայտված, մնում են մարմնում: Մենք ապրում ենք դրանցով, չարտասանված բառերը, չասված դրվագները, պատմություններն անջնջելի հետք են թողնում մեր հոգեկանի վրա, ստեղծում որոշակի լարվածություն, ամրապնդվելով՝ դառնում որևէ հիվանդություն: Իսկ եթե այդ մտքերը, պատմությունները մեր անձնական կյանքից ու փորձից չեն, բայց «ներկա են» մեր կյանքում տարբեր դրսևորումներով՝ հոգեառամտիկ, տրավմատիկ, սաքսափ առաջացնող երազների ձևով: Այսօր մենք ապրում ենք արմատական հեղաշրջումների, գիտության արագընթաց զարգացման և մեծ փոփոխությունների դարաշրջանում, փոփոխություններ, որոնք տեղի են ունենում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, նաև մեր մտածողության և ընկալման դաշտում:

Յուրաքանչյուր հոգեբան, բժիշկ, հոգեթերապևտ, խմբավար, ընդհանրապես ցանկացած մասնագետ իր պրակտիկայում հանդիպում է բարդ դեպքերի, խնդիրների, որոնք դասական տեսությունները մինչև վերջ չեն բացահայտում և մեկնաբանում: Կամ հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ նմանատիպ օրինակների մասին լսել ես, բայց չես առնչվել: Եվ սկսում ես փնտրել բացատրություններ, ինչ-որ բան պարզ է դառնում, ինչ-որ բան մնում է վարագուրված: Իսկ երբ խոսքը գնում է անգիտակցականի մասին, այստեղ արդեն ամեն ինչ ավելի բարդանում է:

Ընթանում էր արտ-թերապիայի թրեյնինգի հերթական հանդիպումը, երբ աշխատում էինք խորքային անգիտակցականի հետ: Արտ-թերապիան անգնահատելի միջոց է ուսումնասիրելու և ներդաշնակեցնելու մարդու ներաշխարհի հատկապես այն կողմերը, որոնց արտահայտման համար բառերը անգոր ու ծանր են լինում: Կամ ինչպես ասում է նշանավոր Երվանդ Քոչարը՝ «Մեր դարում ոչ մի միտք չի կարելի լրիվ արտահայտել, որովհետև բառերը դարձել են մադի նման ծակ, բառերը հնացել և հետ են մնում մտքից...» [1, 178]: Շարունակենք Քոչարի միտքը՝ ավելացնելով, որ բառերը հետ են մնում նաև հույզերից, զգացումներից, և այստեղ արդեն կարևորվում է տեսողական, պլաստիկ արտահայտչականության լեզուն: Խմբում միայն հոգեբաններ էին, աշխատում էինք կրկնվող, տազնապալի կամ մանկությունից հիշվող երազների հետ: Մասնակիցները պետք է նկարեին իրենց

երագից մի դրվագ, որն ավելի վառ էր տպավորվել: Մասնակից Հ-ն, 26 տարեկան, նկարեց մանկությունից իրեն հետապնդող մի երագ, որտեղ ինքը վեց տարեկան էր (Հ-ն պարզապես վստահ էր, որ այդտեղ հենց այդ տարիքին էր), սենյակի հատակին պառկած, սուտմեռուկ էր տվել, որպեսզի դռան մոտ կազնած երկու տղամարդիկ չտեսնեին իրեն և դուրս գային տնից: Աղջնակը չէր տեսել, բայց գիտեր, որ այդ երկուսը կողքի սենյակում սպանել էին իր ծնողներին և հարազատներին: Աղջիկը, վախից շունչը պահած, սպասում էր տղամարդկանց հեռանալուն, և գրեթե շնչահեղձ էր լինում: Անգամ երագը պատմելիս Հ-ն շնչահեղձ էր լինում, անընդհատ ձեռքը տանում էր դեպի պարանոցը, շփում էր, խորը շունչ քաշում, և դեմքին կարծես քարացել էր սարսափը: Հ-ն փակ սենյակներում գրեթե միշտ շնչահեղձության նոպաներ էր ունենում: Այդ երագի մասին նա երբեք չէր պատմել ոչ մեկին, անգամ մորը, ի դեպ, Հ-ն մոր միակ զավակն է: Նա խոստովանեց, որ շատ վաղուց, դեռ մանկությունից անընդհատ տեսնում է այդ երագը և ամեն անգամ սոմատիկ նույն դրսևորումներն է ունենում և սարսափի նույն զգացումը: Որոշեցինք աշխատել հենց այս երագի հետ: Դա հոգեվերլուծական աշխատանք է, որտեղ երագը, հատկապես կրկնվող երագը, համարվում է որպես անգիտակցականից եկող ուղերձ այն մասին, որ կա խնդիր և անհրաժեշտ է այդ խնդրի լուծման համար գիտակցության օգնությունը: Անգիտակցականն ուղարկում է ոչ միայն խնդիրը, այլև հուշում դրա լուծումը: Երբ մարդը գիտակցում է պրոբլեմը, այլևս հեշտ է աշխատել դրա հետ: Դա բարդ աշխատանք է, մարդու համար ինսայտներով հագեցած, բայց վերջում և՛ այցելուն, և՛ հոգեբանը ներքին բավարարարվածություն են ապրում և հասկանում ու զգում, որ աշխատանքն ավարտված է: Հ-ի դեպքում երագի մեկնաբանման տարբերակները շատ էին, նա փորձում էր կապել այդ դրվագն իր մանկության մի քանի իրավիճակների հետ, և մեկը կարծես թե համոզեց և՛ Հ-ին, և՛ ինձ: Երագի հիմքում ընկած էր մի դրվագ նրա մանկությունից, որը բավականին տհաճ էր, և աղջիկն այն արտամղել էր: Հիշողությունը կապված էր մանկության նրա ապրումների հետ, երբ բակ իջնելու համար Հ-ն պիտի անցներ մուտքի մոտ կանգնած տարիքով իրենից բավականին մեծ տղաների կողքով, որոնք ամեն անգամ ինչ-որ տհաճ բան էին ասում: Հ-ն խուսափում էր նրանցից, փորձում միշտ աննկատ անցնել: Թրեյնինգն ավարտվեց, բայց ինչպես ինձ մոտ, այնպես էլ Հ-ի մոտ (ինչպես հետո նա խոստովանեց) կար մի տեսակ անավարտության զգացում. պարզ չէր, թե ինչու՝ էր այդ 6 տարեկան աղջնակը, շունչը պահած, պառկել հատակին հենց մուտքում, իսկ կողքի սենյակում սպանված հարազատները: Պատասխանն ստացվեց հենց նույն երեկոյան, երբ Հ-ն ընթրիքի սեղանի շուրջ մորը պատմում է մեր հերթական հանդիպման և իր երագի մասին: «Իմ պատմելու ընթացքում մորս զարմացած դեմքը մի տեսակ ձգվեց, իսկ ձեռքը քարացավ օդում»: Պարզվում է, որ Հ-ի նախատառը, մոր տատիկը, 1915 թ.-ի Եղեռնից հրաշքով փրկվածներից է: Նրա ողջ ընտանիքը գոհ է գնում երկու թուրք ոճրագործների սրին, իսկ 6 տարեկան աղջիկը, շունչը պահած, սենյակի մի անկյունում հատակին պառկած, մեռած է ձևանում, մինչև ոճրագործները տնից դուրս գան: Այդպես նա փրկվում է: Այս պատմության մասին չեն խոսել, տրավման շատ մեծ էր, Հ-ի մայրը աղջկան երբևէ չէր պատմել, անգամ թեթև ակնարկ չէր արել, թե ինչպես է իր տատիկը փրկվել և հասել Հայաստան:

Ի՞նչ է սա, գենային հիշողություն: Գենն իր մեջ կրում է ինֆորմացիա անցյալի, ներկայի, անգամ ապագայի մասին, այդ իսկ պատճառով գենը պետք է հիշողություն

ունենա [2, էջ 76]: «Գենային հիշողություն բառակապակցությունն այսօր արմատավորվել է մեր առօրյա խոսքում, օգտագործվում է գրական երկերում: Գենային հիշողության տակ հասկանում են ընդունակությունը հիշելու այն, ինչը չի եղել անհատի կյանքի անմիջական փորձում, իր առօրյա պրակտիկայում: Սովորաբար դրանք անցյալի որոշակի տեսիլքներ են, նախնիների հիշողությունը, նախկին կյանքի պատկերներ և այլն...» [3, էջ 269]: Իհարկե, այս երևույթը գիտական խիստ ապացուցում դեռևս չունի, բայց մարդկային հոգեկանն անսահման հնարավորություններ ունի և նորանոր բացահայտումների կարիք: Գենային հիշողությունն անվանում են նաև «նախնիների հիշողություն», «ցեղի հիշողություն»: Այդ հիշողությունն ավելի շատ զգացողության մակարդակում է և երբեմն շատ խորքային մակարդակից լողում է վեր և առաջ բերում ոչ հստակ պատկերներ, զգացողություններ: Գենետիկական հիշողությունը դրսևորվում է երագներում կամ գիտակցության փոփոխված վիճակներում, քանի որ տվյալ դեպքում գիտակցությունը պաշտպանում է հոգեկանը անձի երկատման զգացումից: Գենետիկական հիշողությունը մտնում է կոլեկտիվ անգիտակցականի կառույցի մեջ, որը Կ. Յունգը դիտում է որպես հոգեկանի խորքային մակարդակ, որը կախված չէ մարդու անձնական փորձից, այն ողջ մարդկության հիշողությունն է և իր մեջ պահպանում է շատ առաջնային կերպարներ, արքետիպեր, որոնք ժառանգվում են գենետիկորեն: Գենային հիշողության մասին գաղափարն ունի բավականին խոր արմատներ: Դեռևս Ագնի Յոզայում խոսվում է, որ ամենաանսպասելի պահերին առկայծում են հեռավոր դարերից առանձին հիշողություններ: Նշանակում է, դրանք ինչ-որ տեղ պահպանվում են և անցնում սերնդից սերունդ: «Ժառանգականությունը նույն նշանակությունն ունի ազգի համար, ինչ-որ հիշողությունը՝ առանձին անհատի: Հնարավոր է, նախնիներն իրենց դարավոր փորձը ներդնում են իրենց սերունդների Ես-ի խորքերը» [6, էջ 26]: 1953 թվականին գիտնականներ Ֆրենսիս Կրիկն ու Ջեյմս Ուոտսոնը հրատարակեցին մի հոդված, որում բացատրում էին, թե ինչ ձևով է գենետիկ ինֆորմացիան անցնում մի սերնդից մյուսին: Դա մեծ հեղաշրջում էր գիտության մեջ, որի համար նրանք 1962 թ.-ին Նոբելյան մրցանակ ստացան: Այսինքն արտ-թերապևտիկ մեր աշխատանքում Հ-ի պարբերաբար կրկնվող երազը կարող ենք մեկնաբանել՝ ելնելով «գենային հիշողության» տեսությունից: Բայց ի՞նչ է փորձում անգիտակցականը հուշել, ինչու՞ է այդ պատկերը կրկնվում ողջ ընտանիքը կորցրած նախատատի ծոռոնուհու երագում, ինչու՞ գրեթե հարյուրամյա վաղեմություն ունեցող դեպքերը չեն մնում պատմության մեջ:

Մեր խնդրի լուսաբանումն իհարկե կապված է գենային հիշողության հետ, բայց մեկ այլ մոտեցում կա, որն ավելի քան լուսաբանում է Հ-ին հետապնդող երազը: 1960-1970 թթ.-ին Ֆրանսուազա Դոլտոն, Նիկոլյա Աբրահամը և Իվան Բուգորմենի – Նադը առաջ են քաշում բարդ մի պրոբլեմ. ոչ լիովին լուծված կոնֆլիկտի միջսերնդային փոխանցման խնդիրը (ատելություն, վրեժ, գաղտնիքներ, հարազատի չասված, չլուսաբանված մահ և այլն): Ըստ այս տեսության՝ կան ապրված անարդարություններ, որոնք ցավ են պատճառում, կան գաղտնիքներ, որոնց չի կարելի բացահայտել, շատ են տրավմատիկ: Այդ գաղտնիքները դառնում են գաղտնի «ուրվականներ», որոնք պահպանում են որևէ հրազատի գաղտնիքը, դրանք փոխանցվում են մոր անգիտակցականից երեխայի անգիտակցականին, սերնդե սերունդ [5, էջ 71]: Ինչպե՞ս է անցյալն ապրում մեր ներկայում: Արդեն Զ. Ֆրեյդը խոսում էր, որ

զգացմունքները սերնդե սերունդ փոխանցվում են որևէ սխալի հետ միահյուսված, և դրանք գիտակցության ոլորտում չի պահում մարդը: Բազմաթիվ հետազոտողներ գտնում են, որ ներարգանդային կյանքում, արդեն 7-րդ ամսում, երեխան երազներ է տեսնում, որն ամենայն հավանականությամբ փոխանցում է մայրը: Երեխան մուտք է ունենում մոր անգիտակցական ոլորտ և ինֆորմացիա է ստանում: Համաձայն միտք է արտահայտում և Ֆրանսուազա Դոլտոն, որ մոր և երեխայի անգիտակցականները կապված են իրար, և երեխան գիտի, զգում է իր ընտանիքին վերաբերող ինչ-ինչ ինֆորմացիա և դա փոխանցվում է սերնդե սերունդ [4, էջ 332]: Նիկոլյա Աբրահամն ու Մարիա Տյորոկն առաջ քաշեցին մի ինքնատիպ վարկած «ուրվականի» և «դամբանի» վերաբերյալ: «Ուրվականը» անգիտակցականի գոյացություն է, որը երբևէ գիտակցված չի եղել, և փոխանցվում է ծնողի անգիտակցականից երեխայի անգիտակցականին: Այդ փոխանցման մեխանիզմն, ըստ Ա.Շուտցենբերգերի, այնքան էլ հստակ չէ: Բայց այդ «ուրվականը» շատ հաճախ կապված է ընտանեկան գաղտնիքների հետ, հարազատի մահվան, բռնության, անարդար դեպքերի, չթաղված լինելու հետ: Իսկ այն պրոբլեմները, որոնք կապված են ցեղասպանության հետ, շատ կարևոր են և ժամանակային վաղեմություն չունեն: Ոճրագործության, անարդարության հիշողությունը երկար է պահպանվում: Գուցե լաված, արտահայտված լինելու, մոռացված չլինելու՝ համար: Իսկ ինչպե՞ս են փոխանցվում ընտանեկան գաղտնիքները, եթե դրանց մասին չեն խոսում, որովհետև շատ ցավոտ են: Այդ ինֆորմացիայի փոխանցման երկու ճանապարհ կա՝ գիտակցական և անգիտակցական:

1. Անձը ընտանիքի անցյալի մասին տեղեկություններ է ստանում մի քանի աղբյուրներից՝ հրապարակումներից, պատմական աղբյուրներից, տատիկներից, պապիկներից, ծնողներից: Պատմվում և վերապատմվում են ընտանիքի համար կարևոր, դրամատիկ իրադարձությունները: Կարևորվում է ծնողների պատրաստակամությունը՝ պատմել, կիսել իրենց մտքերը ընտանիքի պատմության, սովորությունների մասին, երբ երեխան ազատորեն կարող է հարցեր տալ: Անցյալի գիտակցումը նորովի է իմաստավորում ներկան: Մեր արտ-թերապևտիկ խմբի մասնակից Հ-ն գիտեր միայն, որ իր մոր հարազատները Արևմտյան Հայաստանից էին և Եղեռնի ականատեսը: Բայց ո՞վ է ինչպե՞ս էր փրկվել, ովքեր էին զոհ գնացել, այդ մասին երբևէ չէր խոսվել: Եվ այդ բացը լրացրել էր անգիտակցականը՝ մոր անգիտակցականից քաղած ինֆորմացիայով:

2. Ինֆորմացիայի ստացման մյուս ճանապարհն անգիտակցականն է, միջ-սերնդային փոխանցումը, որի մասին չեն խոսում, թաքցնում են: Ահա այս դեպքում առաջանում են տրավմաներ, հիվանդություններ, սոմատիկ պրոբլեմներ: Եվ այն, ինչ չի ասվում, գաղտնի է պահվում, «թաղվում է» անգիտակցականում, որպես ներքին կառույց և դառնում է մի իսկական «ուրվական»՝ «հետապնդելով» որևէ հարազատի, որը տառապում է անբացատրելի ախտանիշներով, կրկնվող երազներով, որոնք մատնացույց են անում գաղտնիքը: Այս տրանսգեներացիոն մեթոդով ուսումնասիրում են նման հիշողությունների ազդեցությունը տառապող ազգերի, եղեռնի զոհերի և ընտանիքների վրա: Ֆ.Դոլտոն նշում է, որ այն ամենը, ինչի մասին լռում են առաջին սերնդում, երկրորդ սերունդը կրում է իր մարմնում: Երբ խոսում են թաքնված, գաղտնի բաների մասին, սարսափներն անհետանում են: Ավելի լավ է իմանալ ճշմարտությունը, ինչքան էլ ցավոտ ու ողբերգական լինի, քան թաքցնել

այն: Այն ինչ թաքցնում են ծնողները, սերունդները դա զգում են կամ ենթադրում: Փաստորեն անգիտակցականի դաշտում էլ աշխատում է Ջեյգարնիկի էֆեկտը. անավարտ մնացած գործողությունը, չասված միտքը, չապրված զգացմունքը լարվածություն է ստեղծում մարդու հոգեկանում, չի թողնում այն մոռանալ:

Որպեսզի մարդն «ազատ» լինի ընտանիքի գաղտնիքի բեռից, ճիշտ է իմանալ իր և իր ընտանիքի պատմությունը, ակտիվ օգտագործել այն, քան պասիվ կերպով զգալ դրա ազդեցությունն իր վրա: Յուրաքանչյուր մարդ իր արմատներով գնում է դեպի իր պատմություն: Մեկ օրինակ ևս. արտ-թերապևստիկ մեկ այլ խմբի մասնակից՝ 34-ամյա Տ-ն իր արմատների որոնման ճանապարհին աչքաթող էր արել մի կարևոր երազ. նա նկարելով երազը, շատ վստահ պատմում էր հրեական մի համայնքի մասին, որի բնակիչների մի մասը փրկվել էր ինչ-որ ահավոր բանից՝ պատսպարվելով փոքրիկ մի տաճարում: Բոլորը հավաքվել էին հրեա ռաբբիի շուրջը և աղոթում էին: Անգիտակցականը կարծես հուշում էր, որտեղ փնտրել իր պատմությունը: Եվ մեր՝ հոգեբանների ու հոգեթերապևստների, խնդիրն է՝ ուղեկցել մարդուն այդ ճամփորդության ընթացքում, օգնել գիտակցելու իր անցյալի, նախնիների պատմությունը, հստակեցնելու և նոր էջ բացելու իր կյանքում: Եվ այս համատեքստում նորովի են հնչում Երվանդ Քոչարի խոսքերը. « Այո, ամեն գործի մեջ կա ինչ-որ ես գիտեմ և ինչ-որ չգիտեմ: Ես իմ գործով ցույց եմ տալիս չիմացածս՝ ինտուիտիվը, իսկ իմ խոսքով՝ գիտեցածս» [1, էջ 190]:

Գրականություն

1. Երվանդ Քոչար, Ես և դուք, Երևան, 2007.
2. Беляев М.И., Генная память, Москва, 2006.
3. Гримак Л.П., Тайны гипноза, СПб., 2004.
4. Дольто ф., На стороне ребенка, Москва, 2003.
5. Шутценбергер А.А., Синдром предков. Трансгенерационные связи, Москва 2001.
6. Юнг К.Г., Психоанализ и искусство, Киев, 1996.

Сюзан Саргсян

*Факультет философии и психологии ЕГУ
Доцент кафедры социальной психологии*

ТРАНСГЕНЕРАЦИОННАЯ ПЕРЕДАЧА ПАМЯТИ: АНАЛИЗ СЛУЧАЯ

Ключевые слова: генетическая память, передает поколениями, бессознательное.

Генетическая память- это способность помнить то, чего не было в непосредственном жизненном опыте человека. Она может проявиться во сне или в период измененного состояния. Один из ее существенных феноменов- трансгенерационная передача не полностью разрешенного конфликта и тайн, проживание несправедливости, которые передаются от бессознательного родителей к бессознательному ребенка.

Suzan Sargsyan

Faculty of Philosophy and Psychology, YSU

Associate Professor of the Department of Social Psychology

TRANSMISSION OF TRANSGENERATIONAL MEMORIES. ANALYSIS OF A CASE

Keywords. genetic memory, intergenerational transfers, unconscious.

Genetic memory is the ability to remember what we should not remember, which was not in the direct experiences. Genetic memory sometimes comes up from the subconsciousness and causes unclear image, impressions and feelings. Genetic memory can occur during sleep. Transgenerational transmission is significant phenomena of genetic memory.

Ասրեղ Արյան
Բուենոս Այրեսի հոգեվերլուծության,
Արգենտինայի, Միջազգային և Հարավային Ամերիկայի ասոցիացիաների անդամ
asbed22@gmail.com

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱԽՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հանգուցային բառեր՝ *ցեղասպանություն, ժխտված, պարփակված սուգ, դեռահաս, դրանսկենեռացիոն:*

*« . . . գոյություն չունի մեծ կամ փոքր
կարևորության հոգեկան գործընթաց,
որից մեկ սերունդը ի գործու է հաջորդ սերնդին գերծ պահել»:*

Տոտևմ և տարու

Ձ. Ֆրոյդ

*Ամեն ինչ ասված է. . .
սակայն պետք է շարունակել խոսել
Սամուէլ Բեքթեր*

*Քանակն ապաստանավորում է զոհերին
և մեկ ակնթարթում մեզ անտարբեր դարձնում.*

*մեկ մարդու մահը ողբերգություն է,
մեկ միլիոն մարդկանց մահը տեղեկություն:*

Վալտեր Բենջամին

Մեկ անգամ ևս, այստեղ և հիմա, Ցեղասպանությունը, որին հղում եմ կատարում, լինելով այս անգամ Երևանում, այս գիտաժողովի առիթով: Անհերքելիորեն առաջին Ցեղասպանությունն է XX-րդ դարում՝ իրականացված լինելով հայ ժողովրդի նկատմամբ 1915-ին թուրքական պետության կողմից, Երիտթուրքական կառավարության ժամանակ: Բայց արդեն նախորդել էր 1890-ին Սուլթան Աբդուլհամիդ II-ը և, որին հաջորդել էր Մուսթաֆա Քեմալը, 1920 թ.-ից մինչև 1923 թ.:

Թեման ընդարձակ է ու խրթին, և ես պետք է կենտրոնանամ **արդի** երիտասարդ սուբյեկտի հոգեկան վիճակի վրա, որը ի ցույց է դրվում երեք կամ չորս տասնամյակների ընթացքում ծավալված և հետագա սերունդների կողմից բնաջնջման փորձին վերաբերվող տարբեր պատմությունների միջոցով: Երիտասարդ սուբյեկտները, որոնց մասին խոսում եմ, բախվում են նաև չափահասների աշխարհի որոշ հատվածների կողմից՝ պատմական այդ իրականության կազմակերպված ժխտմանը, և

դա կատարվում է հատկապես իրենց կյանքի այն փուլում, երբ իրենցից իսկ այդ հասարակությունը պահանջում է ենթարկվել իրավական և էթիկական նորմերին: Հանդիսանալով հոգեկան առողջության գործիչներ՝ մեր գործառույթն է օգնել մեր պացիենտներին սեփականաշնորհել իրենց ներկան, կարողանալ պատմականացնել յուրաքանչյուրն առանձին իրենց անցյալը, կառուցել գալիք կայուն կենսափիլիսոփայություն, ներգրավվել իրենց հասարակության մեջ և տնտեսապես կառավարել իրենց նյութական, հուզական ու մտավոր ռեսուրսները: Դեռահաս-վերլուծող կապի այս բարդ խնդրի ասպեկտներից մեկը այն է, որ երիտասարդը կարողանա դիմակայել չափահասների աշխարհի որոշ հատվածների կողմից պարտադրված կեղծիքներին, երբ նա ինքը զբաղված է սեփական բարոյաէթիկական չափանիշների կառուցմամբ:

Ես կդիտարկեմ այս նյութն իմ մասնագիտության՝ հոգեվերլուծության տեսանկյունից: Յուրաքանչյուր հնարավորության դեպքում ես կփորձեմ «կապեր» կատարել այս նյութին վերաբերվող միջառարկայական մի աշխատանք սոցիալական գիտությունների հետ, որն անհրաժեշտ է: Իրականում կարծում եմ՝ այս պահի դրությամբ բազմաշերտության և միավորման գաղափարները աշխատանքի՝ նախընտրելի լավագույն ուղղություններն են, քան անջատմանը... Եթե ոչ, ինչպե՞ս խոսել անցյալից առանց այս ամենի: Ինչպե՞ս վերականգնել վկաների, ագրեսորների կամ զոհերի պատմությունները ու նրանց ձայնը, երբ նրանցից ոմանք ընդդիմանում են ու խուսափում խոսելուց, մյուսներն էլ սարսափում են դատարկ և անմասնակից ունկնդրից: Ինչպե՞ս խոսել չարիքի մասին առանց հոգեվերլուծական հոգեախտաբանական կատեգորիաների, որոնք ոչ միայն չեն բացատրում, այլև չեն կարող նույնիսկ նկարագրել չարիքի կոնցեպտի կողմից առաջադրված խնդիրները և ընդհակառակը դրանք երբեմն քողարկում են:

Կենդանիներից տարբեր, յուրաքանչյուր անհատ պետք է սիմվոլիկ պլանում սահմանի իր սեփական սեռական-սոցիալ-քաղաքական սուբյեկտիվությունը, նույնիսկ, երբ որպես սկզբնակետ նա ելնում է անատոմիա-հորմոնալից: Երիտասարդը պետք է մշակի այս բարդ գործը սեռահասունությունից սկսած դեռահասության ողջ ընթացքում: Մինչ այդ մշակման և հասունացման ընթացքում նա պետք է նաև համապատասխան կերպով անդրադառնա դեռևս չմշակված տրանսգեներացիոն տրավմատիզմներին, որպիսի դրանք չշարունակեն հանդես գալ որպես արգելքներ կարողանալով դրանց մասին խորհել և դրանք վերածել անձնական պատմության:

Իրականում՝ ժխտված ցեղասպանության պարագայում մենք պետք է հաշվի առնենք պարփակված սուզերը, խոսքը ոչ միայն անձնական սուզերի մասին է, այլ նաև տրանսգեներացիոն, որոնք տեղակայված են **XX** դարում տեղի ունեցած մշակութային փոփոխությունների մեջ. մի դար, որի ընթացքում հայկական ցեղասպանության նման տարբեր կարևոր երևույթներին զուգահեռ իրականացվեցին նացիստական ցեղասպանությունը Աուսշվիցում և այլ դաշտերին և ստալինյան ցեղասպանությունը Միֆիրում, զանազան պատճառաբանություններով: Այսուհանդերձ անհրաժեշտ է ընդունել, որ **XX** դարում նաև տեղի ունեցավ Ծայի ճանաչումը Գերմանիայի կողմից, մի ճանաչում և վերականգնում, որոնք հավանաբար նպաստեցին այդ երկրի հետագա վերակառուցմանը և վերակայացմանը: Այնինչ՝ հայոց Ցեղասպանությունը **XXI** դարում շարունակում է ժխտված լինել, չնայած Հիտլերն ինքը նույն **XX** դարում ճանաչել և ոգեշնչվել էր վերջինիս օրինակով ասել էր՝ *Wer redet*

noch von der Vernichtung der Armenier? R v. Leirg, n'q' ayuor hunum' Zayng p'ndgndman' masin: Արկածախնդրային չէ կարծել, որ մարդկությունը կշարունակի թույլ տալ ցեղասպանություններ, քանի դեռ կան բնաջնջման փորձեր, որոնք անտեսված, ժխտված և անպատիժ են մնում:

Ժամանակակից մշակույթի փոփոխությունները ցույց են տալիս մտքի գործունեությունը՝ ամեն անգամ ավելի բարդ ու ավելի անկայուն սոցիալական պահանջների ենթատեքստում, որտեղ Չարիքի Խնդիրը դա մարդկության խնդիրն էր և ոչ թե եզակի ներոտիկ մի խնդիր:

Այսօր մեզ համար ամեն անգամ էլ ավելի անհրաժեշտ է դառնում ընդարձակել այս զարգացումների նյութը՝ հաշվի առնելու համար հեռուստակոմունիկացիայի և ամեն տեսակի քոնության, տարածաշրջաններում տեղակայված պատերազմների կամ ջարդերի սրան ավելանում են անպաշտպանության և անկայունության հսկայական երևույթները հատկապես աշխատանքի շուկայում և տնտեսության մեջ, որոնք ծնում են անձի և ընտանիքի հոգեկանի փոփոխություններ, խեղաթյուրումներ և բախումներ: Բնականաբար, բոլոր այս նոր տարբերակները հետևանք են թողնում տեսական, կլինիկական և հոգեախտաբանական հոգեվերլուծության բոլոր կոնցեպտուալ դաշտերում: Նմանապես ծանրաբեռնում են դեռահասների սուզի աշխատանքը 1915 թ.-ի մերժված ջարդի:

Տրավմա և փոխանցում / Տրանսմիսիա տրավման:

Մասնակի փաստի փոխարեն մենք տրավման դիտարկում ենք ավելի շատ որպես կրկնման եղանակով պատահող մի իրավիճակ, երբ իր տեղի ունենալու երկար ընթացքում, ներգրավված սուբյեկտը չի ունեցել ոչ իրավիճակի, ոչ էլ իր իսկ մասին մտածելու հնարավորություն: Այդ պատճառով է, որ սեռականությունը սեռահասունացման ընթացքում գտնվողի համար դառնում է տրավմատիկ. իր կայացման ընթացքում նա շատ քիչ է կարող խորհել վրա հասած անատոմիական, հուզական և հոգեկան փոփոխությունների շուրջ, ոչ էլ ձևակերպել ինչ-որ դիտարկումներ իր սեփական անձի մասին:

Ինչ ասել այն դեպքում, երբ իր շուրջ ընտանեական ապագայում դեռ կան հետքեր, որոնք շարունակում են շրջանառվել, որոնց մասին խորհելն անհնար է եղել տեղի ունենալու պահին, որոնք աստիճանաբար երևան գալով փոխանցվել են մի սերունդից մյուսին: Բազմաթիվ դեպքերում խոսքը գնում է բացարձակ համր նշանների մասին, քանի որ վկաներն այնքան ընկճված են եղել, որ նրանց մտավոր ունակությունները սառեցվել են, կամ ինչն ավելի վատ է, կատարված փաստի և դեռահասի կողմից խորհրդատվության գալու պահերի միջև ընկած՝ ժամանակահատվածում ճշմարտությունը կեղծվել է ագրեսորների կողմից: Մեկ անգամ փոխակերպվելով ծանր բեռի՝ դեռահասը ժառանգում է ընտանեական և սոցիալական սպասումներ, որոնք օժտված են կարծրացած որակներով, գաղափարներով, հավատալիքներով, ընկալման եղանակներով, որոնք հզոր պահանջներ են լինելու և անելու: Որպես ուղեցույց գործող ես-ի իդեալի արժեքներից առավել, դրանք հանդես են գալիս խիստ հրահանգների և արգելքների տեսքով՝ սկիզբ առնելով կարծրացած և դաժան գերեսից:

Ռենե Դեկարտը 1637 թ.-ին սահմանեց, որ ինքնությունը տրված է ի սկզբանե և միշտ ստատիկ է մնում: 1968 թ.-ին Ժիլ Դելեզն առաջ քաշեց բացարձակ փախուստի մեջ գտնվող անձի գաղափարը, մի բաց ինքնություն, որը ձևավորվում է որպես

անընդհատ փոփոխվող բազմակի մի օբյեկտ: Այնպես որ տարբեր ուժերը, որոնք գործում են նախորդ փորձառության վերադարձի (ռիտօրնէլլօ) պահին, կը հանդիսանում են ժամանակի մեջ տեղակայված զարգացման ընթացքում, երբ մարդն առաջ է շարժվում ինքն իրեն կառուցելով: Այս առաջարկը կրկնությունը տեղադրեց երևակայության կատեգորիայում:

Անցյալի դրվագների պատմությունը հասկանալու այս ժամանակակից եղանակը պետք է մեզ տանի դեպի այն միտքը, թե որքան բարդ է Ցեղասպանության նյութը մշակելու պահին դեռահասի առջև դրված խնդիրը, և կրկնակի ծանր է դեպի էթիկական ու ստեղծագործ չափահասություն տանող գործընթացում այդ դեռահասներին ուղեկցող, կրթող և քաջալերող չափահասների բեռը: Իրականում իրենց ավագների հետ պատահած դաժանությունների մասին հարյուրավոր լուսանկարները և բազմաթիվ վիճակագրությունները երբեք նույնը չեն, նույն ազդեցությունը չեն ունենում տարբեր սերունդների վրա: Յուրաքանչյուր ընտանիքում, քաղաքում, երկրում, երբ խոսում են և փաստարկներ բերում, ապա առաջ են քաշում մի սինթեզ, մի տրամաբանություն, մի գիտակցական հյուսք են ստեղծում, որը կանոնավորում է դրվագները մեկ հաջորդականության մեջ և պատմություն կազմում: Որքան էլ թվա, որ խոսքը գնում է նույն «հազար անգամ կրկնված» պատմությունների մասին, երբեք «նույն բանը» չէ, քանի որ «ոչինչ նույնությամբ չի կրկնվում»: Դեպի 1915թ.-ի վաղեմության այս մասնիկները յուրաքանչյուր «վերադառ»-ի ժամանակ ունկնդրող և ընդունող դեռահասն աստիճանաբար կառուցում է ինքն իրեն և ինքնահաստատվում իր զարգացման ու իր հետ կատարվածի միջոցով: Այս եղանակով դեպի չափահասություն տանող գործընթացի ժամանակ յուրաքանչյուր դեռահաս իրեն բնորոշ տեսանկյունից կխորհի և կձևափոխի այն, ինչ իրեն պատմում են և փոխանցում, և մենք անկարող ենք հավակնել որևէ կրկնություն նույնական լինի Ցեղասպանության դարաշրջանի որևէ ենթադրվող առաջնային երևույթ:

Հիմնական հույզերը, որոնք միշտ ուժգնորեն միահյուսվում են հոգեկան ապարատում հետևյալներն են՝ **լքվածությունը, ինքնավստահության պակասն ու անէանալու վախը**, վերջինս կարող է հասնել մինչև «առանց անվան սարսափին» (Վ. Բիոն):

Այս մասնիկներից յուրաքանչյուրում ներգրավված է հոգեկան տրավմատիզմի նյութը և վերջինիս մշակման հնարավորությունը, ինչպես նաև խաղաղեցումն այն ամենի նկատմամբ, ինչ կորսվել է: Հակառակ դեպքում, եթե առավելությունը տրվել է սեփական կյանքը փրկելուն և գոյատևելուն, կատարվում է տրավմայի փակում: Հետևանքները նման են, եթե դժվար է եղել փրկել հոգեկան առողջությունը և չխելագարվել: Դեպքերի մեծ մասում ողջ Մփյուռքի հետագա սերունդները ստիպված եղան երկար պայքարել առանց մեղանխուլիային կուլ գնալու՝ կենսունակությունը փրկել կարողանալու համար, նույնը վերաբերվում է այժմ առանց հակասոցիալական վարքի դրսևորումների միջոցով ասելությանը, վրեժխնդրությանը և հիշաչարությանը կուլ գնալու՝ էթիկական միասնականությունը պահպանելու համար: Եթե դեպքերի զարգացման ժամանակ մշակման հնարավորություն չի եղել, ապա դրանք կփոխանցվեն ողջ իրենց դաժանությամբ, ինչի մասին համր նշաններն են խոսում: Այդպիսին էին թուրքական իրար հաջորդող երեք կառավարությունների կողմից իրականացված Հայոց Ցեղասպանության հետևանքների դեպքերի մեծ մասը, ինչպես որ դեռ այսօր կառավարության հրահրմամբ գործող մոլագար

քաղաքացիների կողմից ցուցաբերվող վարքն է. 1988-ին Ադրբեջանում Սումգաիթի ջարդերը, 2010-ին Ստամբուլում Հրանդ Դինքի սպանությունը: Ինչպե՞ս փոխհատուցել այս բոլոր իրադարձությունների վնասակար ազդեցությունը, ժխտումը, որն ամուր փակված է պահում սուգերը՝ դրանք դարձնելով հոգեախտաբանական, ինչպես որ սովորաբար պատահում է սերունդներ ի վեր փակ մնացած բոլոր սուգերի դեպքում:

Ի՞նչ է միջսերնդային սուգը:

Դա այն է, ինչ հոգեվերլուծության կողմից նկարագրվում է որպես դեպի անգիտակցական մղված նշանների կույտ և նախնիների կողմից ապրված հուզական բեռ ու նրանց կողմից կատարված կամ ապրված գործողություններ, որոնք զգալիորեն ազդել են իրենց ինքնության վրա: Քանի որ ժամանակին չեն մշակվել և խորհրդանշվել, դրանք անգիտակցական եղանակով փոխանցվել են հաջորդող սերունդներին: Այդ սերունդները շարունակում են ապրել ետևից քաշելով այս «խնդիրը», որն այս կամ այն տեսքով վերադառնում է իրենց կյանք: Կարծես, թե գործ ունենք մի դրամայի հետ, որը կայանում է չընդունված մահվան հետ, որը տեղի է ունեցել ընտանեական միջավայրի կենտրոնում անձի ծննդից առաջ: Դա սովորաբար պատահում է, երբ սուգը պարտադրաբար արգելափակվել է. այս մահերը չեն ընդունվել, իսկ իրենց կողմից ժամանակին պատճառած խորը ցավը չի գտել մշակման համար անհրաժեշտ ոչ տարածություն, ոչ էլ ժամանակ: Խուսափել են դրա մասին խոսել, վարվել են այնպես կարծես՝ ոչինչ չի պատահել, և սուգն իր ողջ հուզական բեռով ճնշված է մնացել:

Քարեկամական կապերը և տրանսմիսիան:

Դեռահասության ընկալումը որպես միջսուբյեկտային իրավիճակ՝ հնարավոր դարձրեց դրա դիտարկումը հոգեկան տրանսմիսիայի տեսանկյունից: Իրականում իրար հաջորդող սերունդների միջև հոգեկան շարունակականությունը, որն արտահայտվում է նույն տոհմաձառին պատկանելիությամբ, աշխատանք է պահանջում նույն ցանցի մեջ գտնվող սուբյեկտների հետ:

Տրանսմիսիան սուբյեկտի վրա իր հետքը կթողնի փոխակերպման և վերագրանցման բարդ գործողությունների միջոցով: Այս գործողությունները, վերածվելով մի ցանցի, պահպանում են ընտանեական միջսուբյեկտային դաշտը: Այնուամենայնիվ, միջսուբյեկտային բարդ դաշտը տեսականորեն դիտարկելու համար երկու հենարանները՝ նարցիստիկ երևակայականը և բարեկամական կապը, պետք է լրացվեն մոլումների հոսքով, որը խաղարկվում է մարմնական զարգացման միջոցով, անցնելով երոտիկ ասպեկտով, որն առանձնացնում է օբյեկտի ընտրությունը հասցնելով մինչև մանչուկի մոտ մոր կողմից հրաքրվող և էդիպյան դրամայում պայթող անհրաժեշտ էրոգենացմանը (Միլվիա Գոմել):

Որո՞նք են արձագանքները դեռահասների սուգերում:

Պատկերացրեք մի երիտասարդի ռեակցիան, որից սպասում են, որ նա սովորի հնազանդվել Օրենքին՝ հրաժարվելով ամենագործությունից և դիտորդի իշխանության կիրառումից, ինչպես նաև չձգտել մոլումների հաճույքներին, երբ մի կողմից չափահաս աշխարհն իրեն մատուցում է Մարդու իրավունքի պաշտպանության օրինակներ և մյուս կողմից՝ աջակցում ցեղասպանության ժխտմանը: Չափահասների աշխարհի կողմից կիրառվող բազմաբնույթ կեղծավորությունը կարևոր պարագա է հանդիսանում դեռահասի համար, մանավանդ, երբ այն դժվարեցնում է

անարդարության ռեֆլեքսիվ մշակումը և հրահրում պահանջատիրական ակտինգ-ատուների կամ էլ՝ որպես հակառակ ռեակցիա, իր ստեղծարարությունը աղքատեց-նող կարծր գոյացությունների: Պիերա Օլանիերը ասում է, որ եթե իրականության մեջ, մանուկ ժամանակ կամ ավելի ուշ, ի հայտ է գալիս մի իրադարձություն, որը բացառիկ կերպով պարտադրում է ֆանտազմատիզացիայի միայն մեկ տարբերակ, ապա տեղի է ունենում այսպես կոչված բախուման, տելեսկոպածի երևույթը (*télescopage*¹), որն անհնար է դարձնում երեխայի մոտ ռեպրեսիայի կազմավորումը կամ, եթե դա չափահաս է, ձախողում է ֆանտազմատիզացիայի համար անհրա-ժեշտ մշակման կազմավորումը:

Այս իրավիճակներում հոգեկան ռեակցիաները վրա են հասնում կախված ընտա-նեական կամ սոցիալական իրականության սցենայից և ոչ թե սուբյեկտի ցանկու-թյամբ, ինչը վերջինիս ստիպում է իր ստեղծարարության ծնունդը թույլ տալու փո-խարեն զբաղեցնել բացառապես հետապնդողի կամ հետապնդվողի դիրքորոշումը: Այսպիսով՝ դեռահասն իր կուռքերի ու իդեալների որոնման ընթացքում հեղափո-խականի սուրբ դիրքորոշումը որդեգրելու փոխարեն՝ սահմանափակվում է ինֆանտիլ դիրքորոշումով և ապահովություն ու երաշխիք փնտրում՝ կառչելով ընտանեական նորմերին ու իդեալներին (ծնողներ ու տատիկ-պապիկ – բախում, տելեսկոպած): Գրեթե հակառակ եղանակով նա կարող է նաև ձգտել դեպի կեղծ-չափահասի սուբյեկտիվության՝ անգիտակցորեն իդենտիֆիկացվելով կյանքը փչաց-րած կամ կոտորված նույն սեռի ծնողի կամ մեծ ծնողի, կամ նախնիի ծրագրին:

Իր կեղծ-տարիքի հետ միասին լիակատար չգիտակցված անտեղյակության մեջ գտնվող երիտասարդը խուսափում է իր սեփական ծրագիրը հորինելու հոգեկան աշխատանքից, ինչն իրեն տարբեր կդարձնե իր ավագներից: Բազմաթիվ երիտա-սարդ հայեր՝ 1915 թ.-ի Ցեղասպանության որբերի թոռներ և ծոռներ, շատ քիչ բան գիտեն իրենց տատիկ-պապիկների մասին և չգիտեն՝ ինչպես երևակայել այս դա-տարկ պատմությունների շուրջ:

Մարմինը

Մենք գիտենք, որ մեր ծննդից ի վեր, մարմինը կարծես մի տախտակ լինի, որի վրա գրանցվում են ամենաարխայիկ փորձառությունները: Դրանցից բոլորը չէ, որ ենթակա են մշակման: Դրանք, որոնք կարճ ժամանակի ընթացքում կարող են ստեղծել զգալի խթանում, դառնում են տրավմատիկ, ինչպիսին են ժառանգական հիվանդությունները կամ այն հիվանդությունները, որոնցով տառապում է մանչուկն իր կյանքի առաջին տարիներին՝ առանց կարողանալու դրանք պատմության տես-քով արտահայտել: Նույնը կատարվում է ավելի ուշ ապրված փաստերի հետ, որոնք

1 Անձանց հոգեկան ժառանգության մեջ կարևոր է հաշվի առնել տարբերությունը միջսերնդային տրանս-միսիայի (այն ինչ անմիջականորեն ծնողներից են սովորում) և տրանսսերնդայինի միջև (այն ինչ գալիս է երեք սերունդ ի վեր): Տրանսսերնդայինի մեջ է ի հայտ գալիս բախումը՝ տելեսկոպածը, որը կայանում է նախորդ սերունդներում կազմված և հետագա սերնդի ներկայացուցչի մոտ տրամաբանական բացա-տրություն չունեցող ախտանիշի տեսք ստացած ինֆորմացիայի յուրացման մեջ: Այդ դեպքում ասում են, որ սուբյեկտը կապակցող անգիտակցական իդենտիֆիկացիա է կատարում որևէ նախնիի հետ: Այդ նախնիի և սուբյեկտի միջև գոյություն ունի ժխտման պայմանավորվածություն, որը կնքվել է հենց այդ սուբյեկտի կողմից՝ ելնելով ծնողներից մեկի նկատմամբ ունեցած սիրուց, ով ինքն ունի ինչ-որ մի դամ-բարան (զաղտնիք) և նաև հանդիսանում է ինչ-որ ֆանտազմի ժառանգորդը: Ախտանիշը կրող սուբյեկտն անգիտակցորեն փորձում է բացահայտել մինչ այդ պահպանվող գաղտնիքը և դրանով վերջ տալ ընտանեական տառապանքին: Դժբախտաբար մեծմասամբ դեպքերում այն, ինչի նա կարողանում է հասնել, դա պատմության կրկնությունն է՝ իրենից բխող բոլոր դժբախտություններով:

այնքան ուժգին և վտանգավոր են եղել, որ անհնար է եղել դրանց մասին խորհել ո՛չ սկզբում, ո՛չ ընթացքում, ո՛չ էլ հետո: Այս փաստերը երբեք սուբյեկտի պատմության կամ կենսափորձի մաս չեն կազմում: Դրանք կցված և զուգորդված են մնում հնչյունների, հոտերի, զգայական և մարմնական տպավորությունների հետ, որոնք ձեռք են բերում հայտնիաստոր բնույթ, երբ կրկնվում են ներկայում: Այսինքն անգիտակցականում խոսքերը և դրանց հնչողությունը, որպես լիբիդինալ փոխակերպում, անբաժանելիորեն միացած են մնում մարմնում տեղակայված հաճույքին կամ տառապանքին: Եթե խոսքը գնում է տառապանքի մասին, ապա նրանք համր են մնում: Դա էր անապատներում տարահանումների կամ կոտորածների ընթացքում բազմաթիվ ապրումների ճակատագիրը: Հաշվի առնելով տրավմատիկ հիշողության այս բնութագրերը՝ **փայլուն հետազոտություններ**, ինչպիսիք են քնի և արթուն վիճակի միջև անըջային գիտակցության վիճակները, որոնք հասանելի են դարձնում տրավմատիկ կրկնողությունների մեջ առկա հոգեկան ամենավաղ մակարդակները, ինչպես որ փրկվածների մոտ է: 80-ականներին Բուենոս Այրեսի Հայկական կարմիր խաչի թոշակառուների տանը (H.O.M.) իրականացվող երրորդ տարիքի հոգեբանական խնամքի շրջանակներում հիմնականում Կիլիկիայի կոտորածներից փրկվածների հետ իրականացված բազմաթիվ խորհրդատվությունների ընթացքում ես անձամբ վկա եմ եղել նման պայծառացումների:

Ըստ Պ. Օլանիէյի, դեռահասի հիմնական խնդիրը ինքնակենսագրական հիշողություն կառուցելն է: Ինչպես պատմականացնում է իր մանկությունը, նույնպես կարևոր է պատմականացնել այն ինչ լսել է ծնողներից և մեծ ծնողներից: Ուրեմն կարիք կա նրան քաջալերելու և օգնելու, որպիսի չխուսափի տրավմատիկ հիշողություններից և պատմություններից, ինչին նա հակված է, չգբաղվի միայն իր անմիջական ներկայով, արժեզրկելով հիշողությունն ու կոլլեկտիվ վերականգնումը, ինչպես լռության սոցիալական դավադրությունների դեպքում: Ժխտումը և **լիակատար ռեպրեսիան** նույնքանով, որքան **անվերջ վերհիշումը**, ստերիլ այլընտրանքներ են դառնում, որոնցից հարկավոր է խուսափել երիտասարդների հետ զրույցի ժամանակ, ինչպես նաև կոլեկտիվ հիշողության մեջ, որ ավելի շատ ուղղվենք դեպի ապագան: Չափից դուրս ճնշումն աղքատեցնում է կապեր հաստատելու կարողությունը, հույզերից զուրկ մի անցյալի պատմություններով: Հակառակ դեպքում՝ ճնշման բացակայությունը տանում է դեպի նույն ռացիոնալ ուրվագծի կրկնմանը, ինչն էլ խոչընդոտում է որևէ հնարավոր զարգացմանը: Դա կատարվում է, երբ կոնկրետ իրադարձություն չի փակվում և չի կազմավորվում որպես անցած իրադարձություն: Դա բերում է նրան, որ լիբիդինալ կապիտալի մի զգալի մաս կցված է մնում նույն բանի կրկնմանը: Այդ հետևանքը հիմնական հուզական նախապաշարմունքներից է, որի պատճառը թուրքական կառավարության և նրան աջակցող մարդու իրավունքների պաշտպան որոշ երկրների կողմից առաջ տարվող ժխտումն է:

Ավանդույթը համատեղում է եզակին հարատևի հետ:

Գրականություն

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում իրականությունը հոգեվերլուծության համար: «Անհարմարավետությունը մեր մշակույթում», 1986, ԱՀԱ-ի 1994 թ.-ի հանդես, 4, գլուխ LI, նվիրվում է Վիլլի Բարանդերին: Հոլոկոստից փրկվածների հուզական հիշողությունը: Բանավոր վկայությունների որակական ուսումնասիրությունը, Ռոբերտ Կրաֆտ, տպագրված «Memory and Emotion»-ում: Բանախոսականներ՝ Դ. Ռեյսերգ և Պ. Հերտել: New York, Oxford University Press, 2004, էջ 347-389:

Асбед Арян

Член психоаналитической ассоциации Буэнос-Айреса, член Аргентинской, Международной и Южно-Американской ассоциаций

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ И ПАТОПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ГЕНОЦИДА

Ключевые слова: геноцид, отрицание, подросток, скрытое горевание, трансгенерация.

Каждый человек, в отличие от животных, должен на символическом уровне определить свою сексуальную, социальную и политическую субъективность, даже если отправной точкой являются анатомические и гормональные параметры. Молодой человек должен проработать эту сложную задачу, начиная с периода полового созревания и в течение всего подросткового возраста. В период своего развития он должен, соответственно, вернуться к непроработанным трансгенерационным травмам, чтобы они не препятствовали его развитию, при этом имея возможность думать о них и делая их частью своей личной истории. В случае отрицания геноцида, мы должны принять во внимание “скрытое горевание”, т.е. не только личные, но и трансгенерационные травмы, которые происходили в контексте культурных изменений на протяжении всего XX века.

Asbed Aryans

Member of Buenos Aires Psychoanalytic, Argentina, International and Latin American Psychoanalytic Associations

SOCIAL-PSYCHOLOGICAL AND PATHOLOGICAL CONSEQUENCES OF GENOCIDE

Key words: genocide, denial, entrenched mourning, adolescent, transgenerational.

Unlike animals, each individual must define its sexual, social and political subjectivity within the symbolic level, although always depart of the anatomic-hormonal. The youngster will begin this complex task especially since puberty and continue throughout adolescence. However, during this development and the future adult will also have to return concomitantly not only to the traumas of childhood, but also to the trans-generational relationships not prepared so that they will no longer function as obstacles and can think and transform them into personal history. As in the case of a genocide denial we will have to take into account the effect of the duels entrenched, it is no longer only the personal but the trans-generational relationships, all crimped on cultural changes throughout the twentieth century.

Nane Movsisyan

Faculty of Philosophy and Psychology, YSU

PhD student of the Department of History of Philosophy

Scientific Supervisor Seyran Zaqaryan

monane@yandex.ru

THE ANALYSIS OF ARMENIAN AND TURKISH IDENTITY IN THE CONTEXT OF GENOCIDE

Key words: *Identity, genocide, morality, Islam, Christianity.*

The Armenian Genocide is a combination of social-political, economic and historical factors, and it seems that above mentioned is entirely sufficient to describe massive extermination of Western Armenians, but in order to understand political freedoms of Armenians and Turks as well as to understand the ideas of Pan-Turkism, first of all, it is necessary to explore the metaphysics of these two identities. Thus, who is a Western Armenian and who is a Turk? What kind of spirit and soul do these peoples have? What is their “starved world”? Let us start our discussion from analysing the mentality of these two nations.

Mentality. When creating the image of the world each nation uses a certain epistemological method through which it gives a certain meaning to the signs of reality. According to Oshakan, Armenians created the image of the world as an artist which suggests cognition of things and phenomena according to their essence. It is no accidental that Oshakan emphasizes Armenian music rather than religion as the reflection of Armenian identity where the former expresses the emotions and the outlook of people. As Nietzsche states “Folk songs are the musical image of the world... And the music is Will since in order to express it thoroughly it is necessary to use passion in its all movement from whisper to madness.”[1, p. 195-198]. Creation of music, in essence, is the complete expression of that people’s emotions. Armenians are emotional and romantic and as Oshakan states Armenians are famous for their church Hymns that, to a certain extent, express the image of the world given by spiritual cognition. Armenian spirit has been vigorous for art – temporal and spiritual music, “imagination of pacifying the Heaven and the Earth” and Harmony and aspiration for Peace through this. “Kindness, Gentleness, Humility and Belief: these are affective Beauties from abyss of our captivity. And you deny our Greatness to serve these Beauties in such harsh conditions. We are those who are close to East with our seriousness, our sadness and our Light towards art” [2, p235]. An Armenian is idealist and emotional and, in some sense, he bears all universal aesthetic perceptions, becoming valuable in spiritual sense, but, at the same time, he is infertile in social reality. It seems Oshakan sees Armenian tragedy in its emotional colorfulness and abundance mentioning “The perception that our tragedy is ingrained in the depth of our sensational abyss is not false at all”[3, p. 87].

Oshakan's perspective of the differentiation of the Armenians and the Turks becomes complete by Hayk Asatryan who mentions that the Armenians and the Turks are contrasts. "An Armenian is worthwhile with his depth; while a Turk is worthwhile with his surface. The former is high thanks to his Essence, while the latter is high by the means of his expression "[4, p.55].

A Turk as opposite to an Armenian is more realistic. He had to appropriate what belonged to foreigners during all his history. Thus, a Turkish researcher Ayşe Hür mentions that when the ideologies of "Osmanism" and "Islamism" started not to justify themselves any more, the idea of "Turkism" took the first place. This means that "the revelation of Turkish nation" started. Until the 19th century, the Turk and the Osman were indifferentiable terms. Moreover, being a Turk was not honourable at all and it was even "something undiscovered and unknown in the history", but "It took a short time for the soldiers who considered being a Turk as something reproachable to start shouting out loudly "I am proud to be a Turk", thus establishing nationalism which is based on national nihilism; that is, forcefully denying others for approval of selves"[5]. The path of denial was smooth since as Oshakan truly mentions that being a Turk means to obtain the right by all means. And the "New Turk" renewed his consciousness (according to Oshakan's words, renewed his brain) before renewing his culture.

Coming from general to specific, it should be mentioned that the essential features of our identity highlighted by Oshakan, the idealistic perception of world, music, and poetry are opposed to the materialistic world perception adopted by the Turks. These two world perceptions are determined by the ideals of two nations on nation, state, and homeland. The Armenians are not a political nation which assumes a state mindset (rule of public interest), existence of diplomacy and political experience as opposite to the Turks who are keen here. Although in terms of political skills Armenians lose, they have an obvious advantage in term of mental, moral values such as culture, language and religion.

Moral ideal: Discussion of religion within the framework of identity. Each nation has different perceptions on Kindness, Beauty and Truth that are formed due to different factors. Religion is one of them. The role of the latter is also important in the national identity formation. Christianity and Islam are completely different by their ideologies. Let's turn to perceptions on morality by which the representatives of each religion are differentiated, thus trying to discover the identities of both nations. The first difference is that there is no concept of original sin in Islam. A human being is not born sinful. Committing sin in Islam means to disobey Allah's will, while in Christianity it implies the disruption of connection with God which is reflected in deterioration of a human soul. Considering this within the framework of national identity, it turns out that it has a huge impact on the outlook formation. It is one thing to be sinful initially and it is another thing to be completely free from sin. Allah doesn't have a transcendent essence in Islam; while in Christianity, each individual that is capable of ceaseless self-improvement aspiring to perfection is considered as a value. In Christianity, each individual is possessed of free will as opposite to Islam in which case everything is initially predetermined. That is, there is lack of freedom of such activities that express individual will and outlook that probably oppose general will. The whole community is responsible for a sinful person; while this

type of perspective is excluded in the Christian doctrine. In our case, everyone is personally responsible for his/her deeds.

A human being is a value himself who has the right for both making mistakes and regretting which doesn't exclude the possibility of starving from moral breakdown to moral perfection. In Islam, a human being is integrity of public relations; while in Christianity, he is a result of a personal achievement. In Islam, the responsibilities of a person is limited to only following Sharia (true way which is expressed in obeying the laws set up by Allah), but in Christianity a person is looking for God all his/her life trying to repent. Allah does not communicate with people since he is the Lord and a human being is a servant. Within the framework of a human being-God and a human being-a human being relations, the idea of Love is differently interpreted. If in Christianity God is Love, in Islam, the most important thing is following Allah's laws. Loving Allah is not essential at all. One should not love his/her enemy, but he/she should be eliminated; while in Christianity there is no difference between an enemy and a relative. In Christianity, to Love means to love a person regardless his/her religious, cultural, linguistic or political characteristics. Moreover, in Christianity Love is the power that might change the enemy and make him/her better. As truly stated by A. Meyen "Contemplating on them (i. g. the Armenians) I could understand their way of resistance to Tyrannies. Their behaviour is not to attack"[6, p.25]. Islam, in this sense, manifests intolerance towards other faith adherents, mentioning that when meeting another faith adherent one should put to the sword and be brutal to them.

The next most important consideration is that in Islam, God's will and the will of the head of the state are identical which is not the case in Christianity. One of witnesses of Armenian slaughters, Sheik Feiz Hussein tells the story of two people, a Turk having killed a lot of Armenians and his friend. "Why do you reserve the right to kill people whom Allah prohibits to kill?" asks the friend. The murderer answers, "The sultan has ordered and sultan's order is Allah's order and it is my duty to follow it"[7, p.53]. In this case, the religion becomes unity and it becomes a means to maintain and develop "national ideology". One of the essential terms in Islam is obedience. Within the framework of religion and belief relationship "Allah requires from humanity obedience rather than belief. God is one and it is easy to believe in God, but the difficult thing is to obey" [8, p. 46].

Social-political perspective: Armenian slaughters already started in the 19th century which is accepted to call Armenian Enlightenment. This period is breakthrough both from Armenian identity perspective and from social-economic perspective. Speaking about the social-economic and political situation, it should be mentioned that the historical situation of the Armenians was hard. Western Armenia was under the rule of Ottoman Turkey, and Eastern Armenia was under the rule of Persia. On one hand, it was Turkish despotism; while, on the other hand, it was Persian one. In Western Armenia, the Armenians were living under the rule of the Ottoman Empire and were deprived from even elementary rights. The taxes for a villager for the harvest got from cultivated land were too high. They were derived from the right to witness in courts. Although the document called The Tanzimât was supposed to establish equality among the subject peoples, the Armenians were subject to not only economic, but also religious persecutions. This topic is discussed in Raffi's works. Besides paying land taxes the Christian subjects of Ottoman Empire were

paying a poll tax. To relieve this situation a group of Armenian students having studied in France based on Belgian Constitution compiled a charter related to Armenians (N.Rusikyan, S. Vichenyan, G. Otyan and others) that was called "National Constitution". The latter has 150 articles according to which a National Assembly (judicial) and national central department (executive body), national religious assembly (regulating religious affairs) and political assembly (regulating secular affairs) as well as educational, community councils were to be formed. The National Constitution enacted until 1896 not leading to considerable changes in Western Armenians' lives. Therefore, in order to relieve the burden of the inextricable conditions of Armenian people, some other alternative programs were suggested one of which was liberation via revolution. The ideas of revolution were differently interpreted by different political parties like revolution via education, diplomacy, mentality, and weapons. Khrimyan Hayrik, Raffi, Gr. Artsruni, and M. Nalbandyan were sceptic about the promises of big states and urged to start more strict actions. A "Paper Ladle" cannot resist the power of an "Iron Ladle". Therefore, it is required not to serve the Turks faithfully, but to get protected, and the only way of protection is revolution. Armenians expect assistance from big states; instead, they get political uncertainty. "Armenia needs a solution; while England provides a speech".

In this social-political situation, Armenian Revolutionary Federation (ARF) undertook dramatic steps. In 1890, the Armenian Revolutionary Federation Party with its "Droshak" official journal was set up which aimed at getting political freedom by a revolution. Homeland, political freedom and state - these were the landmarks by which people from the Revolutionary Federation were led. As it was presented in national liberation program of ARF, they aimed at analyzing the existing situation in order to find out the means of elimination of Armenian people's sufferings. The ARF members considered meaningless to hope that England, France or Russia will assist Armenia to gain political independence since they were oppressors as well and their goals were pragmatic. Therefore, the only solution was to fight against Turkish government. After getting rid of Turkish domination, the ARF members planned to eliminate economic inequality. They required to create a collective ownership, collective work; in other words, "revolution of proletariat". ARF aimed to obtain political and economic freedom which suggested freedom of speech, media and meetings, presence of means for contributing to people's mental development and equality of nations and beliefs before the law as well as an equal distribution of land. In order to fulfil these goals ARF implemented tools such as organizing revolutionary groups which were supposed to fight against Ottoman governance for the sake of political and economic freedoms, by arming these groups, organizing fundraisings, and raising the fighting spirit of the people. Basically, the final goal of the Federation members was political freedom and economic equality. Leaving aside the social-political and economic hardship let us emphasize the program of the Federation in the context of Armenian identity. How attractive the ideas of liberation and economic equality would not sound, the final result depended on the persuasion and activeness of the implementing subjects. The first point missing from the just aims of the Federation members was whether the Turkish Armenians were ready for political freedom, and Fayeze Hussein negatively answered this question mentioning that the Turkish Armenians did not want political freedom since obtaining it, their condition would get worsened.

The whole history of the 19th century proves this thesis. It is not accidental that the enlighteners were trying to change Armenians' self-consciousness making them demanders. It is proved by the lines mentioned in the historiography of ARF. The second most important problem was that the Federation didn't take into account that individualism prevailed over collectivism in Armenian identity. Yes, having three or even more parties among five Armenians was a necessary condition which this was not an exception in the case of the Federation as well. The parties varied not only by their names, but also by their political programs and ideals. As a rule, no side was winning during the race of parties. The goals of the Hunchakian Party were different and the goals of the United Armenians were different and again those of the Federation were different. The next point that makes the Federation program rather doubtful is overestimation of moral and underestimation of physical power. "We are facing it with our weak physical power, but, at the same time, with great moral power. This is how all nations' history was created", announced the Federation members[9, p.13]. One of the most important preconditions for the Federation members was physical power rather than moral power. Besides, the perceptions on moral varied as well, especially regarding to religious views. What the Federation members considered as great moral power the opponents considered as a misery. What we as Armenians consider as tolerance, the opponent may consider lack of diplomacy and so on and so forth. And the history of the Federation representatives is one of evidences of this. In 1898, while continuing the slaughters, the Turkish government called the representatives of the Federation for negotiations. In this case, it is vague what Federation members expected; that is, whether or not they expected that slaughters would have no continuation.

The elementary claim of Federation members that Turkish government had to allow the Turkish Armenians safely to come back to Eastern Armenia was not fulfilled. Moreover, the slaughters continued with a new vigour. In addition, the Federation representatives were attacked not only by Turks, but also by Russians and they were fighting against both inner and outer enemy. It is not difficult to predict the Federation could not resist in the case of strong inner and outer enemies; especially when they were split inside their party as well. In 1907, the Federation started completely to become weak. Tsarist Russia which had the trust of many Armenians and was praised by Abovian displayed extreme intolerance towards the Federation members and required to execute "the strictest and harshest means" towards them calling them political criminals. The conclusion that Armenian slaughters happened due to revolutionary ideas is not accepted by Christapor Mikaelian. He denies this perspective at the end of his book called "Crowd Logic" considering it as an expression of crowd logic. According to him, "After this consequently due to this" thesis is not true in the case of the Armenian Genocide. Ch. Mikaelian points out such reasons as economic and political taking account of which the Turkish government carried out the Armenia Genocide. Actually, he considers the activities of the Revolutionary Federation as something legal and relevant since only a revolution could break the silence that according to him, foresees a moral fall.

During the same period, the social-political hardship, massive slaughters were going on in Turkish Armenia and as a result of this the Armenians were abandoning their places leaving their whole property. In this case, another dimension of Armenian slaughters

which is robbery with massive possession of the Armenia property should be mentioned as well. This dimension is not ignored by Toynbee as well. The latter mentions that the Armenians were good merchants and were diligent people. "They were quite rich... They left the Turks their whole property being able neither to sell nor take anything with them. They had no time for it" [10, p. 43-44]. A. Toynbee's those considerations that are closely related to the 19th century are very typical. Discussing the Armenian Genocide of 1915, Toynbee mentions that it was not based on religion, but it was due to adoption of Western liberation ideas by the Armenian people. Besides, being receptive to social changes, the Armenian people were appropriating civilization achievements quickly due to which they became dangerous for the Turkish people. Comparing the Armenians and the Kurds, Toynbee mentions that although they are an old tribe as well, they never became civilized; while the Armenians have intellectual abilities, and, at the same time, highlight the role of school and are skilled businessmen. Therefore, Toynbee's considerations render that Armenian massive slaughters were due to enlightenment ideas which is not supported H. Gevorgyan's perspective at all. The latter believes that the reason for the Armenian Genocide was not adoption of Western values, but the policy and behaviour of the Turkish government having been implemented for years.

The ethical and social-political perspective of the Armenia Genocide has been accomplished by H. Asatryan. He writes, "The Turk is the opposite of the Armenian. It is biological weakness and hunger of power, untalented spirit and political will, unclean heart and attractive language, goofy mind and addiction to discipline, sense of fear and addiction to destroying. The Armenia is worthwhile with his depth, while the Turk is worthy with his surface. The former is worthy by his essence, while the latter is worthy by his way of expression. The Armenian is a magnificent tribe, while the Turk is a low tribe while being a wonderful people. What social-political, ethical and historical factors affected the extermination of the Turkish Armenians is only the extrinsic side of this phenomenon. There is also an intrinsic side which is a combination of religious, mentality and historical factors. As in the case of all nations, we have heroes, cowards, traitors as well as devotees, and to unite all of them a united ideology should be developed by taking into account all advantages and drawbacks of our nation.

Differentiating ethical, social-political, mentality perspectives in the multidimensional fact of the Genocide, it is hard definitely to state that national problems started subverting Armenians when they were not ready to resist them morally, physically or with their self-consciousness. It is hard to accuse the Federation for short-sightedness, some political interests or for political bargains that were not transparent. They are only elements in the causal chain and not the main reasons. It is necessary scrupulously to analyse the elements in order to reveal the causal chain. Now we deal with occurred Genocide which should make us reconsider the gaps in our history in a very diplomatic way. The history hides the intrinsic essence of events like the body hides the soul. Our task is not only to know, but also to feel our history while having ourselves as an object of our observations. Therefore, we need not list the facts while making a hermeneutical analysis, but rather psychologically and historically to regress the period when it happened. Those peoples who are able to overcome themselves live (H. Asatryan).

Bibliography

1. F. Nietzsche, The Birth of Tragedy from the Spirit of Music, Hellenism and Pessimism. Moscow, 2011.
2. Oshakan H., Mnacordats, Third Tome, Antelias, 1988.
3. Oshakan H., Ibid.
4. Asatryan H., Wake up, Armenian, Yerevan, 2004.
5. Ayşe Hür, From “Barbarian turk” to “Muslim turk”. <http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-turkey-ar/from-barbarian-turk-to-muslim-turk-armenian>
6. Meye A., Letters from Armenia and Tbilisi, Geneva, 1891.
7. Guaita D., Sheikh Favez Al-Hussein about Armenian Genocide: Moscow, 2007.
8. Prothero S., The Eight Rival Religion that Run the World, Moscow, 2013.
9. History of the Armenian Revolutionary Federation, Tome I, Athens, 1984.
10. Toynbee A. J., Armenian atrocities: The murder of a nation, New York, 1975.

Նանե Մովսիսյան

*ԵՂՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
փիլիսոփայության պատմության ամբիոնի ասպիրանտ
Գիտական ղեկավար՝ Սեյրան Զաքարյան*

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՈՒՐԳԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՔՍՏՈՒՄ

Հանգուցային բառեր՝ ինքնություն, ցեղասպանություն, բարոյականություն, իսլամ, քրիստոնեություն:

Հոդվածում հայոց ցեղասպանությունը քննարկվում է երկու ազգերի ինքնությունները վերլուծելու միջոցով, որն ընդգրկում է հոգեկերտվածքային, բարոյագիտական և սոցիալ-քաղաքական տեսանկյուններ: Հոգեկերտվածքային վերլուծությունը վեր է հանում երկու ազգերի հոգեկերտվածքային նմանություններն ու տարբերությունները: Բարոյագիտական տեսանկյունը ենթադրում է նաև կրոնի վերլուծություն: Իսլամը և քրիստոնեությունը երկու տարբեր կրոններ են իրենց սկզբունքներով, ինչը մեծ ազդեցություն ունի ազգային ինքնության ձևավորման գործում: Սոցիալ-քաղաքական տեսանկյունը Հայ հեղափոխական դաշնակցության ծրագրի վերլուծությունն է՝ հիմքում ունենալով երկու ազգերի բարոյագիտական և հոգեկերտվածքային վերլուծությունը: Հեղինակը, վերլուծելով ցեղասպանության բազմաշերտ իրողության նշված տեսանկյունները, փորձ է կատարում վեր հանել ցեղասպանության պատճառները:

Нанэ Мовсисян

*Факультет философии и психологии ЕГУ
Аспирант кафедры истории философии
научный руководитель Сейран Закарян*

АНАЛИЗ АРМЯНСКОЙ И ТУРЕЦКОЙ ИДЕНТИЧНОСТИ В КОНТЕКСТЕ ГЕНОЦИДА АРМЯН

Ключевые слова: *идентичность, геноцид, мораль, ислам, христианство.*

В статье рассматривается тема Геноцида армян посредством анализа армянской и турецкой идентичности. Анализ включает в себя психологический, этический и социально-политический аспекты. Психологический анализ выявляет сходство и различие психологии армян и турок. Этический аспект предполагает рассмотрение вопросов религиозного характера. Ислам и христианство - разные по своим принципам религии, что накладывает свой отпечаток на формирование национального характера армян и турок. Что касается социально-политического аспекта, то в этом плане в статье проанализирована программа Армянской Революционной Федерации Дашнакцутюн. При этом за основу принят анализ психологического и этического аспектов. Анализируя вышеперечисленные аспекты, автор пытается выявить причины Геноцида армян.

Արթուր Կոբեկյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դոցենտ
arturkobelyan@rambler.ru

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Հանգուցային բառեր: *ցեղասպանություն, էթնիկական անհանդուրժողականություն, էթնիկ բռնություն, հոգեբանական վերագրում, թերաթեքության զգացում, քսենոֆոբիա:*

Էթնիկական անհանդուրժողականությունը, հասնելով ներքին զարգացման գագաթնակետին, սկսում է հանդես գալ արդեն կոնկրետ վարքային դրսևորումներով, որոնցից հատկապես սարսափելի է բռնությունը: Իսկ ինչ է իրենից ներկայացնում բռնությունը: Բռնությունը վարքի այնպիսի համալիր է, որի մեջ բացակայում է բարոյականությունը՝ դիմացինին հավասար ընդունելու կարողությունը: Այստեղ պարադոքսն այն է, որ բարոյականությունը մարդու մենաշնորհն է, «Գեր Ես»-ի առանցքն ու պարունակությունը, այնուամենայնիվ, բռնությունը՝ լինելով բարոյականությունից դուրս, բնորոշ է միայն մարդուն և մարդկային հանրությանը, իսկ կենդանական աշխարհում իշխում է բնագոյային անհրաժեշտությունը, որը ոչ մի կերպ չի կարելի ամփոփել բարոյականության կատեգորիայի տակ՝ նույնացնելով բռնության հետ, այստեղ իրականում ռացիոնալության ոչ մի ընդհանրություն չկա: Անկասկած, ագրեսիվության նման չարորակ դրսևորումները սոցիալ-հոգեբանական կոնկրետ նախադրյալներ ունեն: Ընդհանուր առմամբ, մարդու կողմից մարդու նկատմամբ ագրեսիան կարող է բացատրվել որպես հետընթաց՝ դեպի հոտային բնագոյային-ագրեսիվ վարքագծի ավելի վաղ ձևերին:

Ագրեսիվությունն ու բարոյականությունն իրարամերժ հասկացություններ չեն: Սակայն մյուս կողմից, ինքդ քեզ ու քո նմաններին ուրիշների ագրեսիայից ու բռնությունից պաշտպանելը կարող է և պետք է ընկալվի որպես զուտ բարոյական նորմ: Միայն այդ դեպքում նման ակտիվությունն ագրեսիա չի անվանվում, թեպետ, խիստ ասած, դա նույնպես ագրեսիա է, որն ամրապնդված է անհրաժեշտությամբ և բարոյական պարտքով:

Սոցիալականությունը քաղաքակիրթ հասարակության գերազանց բնութագիր է, որին հասնելու համար անհրաժեշտ է հաղթահարել մարդու հոգեկան զարգացման մեջ վայրենության աստիճանը: Այդ իսկ պատճառով, բռնության, առավել ևս զանգվածային բռնության մեջ, մասնավորապես՝ ցեղասպանության մեջ երևում է հետընթաց դեպի վայրենություն: Հենց այս առումով, ամեն հասարակություն և ամեն էթնոս չէ, որ կարող է հավակնել սոցիալականության և կոչվել քաղաքակիրթ: Էթնիկ հանրությունը, որն ունակ է ցեղասպանության, տառապում է բարոյական ապուշությամբ, հայտնվել է բարոյական փակուղու առջև: Սա խոսում է մասնավորապես

ապրումակցող սկզբի բացակայության և, ընդհանուր առմամբ, «homo sapiens» տեսակի հետ նույնականացման ընդունակության բացակայության մասին: Այս պաթոլոգիան շատ ավելի սարսափելի է, քան կարելի է պատկերացնել առաջին հայացքից: Այն դուրս է գալիս ագրեսիայի բնութագրերից, քանզի սա սոսկ ագրեսիա չէ. Այն կողմնորոշված է մի ողջ խմբի դեմ, իր նմանի, իր տեսակի դեմ՝ միտում ունենալով բնաջնջել ու վերացնել այդ իսկ տեսակը:

Կարծում եմ, ցեղասպանությունն այն միակ և ծայրաստիճան երևույթն ու գործընթացն է, որը բնորոշ է մարդուն, և բոլոր հիմքերով կարող է կոչվել ամենաանմարդկայինը: Նպատակ ունենալ վերացնել մի ամբողջական էթնոս, մշակույթ, որը ձևավորվել է դարերի ընթացքում, և կոչվել մարդկային, կարծում եմ՝ սրանից առավել սարսափելի է ոչինչ չի կարող լինել:

Նման վարքը, որ կիրառում է միայն մարդը, չի կարող կոչվել մարդկային և բնութագրել բարձրագույն զարգացվածության հասած տեսակին՝ մարդուն: Նման մարդկային հանրույթը, չնայած մարդկային հանրույթ հասկացությունն այս ենթատեքստում եզրութաբանական ճոխություն է, էլ ինչպես կարելի է կոչել, եթե ոչ՝ հիվանդագին: Վիրավորած կլինեմ այն համեմատելիներին, եթե նման խմբին համեմատեմ կենդանիների կամ այլ, անգամ ցածրագույն էակների հետ, որոնք հայտնի են բնությանը և կազմում են այն: Բնությունն այն կատարյալ ու անթերի վիճակն է, ուր յուրաքանչյուր դրսևորում իմաստավորված է և բխում է անհրաժեշտության սկզբունքից, որի ամեն մի օղակ իր բնութագրով անփոխարինելի է և անհրաժեշտ ողջ շրջանառության համար: Այս իդեալական շղթայից, եթե պոկենք ցեղասպանություն իրագործածներին, համոզված եմ, որ բնությունը, այդ թվում նաև մարդկությունը ոչինչ չի կորցնի, եթե, իհարկե չշահի: Ցանկացած հիվանդագին (պաթոլոգիկ իմաստով) երևույթ անհրաժեշտ է արմատախիլ անել՝ նպատակ ունենալով փրկել մնացած առողջ մասերը, որովհետև, ինչպես հայտնի է, հիվանդագին երևույթները տարածվելու միտում ունեն, իսկ այդ միտումը վերացնելը փրկություն է, և դա կարելի է անել այն քննադատելով, նրա հանդեպ անհանդուրժողական վերաբերմունք դրսևորելով ու վերջիվերջո մարդկությանը՝ որպես բնության իննատիպություն, նման կերպով փրկելով:

Ցեղասպանության հիմքում ընկած է նաև վերագրման (պրոյեկցիայի) հոգեբանական գործընթացը, երբ մեկ այլ խմբի նկատմամբ ատելությունը բացատրվում և ռացիոնալիզացվում է նրանով, որ վերջինս էլ մեզ է ատում:

Այս պարանոյալ ձգտմամբ փորձ է կատարվում շրջանցել սեփական պատասխանատվությունը: Համաձայն հոգեդինամիկ մոտեցման, ցանկացած ագրեսիայի հիմքում ընկած է ինքնաագրեսիայի վախը, վախն առ այն, որ մենք կկործանենք ինքներս մեզ, ոչնչացնելով ուրիշին, մենք դրանով իսկ փորձում ենք ազատվել ինքնառնչացման ցանկությունից: Էթնոսի մակարդակում այն դրսևորվում է ապակառուցողականության, ինքնառնչացման անգիտակցական կաշուն վախով: Մա նշանակում է, որ ինքնասպանության փորձերում թաքնված է ուրիշին սպանելու անգիտակցական ցանկությունը: Ոչնչացնելով ուրիշներին՝ մարդն անգիտակցաբար փորձում է խուսափել ինքնառնչացումից: Դա դառնում է միջանձնային և էթնիկ ագրեսիայի անգիտակցական մեխանիզմ:

Խնդրի հոգեբանական վերլուծությունը հանգեցնում է նաև ագրեսիայի ևս մեկ մեխանիզմի բացահայտմանը՝ թերարժեքության զգացման: Թերարժեքությունը վե-

րապրվում է զգալիորեն ավելի ինտենսիվ, քան որևէ այլ հուզական վիճակ: Այստեղ խնդիրը այն չէ, որ մարդը չի ուզում ազատվել այդ ճնշող զգացումից: Խնդիրը այն է, որ մարդը ոչնչացնում է իր նմանին, քանզի զգում է ուրիշի լիարժեքությունը, և հատկապես այն, որ այդ ուրիշն իր թերարժեքության կենդանի վկան է և, մի գուցե նաև, պատճառը: Մարդը նայում է ուրիշին ու տեսնում սեփական թերարժեքությունը: Նրա մոտ ցանկություն է առաջանում ոչնչացնել այդ սոցիալական հայելին, այն նրան մշտապես հիշեցնում է սեփական անպիտանելիությունը: Այդ իսկ պատճառով, սեփական անձն ատող պսիխոտիկները ոչնչացնում են հայելիները՝ դրանցում նրանք տեսնում են այն, ինչից վախենում են: Ժամանակակից սոցիալական աշխարհը միայն սահմանամար է սոցիալական, բայց ամենևին ոչ՝ իր էությամբ: Մեր ժամանակակից աշխարհը սոցիալական կարելի է անվանել չափազանց լավ զարգացած երևակայություն ունենալու դեպքում միայն: Ի՞նչ ենք մենք հասկանում սոցիալականություն ասելով: Շատերն այս կախարդական եզրույթի տակ հասկանում են հասարակություն, որում իրենք ապրում են և որը հանդուրժում են՝ չունենալով լավագույնը: Սոցիալականությունն ընկալվում է որպես այդ հասարակությունում ապրելու, իր նմանների հետ համագործակցելու և մեր աշխարհը գոյություն ունեցողներից լավագույնը համարելու ընդունակություն: Առավել խիստ ասած՝ սոցիալականությունը փարիսեցիության /կեղծավորության/ կոսմետիկ տարբերակն է, որի դեպքում բոլորն ամեն ինչից գոհ են և մշտապես դժգոհություն են արտահայտում այն ամենի նկատմամբ, ինչից գոհ են: Լինել սոցիալական նշանակում է խաղաղություն և բարիք կամենալ շրջապատողներին և շրջապատողներից ևս նման վերաբերմունք ակնկալել: Նկատենք, որ ուրիշներին բարի կամենալն ամենևին անշահախնդիր չէ, այն ձևավորվում է շնորհիվ այն բանի, որ մենք ակնկալում ենք համանման վերաբերմունք նաև մյուսների կողմից:

Քրիստոնեական աշխարհընկալման մեջ այդ պայմանն արժեք չունի, այստեղ իրական արժեքը ներելն ու ներում ակնկալելն է: Մենք սոցիալական ենք դառնում, որովհետև ապրում ենք սոցիումում, բայց ոչ այն պատճառով, որ մեր մտքերը, հույզերը և վարքը միանշանակ գիտակցված են մեր կողմից: Եվ ամենևին ոչ այն պատճառով, որ մենք ազատ ենք էգոիզմից: Սոցիալական կարող է կոչվել այն մարդը կամ հասարակությունը, որում տեղ չունի էգոիզմը, չէ՞ որ հենց էգոիզմն է հանդիսանում մարդկային չարիքի արմատը: Հետևաբար, մենք ապրում ենք, սոցիալական չարիքի կամ սոցիալական կեղծավորության տակ քողարկված չարիքի հասարակությունում: Մեր, այսպես կոչված, սոցիալական հասարակությունը քիչ բանով է տարբերվում նախնադարյանից: Հոգեբանական վերլուծության տեսանկյունից կարելի է համատեղել երկու տարբեր հասկացություններ. սոցիալականություն և վայրենություն: Այդպիսի համատեղելիության փորձերը նվազագույնը շփոթմունք են առաջացնում: Այս իրավիճակում մենք գործ ունենք երկու տարբեր ուղղվածություններ ունեցող սոցիալ-հոգեբանական և պատմահոգեբանական հասկացությունների՝ ինվոյուտիվ վայրենության և էվոյուտիվ սոցիալականության հետ: Եթե պատմական զարգացման ընթացքում մարդկությունն ապրել է վայրենությունը՝ որպես էվոյուտիվ գործընթացի անհրաժեշտ աստիճան, ապա այսօր նույն վայրենությունը բացարձակ ինվոյուտիվ է՝ ուղղված է սոցիալական էվոյուցիայի դեմ: Հոգեկանի՝ հեռավոր անցյալից ներմուծված զարգացման աստիճանը ժամանակակից աշխարհում կրում է հակասոցիալական և հակամարդկային բնույթ: Պատմական վայրենություն-

նը մինչսոցիալական է, մինչդեռ ժամանակակիցը՝ հակասոցիալական և ժամանակավրեպ: Դանդաղորեն էվոյուցիայի ենթարկված սոցիալականության աստիճանները դարերի ընթացքում անգնահատելի հնարավորություն են ընձեռել մշակույթի և վարքի փոխհանդուրժող ձևերի համար: «Homo sapiens»-ի պատմական զարգացումը, անցնելով փուլային ինքնաիրականացման ուղին, փուլ առ փուլ՝ ֆետիշիստական աշխարհիմաստավորումից, իրականության տոտեմական ընկալումից աստիճանաբար, աշխարհի մոնոթեիստական պատկերի ընդունման միջոցով հանգել է սոցիալականորեն կազմակերպված հանդուրժող մարդկային հանրության ձևավորման անհրաժեշտությանը: Մարդու պատմական զարգացումն ընթանում է նրա հոգեկան զարգացման հետ միասին, և ավելին, հենց հոգեկան էվոյուցիան է ուղղվածություն հաղորդում մարդու պատմական զարգացմանը: Խնդիրը այն է, որ մարդու հոգեկան և պատմական զարգացումներն ընթանում են տարբեր տեմպերով: Մարդկության հոգեկան էվոյուցիայում, ինչպես և պատմական զարգացման մեջ, առկա է փուլայնության սկզբունքը: Ընդհանուր առմամբ, զարգացման այս երկու ճյուղերը իմաստային միասնություն են կազմում: Հոգեկան զարգացման փուլայնությունն արտահայտվում է գիտակցության զարգացման առանձնահատկություններով, իսկ ավելի կոնկրետ՝ մարդկային հոգեկանը ողջ էվոյուցիայի ընթացքում անցնում է անհատական գիտակցությունը խմբայինից տարբերակելու ուղին, որը հատուկ է հատկապես մինչսոցիալական վայրենության շրջանին: Վայրենու հոգեկանը կոլեկտիվայնության դրոշմն է կրում և առանձնացված չէ խմբային հոգեկանից: Վայրենու համար խմբի տարբեր անդամների միջև հոգեկան տարբերություններ չկան ո՛չ վարքում, ո՛չ էլ նույնիսկ հույզերում, իսկ առավել ևս մտածողությունում, որը նույն՝ խմբային բնույթն է կրում: Մարդիկ հոգեպես միավորված են մտածողությամբ, հույզերում և վարքում: Այստեղ առայժմ անձնային գիտակցություն չկա, քանզի առայժմ չկա անհատականը, մյուսներից տարբերվող Ես-գիտակցումը: Հույզերի, մտածողության և վարքի սոցիալականությունը աշխարհի նախնադարյան իմաստավորման մեջ դեռևս գտնվում են պոտենցիալ բացահայտման շրջանում: Նախնադարյան վայրենու վարքում գերիշխում է հուզականությունը, այլ ոչ թե ռացիոնալությունը: Սակայն հուզական վայրենությունը շատ ավելի սոցիալական է ժամանակակից մարդու ռացիոնալ վայրենությունից: Աշխարհը նախնադարյան մտածողության համար իր մեջ պարունակում էր կյանքի համար համընդհանուր վտանգ հանդիսացող գերբնական ուժերի անհասկանալի քառս: Նախնադարյան մարդու գերհուզականությունը չբացահայտված միջավայրին հարմարվելու անհրաժեշտ փուլ էր, և նախնադարյան մարդու կողմից դրսևորվող ագրեսիան իր հոգեբանական նշանակությամբ չի կարելի համարել ապակառուցողական: Երևույթների անկանխատեսելիությունն հոգեկանի համար առաջին հերթին նշանակում է առաջին հայացքից ոչ համապատասխան հույզերի բուռն բռնկում: Ամենից առաջ այն պատճառով, որ մարդը չգիտի, թե կոնկրետ ինչ կարելի է սպասել հանգամանքների ցանկացած ընթացքից: Մարդու կյանքի յուրաքանչյուր իրավիճակ իր մեջ պարունակում է հուզական արձագանքի և կանխատեսելիության որոշակի մակարդակ, և այդ մակարդակը տարբեր իրավիճակների համար տարբեր է: Դա համընդհանուր օրենք է. որքան ավելի բարձր է ապագայի նկատմամբ մարդու կանխատեսման մակարդակը, այնքան ավելի հարմարված են նրա գործողությունները: Ողբերգություն ապրած յուրաքանչյուր մարդ ոչ աղեկվատ է կանխատեսում իր ապագան, նա կյանքի ոչ աղեկվատ պատկեր ունի: Նույն օրեն-

քը տարածվում է նաև էթնոսի վրա. որքան ավելի հեռու է մնում էթնոսն իրականության ճիշտ ընկալումից, այնքան ավելի անհամապատասխան է դառնում նրա վարքը: Որքան ավելի երկար է էթնոսն ապրում իրականության երևակայական սխեմայով, այնքան ավելի շատ է նա դժբախտությունների ենթարկվում: Ըստ էության դա կարելի է պատկերացնել նաև փոքր-ինչ այլ կերպ. որքան ավելի շատ է գործի դրված վերագրման մեխանիզմը էթնիկ հոգեկանում, այնքան մեծ է հավանականությունը, որ տվյալ էթնոսի ճակատագիրը կենթարկվի սոցիալական ցնցումների: Արևմտյան Հայաստանի հայերը ցեղասպանության մասին միտք անգամ թույլ չէին տալիս իրենց, նրանք թուրքերին բոլորովին այլ նպատակներ էին վերագրում և վճարեցին իրականության՝ իրենց աղավաղված ընկալման համար: Նույնը վերաբերում է նաև հրեաներին:

Մարդու կյանքում գոյություն չունեն այնպիսի իրավիճակներ, որոնց մարդը հուզականորեն չի արձագանքում: Հույզի մակարդակն ու որակն ամենից առաջ արտացոլում են այն հոգեկան լարվածությունը, որը մարդն ապրում է անհասկանալի և չկանխատեսվող իրավիճակի հետ բախվելիս: Իրավիճակների անկանխատեսելիությունն առաջին հերթին դրանց էքստրեմալությունն է: Նման էքստրեմալության նկատմամբ հարմարումը կամա թե ակամա հանգեցնում են մարդուն ապագա իրադարձությունների կանխատեսման քիչ թե շատ համապատասխան մակարդակի ձևավորման անհրաժեշտությանը:

Սոցիալական իրականության որոշակի գծեր վերագրելով շրջապատողներին՝ մարդը փորձում է նրանց գործողություններում կանխատեսելիություն մտցնել: Մարդը չի կարող պահպանել իր գոյությունը անկանխատեսելի աշխարհում, այդ իսկ պատճառով նա պետք է անընդհատ ինչ-որ կոնկրետ որակներ վերագրի շրջապատող աշխարհին: Բնական է, որ այս գործընթացում դիտարկվում է հենց վերագրման մեխանիզմը. արտաքին աշխարհը, շրջապատող մարդկանց մենք օժտում ենք որակներով, որոնք ինքներս ենք կրում մեր մեջ: Մարդու էվոլյուցիան, մտածողության և ռացիոնալության զարգացումը չեն ոչնչացնում հուզական աշխարհը: Ռացիոնալ մտածողության զարգացումը սկսում է գեներացնել սոցիալական հույզերի ձևավորման գործընթացը: Մի կողմից, հույզերն այսպես թե այնպես սոցիալական են, մյուս կողմից, մարդը հաճախ նախընտրում է գահավիժել զարգացման նախորդ շրջաններ, աշխարհագրության բնագոյային շրջաններ: Նա չի կարող այդքան հեշտությամբ ազատվել բնագոյային անպատժելի ամենաթողությունից, բնագոյային հաճույքներից: Այնուամենայնիվ, զարգացումը պահանջում է սոցիալականության ներմուծում հոգեկան ակտիվության բոլոր ոլորտներ, այդ թվում նաև հուզական աշխարհում: Մարդու հույզերը պետք է սոցիալականացված լինեն. հենց սա է մարդու զարգացման հիմնաքարը: Հուզական վայրենությունը բարոյական ապուշություն է ձևավորում: Իսկ եթե մենք այս մոտեցումը կիրառենք նաև էթնիկ ագրեսիան հասկանալու հարցում, ապա կարող ենք հանգել պարզ և ճշմարիտ եզրակացության. այլ էթնոսների նկատմամբ ատելություն և ագրեսիա դրսևորող էթնոսները բնութագրվում են սոցիալական հույզերի ցածր մակարդակով: Սոցիալականացված հույզերը չեն կարող ատելություն ծնել իրեն նմանների հանդեպ կամ առհասարակ ատելություն՝ որպես այդպիսին: Այսպիսով, մարդկային ագրեսիվության խնդիրը կարող է սահմանվել որպես հոգեկան զարգացման ռիզիկոյության խնդիր: Մարդու, էթնոսի կողմից մեկ այլ մարդու կամ էթնոսի հանդեպ ագրեսիվության, ատելության

ակունքները թաքնված են աշխարհի հոգեկան յուրացման և իմաստավորման էվոլյուցիոն շարքում:

Շատ հաճախ քաղաքագետների շրջանում կարելի է հանդիպել պնդման, որ ազգամիջյան ագրեսիան, պատերազմները կարող են գնահատվել որպես քաղաքական պայքարի միջոցներ: Եթե մենք փորձենք կիրառել այս մոտեցումը ցեղասպանության հարցում, ապա կհայտնվենք բացարձակ աբսուրդի և համընդհանուր բարոյագրկման դաշտում: Թեպետ, դեռևս ոչ ոք չի փորձել մարդու քաղաքական ակտիվությանը բարոյականություն վերագրել: Մարդու հանդեպ բռնություն պարունակող և անձնական նպատակներ հետապնդող ցանկացած գործողություն հանդիսանում է հանցագործություն մարդու հանդեպ, ցանկացած բռնի գործողություններ էթնոսի հանդեպ հանցագործություն են հանդիսանում մարդկության հանդեպ: Ցանկացած հանցագործություն կարող է դիտարկվել որպես անձի խղճի կամ «Գեր Ես»-ի պաթոլոգիա, որպես պատասխանատվության պաթոլոգիա: Չանգվածային բնույթ կրող հանցագործությունները վկայում են պատասխանատվության բացակայության մասին: Այնտեղ, որտեղ չկա անձնական պատասխանատվություն, չի կարող լինել նաև անձնական բարոյականություն: Դեռևս Գ. Լեբոնը և Գ. Թարդը հոյակապ ցուցադրել են զանգվածների խելագարությունն ու անբարոյականությունը (2,4): Ծրագրած հանցագործությունը զանգվածային մակարդակ տեղափոխելու ձգտումը հանդիսանում է անձնական պատասխանատվությունից խուսափելու միջոց: Ժամանակակից աշխարհում կրկնվող վայրենության աստիճանը կրում է բացահայտ դեստրուկտիվ բնույթ, մարդու նկատմամբ անթաքույց ատելության բնույթ: Մենք չենք կարող վայրենուն մեղադրել անբարոյականության համար, նա առայժմ բարոյական չէ, մինչբարոյական է, քանզի բարոյական գիտակցությունը ձևավորվում է «Գեր Ես»-ի զարգացմանը զուգընթաց, մինչդեռ վայրենության աստիճանը կրկնող ժամանակակից մարդն արդեն անբարոյական է: Իր նմաններին ոչնչացնող վայրենին նրանց նկատմամբ էթնիկ կամ ցեղային ատելությամբ չի առաջնորդվում, նա պարզապես փորձում է հաստատել կենսաբանական գոյության իր իրավունքը: Ժամանակակից մարդասպանները, ովքեր ծրագրում են այլ էթնոսի ոչնչացումը, փորձում են ազատվել սեփական էթնիկ անլիարժեքության ծանր զգացումից: Վայրենին անձնական պատասխանատվություն չի կրում իր արարքների համար, քանզի նա չունի Ես գիտակցություն, վայրենուն հիմնավոր կերպով ներշնչել են, որ նա աստվածների կամքն է կատարում, իսկ սեփական արարքների համար պատասխանատվությունը թողնում է ցեղի առաջնորդին: Չանգվածային սպանությունների, ցեղասպանության ծրագրեր մշակող ժամանակակից ցեղային առաջնորդը շատ լավ գիտի, որ իր ծրագրերը կգտնեն իրենց կատարողին՝ ի դեմս կենդանական բնագոյներով կազմավորված և ուղղորդված ամբոխի: Ժամանակակից առաջնորդը ապակառուցողական ուժեր է ծնում ամբոխի մեջ, և ամբոխն սկսում է շնորհակալ լինել անպատժելիորեն հանցագործություն կատարելու հնարավորության համար: Ամբոխի հուզական «անգրագիտությունը» հոյակապ և բերրի դաշտ է հանդիսանում, որի վրա աճեցվում է մարդու նկատմամբ ատելությունը: Ուրիշի կամքի կույր կատարողն առաջին հերթին իր սեփական ապակառուցողական պահանջմունքների ետևից վազող մարդն է, բարոյականությունից զրկված մարդը: Եվ իր այդ որակով նա ավելի վտանգավոր է հասարակության համար, քան բացահայտ և գիտակցորեն ագրեսիայի միտված հանցագործը: Ցեղի առաջնորդի կամքին կույր ենթարկվելը բխում է արխայիկ մտածողու-

թյան առանձնահատկություններից, որի հատկությունները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. «Առաջին հատկությունը բնության հետ անհատի միաձուլման բարձր աստիճանն է, որտեղ ցեղի առաջնորդը հանդիսանում է միակ միջնորդը բնության և մարդու միջև» (1, սրբ. 152): Մենք չենք կարող միմյանց հավասարեցնել վայրենու արդարացված ագրեսիան և ժամանակակից մարդու գիտակցված ապակառուցողական ակտիվությունը: Վայրենու և զանգվածային սպանություններ կազմակերպողի միջև բարոյական ակնհայտ սահման կա. վայրենին տարբերայնորեն բարոյական է, երբ պայքանում է իր գոյության համար, իսկ մարդկանց սպանություններ և ոչնչացում ծրագրող ժամանակակից «առաջնորդը» տառապում է բարոյական ապուշությամբ: Վայրենու կյանքի խնդրահարույց պայմանները, նրա մշտական կախվածությունը շրջապատող միջավայրի դժվար կանխատեսելի երևույթներից, ստիպում են նրան միավորվել ցեղերով և համայնքներով, դրդում է հնազանդվել առաջնորդի կամքին՝ որպես կյանքի երաշխիք: Կյանքի պայմանների նկատմամբ հարմարման կենսաբանորեն ցածր մակարդակը հոտային սոցիալականության ձևավորում է պահանջում: Մինչդեռ ժամանակակից մարդասպանը սոցիալականությունը վերածում է հոտի: Վայրենին փորձում է հոտը վերածել սոցիալականության, մարդասպանների ժամանակակից ապակառուցողական ամբոխն անում է հակառակը. նա սոցիալականությունը վերափոխում է հոտի: Սակայն ժամանակակից աշխարհում նույն հոտայնության դրսևորումը, հնազանդությունը «առաջնորդի» չար կամքին՝ հանդիսանում է անբարոյականության և հակասոցիալականության վառ արտահայտում: «Չնայած, որ մարդկության մտավոր կարողությունները կենսաբանորեն անփոփոխ են մնում հազարավոր սերունդների կյանքի ընթացքում, երկար էվոլյուցիոն գործընթաց է անհրաժեշտ օբյեկտիվության հասնելու համար, այսինքն, ձեռք բերելու ընդունակություն՝ տեսնելու աշխարհը, բնությունը, այլ մարդկանց և իրենք իրենց՝ այնպիսին, ինչպիսին կան, չաղավաղելով դրանք մեր ցանկություններով ու վախերով: Որքան շատ է մարդը մոտենում այդպիսի օբյեկտիվության, այնքան սերտ է նրա կապը իրականության հետ, այնքան ավելի հասուն է նա դառնում, և այնքան ավելի լավ նա կարող է կառուցել իր համար որպես տուն ծառայող մարդկային աշխարհը» (5, սրբ. 325):

Չոգեկան էվոլյուցիան ստիպում է մարդուն հրաժարվել ամենաթող բնագոյանության դրախտից, այն այլ մարդուն՝ որպես իր նմանին ընդունելու կոչ է անում: Այս էվոլյուցիոն խնդրի լուծման համար ասպարեզ են նետվում մշակույթի, կրոնի և արվեստի սուբլիմացված հզոր ուժերը: Ամբողջը միասին վերցրած, պետք է ապահովի միջէթնիկ հաղորդակցման մեջ հանդուրժողականության ձևավորումը: Միաժամանակ, մարդկային կամքի բոլոր ջանքերն ուղղվում են իր կարգավիճակի, տիտղոսի, սոցիալական դերի հետ՝ անհատի ֆիլոգենետիկ նույնականացմանը դիմադրելուն:

Մարդը ճանաչում է աշխարհը բարդ և ամբողջական հոգեկան կառուցվածքի օգնությամբ: Դա նշանակում է, որ նրա վարքը ենթարկվում է ոչ միայն գիտակցության և անձնական անգիտակցության ազդեցությանը, այլև կոլեկտիվ անգիտակցականի անտեսանելի ազդեցությանը: Իր ֆիլոգենետիկ հիշողության մեջ մարդը վերապրում է իրեն որպես ամենակարող արարած, իսկ դա նշանակում է, որ մադու վերաբերմունքը աշխարհի և մարդկանց նկատմամբ ներառում է որոշակի նույնականացում աստվածակերպ վիճակի հետ: Մարդը դուրս է գալիս իր անձնական Ես-ի սահմաններից, նա փրվում է կոլեկտիվ անգիտակցականի ապրումներից, մինչև ամենակա-

րող Աստծո կերպարը: Մակայն Աստծո նկատմամբ հավատը բնութագրում է ոչ թե Աստծուն, այլ մարդուն: Մեր ինքնահաստատման համար մենք մեր իշխանության հետ նույնականացվելու կարիք ունենք: Հոգեկանի այսպիսի ընդարձակման, ավելի ճիշտ՝ փքման արդյունքում մարդը սկսում է իրեն գերմարդ զգալ, նա Աստծո հետ նույն աստիճանին է կանգնում իր կոլեկտիվ անգիտակցականում: Հոգեկանի հենց այդ վիճակն է Կ. Յունգն անվանել հոգեկան ինֆլյացիա: Մակայն հոգեկան ինֆլյացիայի վիճակը կարող է ապրել ոչ միայն առանձին մարդ, այլև ռասաներ, ազգեր, ժողովուրդներ: Ժողովուրդները, որոնք գտնվում են հոգեկան ինֆլյացիայի կամ իրենց պատրանքային ամենակարողության փքված վիճակում, ներշնչված ընտրյալության և անմեղության վիճակում, որպես կանոն, տարբերվում են սոցիալական մտածողության ցածր մակարդակով: Հոգեկան ինֆլյացիայի վիճակում գտնվող էթնոխմբերն իրենց իրավունք են վերապահում տնօրինելու այլ էթնոխմբերի, ընդ որում՝ կիրառելով ներգործության բռնի և դեստրուկտիվ մեթոդներ:

Իշխանությունն իր հոգեբանական բնույթով հզոր ձգողական ուժ ունի յուրաքանչյուր անհատի համար, այն ընդունակ է արհեստականորեն բազմիցս բարձրացնել ինքնագնահատականը, այն թույլ է տալիս ազատություն տալ բնագոյային դեստրուկտիվությանը, դնել այդ դեստրուկտիվությունը սոցիալապես ընդունելի ենթատեքստում: Մարդը սկսում է թաքնվել իշխանության, դեստրուկտիվության ետևում, նա փորձում է սոցիալական վարագույրի օգնությամբ իր նմաններից վեր բարձրանալ: Իշխանությունն անհատի համար ակնհայտ առավելություն ունի, այն թույլ է տալիս փոխհատուցել մարդուն մշտապես հետապնդող թերաթեքության զգացումը, որը ծնվում է մարդու հետ և բխում է բոլորից ու ամեն ինչից ունեցած համընդհանուր կախվածությունից: «Մյուս կողմից, իշխանությունը խոչընդոտում է անձի զարգացմանը, և հետևաբար, մեծացնում է անձնական թերաթեքության զգացումը» (3, ctp. 31): Անձնական թերաթեքության բացասական ապրումից ազատվելու անգիտակցական ցանկությամբ պայմանավորված իշխանության հասնելու ձգտումը իրականում զարգացման վախ է նշանակում և իրենցի ներկայացնում է փախուստ հոգեկան էվոլյուցիայից դեպի ինվոլյուտիվ հոտայնություն:

Ըստ Կ. Յունգի, այդ ինքնաստվածեցման ետևում թաքնված է թերաթեքության բացասական ապրումը, որից անհատն ուզում է ազատվել: «Բացի այդ, անձի թերաթեքության զգացումը հանգեցնում է իշխանությունը կորցնելու վախի, ինչն էլ իր հերթին զարգացնում է պարանոիդ կասկածամտություն հակառակորդների հնարավորությունների նկատմամբ: Այս ամենը կարող է իր փոխհատուցումը գտնել սեփական իշխատության էլ ավելի եռանդուն հաստատման մեջ: Արդյունքում մենք գործ ենք ունենում քաղաքական բռնապետության, իսկ երբեմն էլ՝ ամբողջատիրության հետ»:

Հենց այդ կերպ է մարդն սկսում ապրել իր պատրանքային նշանակալիությունը: Զանգվածային սպանության և ցեղասպանության ելքը պատմական ասպարեզ պայմանավորված է մի շարք սոցիալ-հոգեբանական պատճառներով: «Ցանկացած հանցագործ ունի իր սեփական բավարար դրդապատճառները, որոնք ստիպում են նրան գործել, հակառակ դեպքում հանցագործությունը երբեք չէր կատարվի» (3, ctp. 33): Ցանկացած հանցագործ ունի իր դրդապատճառները, որոնք բավարար են հենց իր համար, հանցագործության կատարման համար: Դրանք այն դրդապատճառներն են, որոնք ինքը՝ հանցագործը բավարար է համարել ոչ միայն իր համար, այլև ուրիշներ:

րի համար: Հենց այդ կերպ է նա հասարակությանը պարտադրում իր թերաբժեքությունն ընդունելու պահանջը: Այդ իսկ պատճառով, իրեն քաղաքակիրթ համարող հասարակությունը պետք է պատասխանատվություն ստանձնի այն հոգեկան վիճակների համար, որն աճեցնում է սոցիալականության դաշտում: Հոգեկան էվոյուցիան սոցիալական իրականություն է ձևավորում, ձևավորում է սոցիալական պատասխանատվություն սեփական կյանքի և իր նմանների կյանքի համար: Պատասխանատվությունը ընդունակություն է, որը մարդկությունը ձևավորել է հազարամյակների ընթացքում:

Այսպիսով, այդ ընդունակության բացակայությունը դառնում է էվոյուցիոն խնդիր: Այլ էթնոսներին՝ որպես իր նմանների ընդունման պարզել չկլանած էթնոսը էվոյուցիոն թերաբժեքություն է ապրում: Եթե առանձին անձի՝ հանցագործի մակարդակում մենք ամրագրում ենք անձնական թերաբժեքությունը որպես դեստրուկտիվ վարքի դրդապատճառ, ապա էթնոսի մակարդակում մենք գործ ունենք արդեն էվոյուցիոն թերաբժեքության հետ: Էվոյուցիոն անլիարժեքությունը դրսևորվում է էթնոսի գիտակցական սկզբի ոչ բավարար մշակվածությամբ: Եթե էթնոսին հատուկ է զանգվածային հուզական ապրումների մեջ ընկնելը, ապա դա վկայում է այն մասին, որ տվյալ էթնոսի պատասխանատվության զգացումը ձևավորված չէ, այդ զգացումը դեռևս սաղմնային վիճակում է:

Մարդկության սոցիալական էվոյուցիան չի ոչնչացրել բարբարոսական բնագոյները, ավիրելու և ապակառուցելու բնագոյները: Այն դրանք ընդամենն արտամղել է դեպի հետին պլան: Ըստ էության, մարդկային հոգեկանում չկա սոցիալականությունը բարբարոսությունից բաժանող հուսալի պաշտպանիչ պատնեշ: Այդ երկու մակարդակների միջև առկա սահմանները թափանցիկ են ու երբեմն: Մարդու Ես-ը, ինչպես հոգեկան էվոյուցիայի նորածին, ի վիճակի չէ վերահսկել կոլեկտիվ անգիտակցականի ավերիչ միտումները: Կոլեկտիվ անգիտակցականի տարրերը հեշտությամբ կարող են քայքայել թույլ Ես-ը և անհատական մարդուն վերածել զանգվածային Մենք-ի: «Բոլոր այդ տարրերը պահպանելով իրենց սկզբնական ձևը, շարունակում են ապրել մեր մեջ և ցանկացած պահի կարող են դուրս պրծնել՝ ավիրելով ամեն ինչ իրենց ճանապարհին, արտահայտվելով զանգվածային փսիխոզի տեսքով, որի դեմ անհատն անպաշտպան է» (3, ctp. 46) :

Էթնիկ կամ սոցիալական պատկանելության հիմքի վրա կազմակերպվող զանգվածային սպանությունները թելադրված են ոչ միայն կազմակերպիչների պսիխոզով. զանգվածները՝ մարդասպանները, որսում են իրենց առաջնորդների փսիխոզը, քանզի այդ առաջնորդները նույն այդ զանգվածի ծնունդն են և չեն տարբերվում միմյանցից: Առաջնորդները ծնում են ամբոխի գազանային սկիզբը, որը մշտապես երագում է ազատվել բոլոր տաբուներից, արգելքներից:

Ցեղասպանության մտահոլացումն ու իրականացումն անկասկած փսիխոտիկ աշխարհայացքի և աշխարհընկալման հետևանք է:

Մարդը ռացիոնալ է, բայց այդ ռացիոնալությունն իր սահմանն ունի, որը ձեռք է բերվել մարդու երկարատև էվոյուցիայի արդյունքում: Խորհրդանշային կերպով ասած, մարդկությունն իր ողջ պատմության ընթացքում փորձել է և մինչ օրս փորձում է տարածք առգրավել հույզերից: Այս գործընթացը կանխատեսելի ավարտ չունի, այն ընթանում է մշտապես՝ փոփոխական հաջողությամբ: Այնքան ժամանակ, քանի դեռ ագրեսիան ընդունվում է որպես կոնֆլիկտների լուծման մեխանիզմ, մենք

մեր անգիտակցականի գերին ենք մնալու: Մարդկությունը մինչ օրս տառապում է անհանդուրժողականության ննորդով: Հոգեկան և սոցիալական խանգարումները ձևավորվում են այն պարզ պատճառով, որ դրանք բնորոշ են համայն մարդկությանը: Սոցիալական խանգարումներով տառապող էթնոսները դրանց լուծումը տեսնում են քաղաքական ագրեսիայում, քսենոֆոբիայում: Մարդկության ստվերային էներգիայի մակարդակը մշտապես համալրվում է, քանզի հազարամյակների ընթացքում արտամղվում է կոլեկտիվ անգիտակցական: Էթնոսի քաղաքական ներդրը չի կարող լուծվել քաղաքական ոլորտում, այն պետք է հաղթահարվի էթնոսի հոգեկանում: Քաղաքական և սոցիալական ագրեսիայում որպես շարժիչ ուժ են հանդես գալիս բնագոյներն ու բարդությունները: Էթնոսի անգիտակցական մղումները քսենոֆոբիա են ծնում, և եթե այդ քսենոֆոբիան ընդգրկում է ամբողջ էթնոսը, այն դառնում է քաղաքական քայլ և լի անդառնալի հետևանքներով: Իրականում քսենոֆոբիայում որևէ քաղաքական իրականություն գոյություն չունի: Անձի ստվերային կողմերը մշտապես վերագրվում են շրջապատի վրա, իսկ էթնոսի ստվերային կողմերը հանգեցնում են սոցիալական աղետի՝ պատերազմներ, մարդկանց զանգվածային բնաջնջում, ցեղասպանություն: Քաղաքականությունն այլոց հանդեպ ատելության բավարարման ամենահարմար դաշտն է:

Գրականություն

1. Кликс Ф. Пробуждающееся мышление. У истоков человеческого интеллекта. М. прогресс, 1983, 304 с., стр. 152.
2. Лебон Густав Психология народов и масс Издательский дом: Академический проект 2011, 240 стр.
3. Одайник В. «Психология политики». СПб, ЮВЕНТА" 1996. 384 с., стр. 31.
4. Тард Г. Общественное мнение и толпа Перевод с французского под редакцией П. С. Когана. - Изд-во Т-ва типографии А. И. Мамонтова, М., 1902 г., Институт психологии РАН, Издательство «КСП+». 1999 г. - 414 с.
5. Фромм Э. Здоровое общество Москва АСТ, 2006, 544 с., стр. 325.

Արтур Кобеляն

*Факультет философии и психологии ЕГУ
Доцент кафедры социальной психологии*

ГЕНОЦИД КАК КРАЙНЕЕ ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИНТОЛЕРАНТНОСТИ

Ключевые слова: *геноцид, этническая интолерантность, этническое насилие, психологическая проекция, чувство неполноценности, ксенофобия.*

Прошлое существует для того, чтоб быть уроком для будущего. Иначе уроки прошлого остаются бумажными истинами. Вместе с каждым ребенком вновь рождается память предков, каждый новорожденный несет в себе историю своего народа, перенимает моральный облик своего народа. И эта память предков имеет реальную власть над индивидом, даже если индивид рожден в цивилизованном, а не в варварском мире, даже если индивид воспитан на идеях толерантности. Осмысление истории народа не может основываться на сухих исторических датах и событиях. История народа представляет собой живой организм, хранящий в себе все пережитые травмы. И, очевидно, это единственные травмы, вытеснять которые преступно. Это единственные травмы, которые должны быть осознаны в любом случае. Рожденный человек получает в семье первые познания, родители передают ребенку свое мировоззрение, свое отношение к миру и к людям. Вместе с этим процессом социализации в действие вступает наследственная программа личности, в которой особое место занимает этническая принадлежность,

история собственного этноса. От этой наследственной программы очень сложно избавиться, она сопровождает человека всю жизнь, формирует его отношение к миру.

Artur Kobelyan

Faculty of Philosophy and Psychology, YSU

Associate Professor of the Department of Social Psychology

GENOCIDE AS AN EXTREME MANIFESTATION OF ETHNIC INTOLERANCE

Keywords: *genocide, ethnic intolerance, ethnic violence, psychological projection, feelings of inferiority, xenophobia.*

The past exists in order to be a lesson for the future. Otherwise, the lessons of the past remain paper truths. With each child is born again the memory of our ancestors, every newborn carries the history of his people, takes over the moral image of its people. And the memory of our ancestors has real power over the individual, even if the individual is born in a civilized, not in a barbarous world, even if the individual is brought up on the ideas of tolerance. Comprehending the history of the people can not be based on dry historical dates and events. The history of the people is a living organism that contains all the experienced traumas. And, obviously, these are the only traumas displacing which is criminal. This are the only traumas which must be realized in any way. Born person gets in the family his first cognition, parents pass the child their worldview, their attitude to the world and to the people. Along with this socialization process the action takes genetic program of personality, in which special place occupies ethnicity, the history of their own ethnic group. It is very difficult to get rid of this genetic program, which accompanies the person all his life, forms his attitude toward the world.

Գագիկ Պետրոսյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դասախոս
gnomon21@mail.ru

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԱՆՏԱԾԻՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հանգուցային բառեր՝ իրականության զգացում, ինքնաճանաչում, պատմական փաստի հանդեպ վերաբերմունք, մետաֆիզիկական մեղք:

*«Արդյո՞ք մարդկության բոլոր վսեմ խնդիրները լուծված են:
Սպանելուց բացի այլ մտահոգություն չունե՞նք:
Բոլորն էլ գիտեն, որ բազում գործեր կան,
ուրեմն ինչու՞ վերջ չենք տալիս կապկային այդ զբաղմունքին»:*

Վիլյամ Մարտյան, «Հայաստանի Անդրանիկը»

Մեծ գրողի խոսքերն արտահայտում են այն երկատվածությունը, որը հատուկ է մարդկությանը. մի կողմից վսեմության և կատարելության ձգտումն է, մյուս կողմից՝ ավերման և սպանելու մոլուցքը: Մարդկությունը կարծես դատապարտված է մոլորյալ թափառելու անելանելի բավիղում՝ անդադար տատանվելով փոխբացառող բևեռների միջև: Ի՞նչն է խանգարում նրան ազատվել ինքնակործան դրսևորումներից: Արդյո՞ք մարդկության ճակատագիրն ընտրություն կատարելու անկարողությունն է:

Ռոբերտո Ասաջիոլին նշում է, որ մարդը, չճանաչելով և չհասկանալով իր էությունը, չի կարող ինքնակառավարել: Նա անընդհատ պտտվում է սեփական սխալների և թերությունների շրջանում [2, ժ. 14-15]: Դա նշանակում է, որ արատավոր շրջանից դուրս գալու միակ ուղին ինքնաճանաչումն է: Սակայն, դեռևս վաղ անցյալում ընդունելով այս ճշմարտությունը, մարդկությունը շարունակում է ընթանալ իր իսկ հետագծով՝ սեփական խնդիրների պատրանքային հանգուցալուծման արդյունքում նոր, առավել դժվարալուծելի խնդիրներ ստեղծելով:

Ի՞նչն է խանգարում ինքնաճանաչմանը: Միակ բանն, ինչը չի բավականացնում ինքնաճանաչման համար սեփական էության ստվերային կողմին հանդիպելու և այն ընդունելու քաջությունն է: Գիտատեխնիկական ակնհայտ նվաճումներով հպարտացող մարդկությունը դեռևս չի հասել հասունության այն մակարդակին, որտեղ պատասխանատու կյիներ իր ինքնակործան դրսևորումների համար: Նա ամեն գնով փորձում է խուսափել սեփական էության ճանաչումից՝ ստեղծելով պատրանքային ինքնանկար, հորինված կենսագրություն, որտեղ ամենայն բացասականը, մութն ու ստվերայինը վերագրվում են «ուրիշին»: Եթե անհատի նման ռազմավարությունը

նկատելի է, ապա համամարդկային կտրվածքում այն դառնում է անտեսանելի: Համայնքը «բուժում» է բոլոր հոգեախտաբանական երևույթները, քանի որ այն, ինչն անհատի մակարդակում դիտարկվում է որպես շեղում, խմբային մակարդակում վերածվում է նորմայի:

Քաղաքակրթության ճանապարհին պարբերաբար հանդիպող որոշ իրադարձություններ անհամատեղելի են մարդկության իդեալական պատկերի հետ: Պատերազմներ, քաղաքական ճնշումներ, ինկվիզիցիա, ահաբերկչություն, կրոնական արշավանքներ, ցեղասպանություններ ու այլ բազմաթիվ մարդասպան դրսևորումներ դարձել են մարդկության անբաժան ուղեկիցները: Հարկ է նշել, որ դրանք ունեն երկակի նշանակություն՝ մի կողմից հանդես գալով որպես ախտանիշ, մյուս կողմից՝ որպես հոգեախտածին գործոն: Որպես ախտանիշ այդ իրադարձությունները բացահայտում են մարդու էության ինքնակործան կողմը, իրենցով նշանակում են սեփական մոլուցքները կառավարելու մարդկության անկարողությունը, մարդկային բանականության անօգնականությունը: Մյուս կողմից դրանք հանգեցնում են իդեալականի և իրականի միջև ընդհարման, առճակատման, իրականության զգացման կորուստի, ինչը չի կարող հետևանքներ չունենալ մարդու հետագա զարգացման ընթացքում: Բախվելով իրականությանը՝ մարդկությունն ամեն անգամ գործի է դնում ինքնախաբեության մեքենան՝ սկսելով շրջանաձև շարժման մի նոր պարբերություն:

Անցյալում տեղ գտած պատմական իրադարձության ազդեցությունը շարունակվում է դրա հանդեպ հետագա սերունդների ունեցած վերաբերմունքի միջոցով: Պատմական իրականությունը վեր է ածվում գաղափարական իրականության: Վերջինիս նշանակությունը, շատ դեպքերում առավել որոշիչ է, քանի-որ այն անհամեմատ ավելի երկարակյաց է: Լինելով անցյալի ներկայացուցիչը՝ այն մասնակցում է բազմաթիվ սերունդների ներկայի և ապագայի ձևավորմանը:

Պատմական իրականության և ընդհանրապես իրականության մասին պատկերացումներն ունեն մի կարևոր յուրահատկություն: Գտնելով իրենց հիմքն իրադարձության մեջ, ձևավորվելուց անմիջապես հետո դրանք հեռանում են հիմքից՝ ձեռք բերելով ինքնուրույն գոյության իրավունք: Սկզբունքորեն անհնար է պարզել պատկերացումների ճշմարտացիությունը՝ այն համեմատելով օբյեկտիվ փաստի հետ, քանի որ վերջինս, ամեն դեպքում, ներկայանում է միջնորդավորված ձևով: Այս ամենը, սակայն, չի խանգարում խոսել իրականության զգացումի, իրականության նկատմամբ վերաբերմունքի, ինքնախաբեության մասին: Ինքն իրեն խաբում է ոչ թե նա, ով չգիտի ճշմարտությունը կամ ունի ընդամենը մեկ ճշմարտություն, այլ նա, ով ունի առնվազն երկու ճշմարտություն, և ընդունելով դրանցից մեկը՝ մերժում է մյուսը: Հենց այսպիսի վիճակում է գտնվում մարդը, ով մի կողմից հիանում է իր իդեալական կերպարով, մյուս կողմից՝ սարսափում սեփական ավերիչ դրսևորումներից: Որպես կանոն՝ չգտնելով այլ հնարավոր լուծում, նա ընտրում է առաջինը՝ զգալով, որ հեռանում է իրականությունից, կորցնելով իրականության զգացումը:

Եթե այս ամենին նայենք հոգեբանության տեսանկյունից, ապա պետք է նշենք, որ իրականության զգացման կորուստը, բոլոր դեպքերում, ուղեկցվում է հոգեշեղումներով: Ֆրոյդյան հոգեվերլուծության մեջ հոգեշեղումը խզում է իրականության հետ հիվանդի հարաբերությունները, այն փախուստ է իրականությունից [6, տ. 539-543]: Գլասերի իրողության հոգեթերապիայում իրականության թույլ զգացումն առաջ է

բերում հոգեշեղումներ [11, p. 16-63]: Բերված տեսակետները ցույց են տալիս, որ հոգեախտաբանական գոյացություններն, ամեն դեպքում, ուղեկցում են իրականության զգացման թուլացմանը, իրականության հետ կապի խզմանը՝ մի դեպքում որպես հետևանք, մյուս դեպքում՝ որպես պատճառ:

Սակայն կենսական ոչ բոլոր իրադարձություններն են մարդուն ստիպում դիմել փախուստի, հրաժարվել իրականությունից: Դա նշանակում է, որ եթե արտահայտված է իրադարձությունից փախչելու, այն մերժելու հակումը, ապա այդ իրադարձությունն իր մեջ պարունակում է հոգեախտածին հետևանքներ ունենալու հնարավորություն: Եվ հակառակը, իրադարձության հոգեախտածին հետևանքներ ունենալու հնարավորության մասին կարելի է դատել, եթե ակնհայտ է այդ իսկ իրականությունից փախչելու հակումը:

Եթե փորձենք այս տեսանկյունից դիտարկել ցեղասպանությունը, ապա պետք է նշենք, որ այն օժտված է մարդուն իրականությունից հեռացնելու կարողությամբ: Բանն այն է, որ ցեղասպանության փաստի նկատմամբ դիրքորոշումները, որքան էլ որ դրանք տարբերվում են, եթե ոչ ուղղակիորեն, ապա անուղղակի կերպով միտված են ցեղասպանության փաստի մերժմանը: Միգուցե տարօրինակ թվա, սակայն նույնիսկ այն դեպքում, երբ մենք դատապարտում ենք ցեղասպանությունը, մենք անուղղակիորեն խոչընդոտում ենք դրա ճանաչմանը: Այս երևույթի հիմքում ընկած են հոգեբանական այնպիսի մեխանիզմներ, որոնց աշխատանքը, շատ դեպքերում, հանգեցնում է ախտաբանական հետևանքների:

Ասվածն ավելի պարզեցնելու նպատակով դիտարկենք ցեղասպանության նկատմամբ հնարավոր դիրքորոշումների օրինակներ: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել դրանց հետևյալ տարբերակները՝ ա) *խուսափողական դիրքորոշում*. մենք ընդունում ենք, որ ցեղասպանության փաստը ոչ մի կերպ չի առնչվում մեզ, այդ խնդիրը մեզ ընդհանրապես չի հետաքրքրում, բ) *բացարձակ դատապարտման դիրքորոշում*. մենք անվերապահորեն դատապարտում ենք ցեղասպանությունը, գ) *մասնակի արդարացման դիրքորոշում*. մենք փորձում ենք արդարանալ՝ ցեղասպանության փաստի մեջ մեղադրելով մեր հոգեկանում առկա կենդանական բնագոյների դրսևորումները, դ) *բացարձակ արդարացման դիրքորոշում*. մենք արդարացնում ենք ցեղասպանությունը՝ հիմնվելով կրոնական և ազգային արժեքների վրա, ե) *մերժողական դիրքորոշում*. մենք ընդհանրապես մերժում ենք ցեղասպանության փաստը:

Ցեղասպանության նկատմամբ դիրքորոշումների շարքին կարելի է ավելացնել այլ տարբերակներ ևս: Սակայն առանձնացված օրինակները լիովին բավարարում են ցեղասպանության, որպես իրադարձության և դրա հանդեպ վերաբերմունքի ախտածին բնույթի պարզաբանման համար:

Անտարբերության դիրքորոշում: Ցեղասպանություն: Դժվար է պատկերացնել առավել զարհուրելի արհավիրք: Դժվար է պատմական վկայությունների, վիճակագրական տվյալների մեջ տեսնել այն ամբողջ սարսափը, այն ամբողջ ցավն ու կսկիծը, որն իր հետ բերում է ցեղասպանությունը: Ակամայից մտածում ես, թե որքան երջանիկ ես, քանի որ միայն խոսում ես այդ մասին, մշակում պատմական տրվյալներ, հավաքում ես ապացույցներ, կատարում հետազոտություններ: Ուրախ ես, որ անմիջական առնչություն չես ունեցել եղեռնի հետ, որ ցեղասպանություն չես ապրել, որ քո ուսերին չկա ցեղասպանության կազմակերպման և իրականացման

պատասխանատվություն: Կարող ես մտածել, որ ցեղասպանությունը հեռու է քեզանից, և՛ տարածական, և՛ ժամանակային առումներով: Սպանվում են այլոք, և քեզ թվում է, թե նրանց ողբը քոնր չէ, սպանում են ուրիշները, և քեզ թվում է, թե նրանց մեղքը քոնր չէ:

Զե՛ս սխալվում արդյո՞ք այս կերպ մտածելով: Ուրիշինն է արդյո՞ք այդ ցավը, ուրիշինն է արդյո՞ք այդ մեղքը: Մի՞թե այդ արհավիրքը երկու ազգերի սեփականությունն է միայն: Մի՞թե մյուսներին ոչինչ չի հասնում այդ արհավիրքից:

Դեռևս Պլոտինոսն այն կարծիքին էր, որ կյանքը Տիեզերքում միտված է ոչ թե դեպի անհատականությունը, այլ դեպի ամբողջականությունը: Ավելին, մտածողն Ամբողջի գաղափարն օժտում է միասնական հոգով, որն իր մեջ ներառում է բոլոր կենդանի էակներին, և որտեղ յուրաքանչյուր առանձին անդամ ցուցաբերում է իր մասնակցությունն Ամբողջի դրսևորումներին [3, տ. 181-184]: Յունգյան կոլեկտիվ անգիտակցականի, Վերնադսկու նոոսֆերայի, ժամանակակից տրանսպերսոնալ հոգեբանության սահմաններ չճանաչող աշխարհի գաղափարները թույլ են տալիս ենթադրել, որ հնագույն մտածողի կարծիքն ամեննին հնացած չէ:

Փաստորեն հնարավոր չէ մեկուսանալ մարդկային պատմության ընթացքում տեղ գտած իրադարձություններից, հնարավոր չէ թաքնվելով ազատվել դրա ազդեցությունից: Եթե անգամ ցեղասպանության փոթորիկն անցել է մեզանից բազում տարիներ առաջ, կամ շատ հեռու, մենք, այնուամենայնիվ, կրում ենք դրա անուղղակի ազդեցությունը: Բոլոր դեպքերում մեր ներկան և ապագան պայմանավորված է դրանով, քանի որ մենք տարածական և ժամանակային ամբողջի մասն ենք: Ուրեմն սխալվումք չե՞ք արդյոք մտածելը, թե ցեղասպանության փաստը ոչ մի կերպ չի առնչվում մեզ, եթե այն կատարվել է այլ վայրում կամ այլ ժամանակաշրջանում:

Այն, որ արհավիրքի հոսանքն օրերից մի օր հասնելու է հենց մեզ՝ ժամանակի խնդիր է: Խուսափելով անմիջականորեն մեզ չառնչվող խնդիրներից՝ մենք հիմք են ստեղծում առավել ազդեցիկ խնդրի առաջացման համար: Մենք առճակատման մեջ ենք մտնում մեր իսկ իրականության հետ՝ կորցնելով ամբողջի մաս լինելու մեր իրավունքն ու հրաժարվելով այդ պարտականությունից: Մենք մեկուսանում ենք, սահմանափակվելով անհատական Ես-ի շրջանակներում, մերժելով միասնական ամբողջի գոյությունը:

Բացարձակ դատապարտման դիրքորոշում: Ինչպես նշվեց, ցեղասպանությունը, որպես պատմական իրողություն, անմիջականորեն ազդում է մարդկային ցեղի յուրաքանչյուր անդամի վրա: Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ մենք բոլորս ապրել ենք այդ ոճրագործությունը, մենք մասնակից ենք դրան: Ընդ որում, թե՛ որպես կազմակերպիչ և թե՛ որպես զոհ: Հետաքրքրական է այն է, որ զոհի դերն առավել հեշտությամբ է ընդունվում: Ի տարբերություն դրան, ոչ ոք չի ցանկանում իր վրա վերցնել «ուրիշի» մեղքը՝ նույնիսկ ոճրագործության հեղինակների անմիջական հետնորդները: Ապրումակցելով և կարեկցելով ցեղասպանության զոհերին՝ մենք դատապարտում ենք ցեղասպանությունը՝ նկատի ունենալով այն կազմակերպող առանձին անհատների, խմբերի, ազգությունների ու պետությունների:

Անվերապահ դատապարտումը ենթադրում է մեղադրյալի և մեղադրողի առկայություն: Մեղադրյալը փորձում է պաշտպանվել ներկայացվող մեղադրանքներից, դիմադրում է հնարավոր բոլոր միջոցներով: Իսկ ի՞նչ է անում մեղադրողը: Կարող է տարօրինակ թվալ, բայց նա նույնպես պաշտպանվում է: Դատապարտե-

լով՝ նա անուղղակի կերպով ազատում է իրեն իր բաժին պատասխանատվությունից: Իր վարքով նա ցույց է տալիս, որ երբեք մասնակից չի լինի այդ մեղքին, որ մարդասպան դրսևորումները հատուկ չեն իրեն: Կարճ ասած՝ նա դատում է, որպեսզի չդատվի:

Այստեղ տեղին է հիշատակել էկզիստենցիալիզմի յասպերսյան տարբերակում հանդիպող «մետաֆիզիկական մեղքի» գաղափարը: Առանձնացնելով մեղքի քրեական, քաղաքական, բարոյական և մետաֆիզիկական տարատեսակները՝ Յասպերսը նշում է, որ վերջինս տարածվում է համայն մարդկության վրա, դա հենց մարդկային կեցությունն է, նրա խորքերում թաքնված չարը, որը ժամանակ առ ժամանակ դրսևորվում է տարբեր դիմակներով, աշխարհի տարբեր վայրերում: Այդ դրսևորումների համար պատասխանատու ենք բոլորս [12, p. 26-27]:

Կարելի է, իհարկե, մետաֆիզիկական մեղքի գաղափարը դիտարկել որպես ընդամենը փիլիսոփայական հայեցման արդյունք: Աստվածաշնչում, սակայն, հանդիպում ենք նույն գաղափարին՝ «Երկիրը քո պատճառով անիծյալ լինի» [Օննոց, 3, 17]: Եվ մարդկության նախահոր մեղքը փոխանցվում է նրա սերունդներին: Հնարավոր է արդյո՞ք, որ հին իմաստությունը ոչ մի առնչություն չունենա իրականության հետ: Մենք սովոր ենք մեղքը վերագրել ուրիշներին՝ ամեն գնով ազատելով մեզ պատասխանատվությունից: Մենք պաշտպանվում ենք, դատում ենք ուրիշներին, որպեսզի ինքներս չդատվենք: «Ավելի քան տեղի է ինքն իրեն հանդիպելը, և խուսափում են դրանից, քանի դեռ կարող են ամբողջ բացասականն արտապատկերել շրջապատի վրա», - գրում է Յունգը [9, cт. 267]:

Անվերապահ դատապարտման արդյունքում առաջ է գալիս դիմադրության երևույթը: Պաշտպանվող կողմը փորձում է ամեն գնով ազատվել պատասխանատվությունից, աղավաղելով իրականությունը: Խոսելով անցանկալի պատկերացումների գիտակցման հնարավորության մասին՝ Ֆրոյդը նշում է՝ «Եթե դիմադրությունը հավասարվում է զրոյի կամ աննշան է, ապա մոռացվածն, առանց որևէ աղավաղման, հայտնվում է գիտակցության սահմաններում, իսկ եթե դիմադրությունը զգալի է, արտամղվածն աղավաղվում է այնքան ավելի շատ, որքան մեծ է գիտակցման դեմ ուղղված դիմադրությունը» [5, cт. 23]:

Ինչպես տեսնում ենք բացարձակ դատապարտման դիրքորոշումը հղի է հոգեախտածին վտանգներով: Այն կասեցնում է ինքնաճանաչման միջոցով սեփական մեղքի ընդունման, գիտակցման գործընթացը, հանգեցնում է իրականության աղավաղման: Պաշտպանվող կողմը, որոշ դեպքերում ստիպված է լինում վկայակոչել կրոնական, ազգային արժեքներ, որպեսզի ստեղծի ամբողջից առանձնացվող մեկ այլ ամբողջ, որտեղ կարդարացվեն նրա արարքները:

Հարաբերական արդարացման դիրքորոշում: Այս դիրքորոշումը հենվում է այն լայնորեն տարածված տեսակետի վրա, համաձայն որի մարդը կույր բնագոյներով օժտված կենդանի է: Մարդը մարդուն գայլ է, և դա բխում է նրա բնույթից: Հետևաբար սպանողը գայլն է, այլ ոչ թե մարդը:

Սակայն կենդանական աշխարհում հանդիպող դաժանություններից ամենասարսափելին անգամ չի կարող համեմատվել մարդկային կործանարար դրսևորումների հետ: Ֆրոյդի կարծիքով՝ մարդը միակն է կաթնասուններից, որն ընդունակ է սաղիզմի և լայնածավալ սպանությունների [8, cт. 132]: Ընդ որում, միայն մարդն է, որ առանց որևէ կենսաբանական կամ տնտեսական պատճառի խոշտանգում և

սպանում է իր ցեղակիցներին և նույնիսկ հաճույք է ստանում դրանից [8, ժ. 21]: Ուրեմն տեղին չեն մարդու կենդանական կողմի հասցեին հնչեցված մեղադրանքները: Ինքնակոծան վարքագիծը հատուկ է հենց մարդուն, ավերիչ վարքի ակունքները թաքնված են նրա էության մեջ և կենդանականը որպես քավության նոխազ օգտագործելն ընդամենն ինքնախաբերություն է, որի արդյունքում մարդը կարծես երկատվում է՝ մի կողմում կենդանական բնագոյներն են, մյուս կողմում՝ միայն մարդուն հատուկ գիտակցությունն ու կամքը: Դա տալիս է ինքնաարդարացման հնարավորություն. բոլոր անընդունելի դսրևորումների մեջ մեղադրվում է մարդու կենդանական կողմը:

Այս ռազմավարությունն անհատական մակարդակում հանգեցնում է հոգեախտաբանական հետևանքների: Վերլուծական հոգեբանության տեսանկյունից՝ մարդը, մերժելով իր էության ստվերային կողմը, ստեղծում է դիմակ և թաքնվում է դրա ետևում: Դիմակն ունի մյուսների վրա որոշակի տպավորություն գործելու, անհատի իրական բնույթը թաքցնելու նշանակություն: Սակայն դիմակի չարաշահումն առաջացնում է դրան նույնանալու վտանգ: Նույնացման արդյունքում անհատին կարող է թվալ, թե ինքն ընդամենն այն դիմակն է, որով ներկայանում է [10, ժ. 193-194]: Արդյունքում անձն արժեզրկվում է՝ կորցնելով սեփական ամբողջականությունը:

Ակնհայտ է, որ նման պարագայում ինքնաճանաչողություն, որպես այդպիսին, սկզբունքորեն անհնար է: Ավելի ճիշտ, ինքնաճանաչման արդյունքում կարող է ճանաչվել ընդամենն անձի այն կողմը, որով նա սովորաբար ներկայանում է մյուսներին: Եվ, եթե դիմակի կիրառումն անհատական մակարդակում որոշակիորեն արդարացված է, քանի որ անհրաժեշտ է դրական կողմերով ներկայանալ մյուսներին, ապա համամարդկային մակարդակում մյուսներ սկզբունքորեն գոյություն չունեն: 21-րդ դարի մարդկությունը հաշվետու է միայն իրեն: Սեփական դսրևորումների դատավարության ընթացքում նա միննույն ժամանակ և՛ դատախազ է, և՛ դատապաշտպան, և՛ դատավոր: Այս դերերը կատարող աստվածությունները վաղուց իրենց տեղը զիջել են իրավական և բարոյական ատյաններին, որոնք ենթական են մարդուն և հաճախ իրականացնում են նրա իրական բնույթը թաքցնելու, այն ճնշելու գործառույթ:

Բացարձակ արդարացման դիրքորոշում: Խուսափելով պատասխանատվությունից՝ մարդը երբեմն փորձում է արդարացնել իր ոճրագործությունները՝ դրանց տալով կրոնական կամ ազգային մեկնաբանություն: Խաչակրաց արշավանքների, իսլամական ջիհադի, հոլոքոստի, Հայոց Մեծ եղեռնի հիմքերում ընկած են նույն հոգեբանական մեխանիզմները: Մարդը խուսափում է իր կործանիչ արարքների համար պատասխանատվությունից՝ դրանց արդարացումը փնտրելով կրոնական, ազգային կամ պետական շահերի բազմության մեջ: Յուրաքանչյուր խումբ ստեղծում է կրոնական իդեալների և նպատակների իր յուրահատուկ համալիրը: Շատ դեպքերում դրանք այնքան են տարբերվում իրարից, որ մտնում են ակնհայտ հակամարտության մեջ:

Այնուամենայնիվ, կրոնական փորձի բազմազանությունն իր հիմքում ունի դրանց միասնականությունը: Ինչպես նշում է Քեն Ուիլքերը՝ բարձրագույն նույնականացման ապրումները ցույց են տալիս, որ բոլոր կրոններն իրենց էությամբ նույնն են, դրանց հիմքը մեկն է, ինչը թույլ է տալիս խոսել «կրոնների տրանսցենդենտալ

միասնականության» մասին [4, ԵՄ. 17]: Այս տեսանկյունից սեփական դաժանության հիմքերը կրոնական ոլորտում փնտրելն աղավաղում է իրականությունը: Մենք փորձում ենք հիմնավորել մեր արարքների կենսական անհրաժեշտությունը՝ բխեցնելով այն ազգային կամ կրոնական ընդհանուրի շահերից: Մա, ըստ ամենայնի, բխում է դատապարտված լինելու վտանգից: Պատասխանատվությունն ընկնում է ճակատագրական ուժերի, աստվածությունների վրա: Մենք ընդամենը ծառայում ենք նրանց, կատարում նրանց կամքը: Եվ, եթե մեր իսկ դավանած կրոնի դրույթները նույնպես մեղադրում են մեր կողմից կատարված ոճրագործությունները, մենք փորձում ենք արդարանալ աստվածների առջև՝ ցույց տալով, որ մեր արարքներն ամբողջությամբ ծառայում են նրանց: Արդյունքում աղավաղվում է հավատի առաջնային իմաստը՝ այն վերածվում է սեփական արարքներն արդարացնելու միջոցի: Մարդկությունը պառակտվում է՝ ստեղծելով առանձին, իրարամերձ կրոնական համակարգեր:

Մերժողական դիրքորոշում: Երբ արդարացման ոչ մի միջոց չի օգնում ազատվել մեղադրանքներից, գործի է դրվում մերժման մեխանիզմը: Մարդը սկսում է հավատալ և համոզել այլոց, որ մեղսագործություն ընդհանրապես չի եղել: Նա հիշողությունից արտամղում է անընդունելի իրադարձությունը՝ ենթադրելով, թե այդ ձևով հաղթում է «դատավարությունը»: Իրականում ամեն ինչ ճիշտ հակառակ կերպ է դասավորվում:

Ես-ն, ըստ հոգեվերլուծության, արտամղման միջոցով արգելափակում է անընդունելի պատկերացման գիտակցումը: Սակայն վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ պատկերացումը պահպանվում է որպես անգիտակցական բովանդակություն [7, ԵՄ. 247]: Ընդ որում, եթե անհատական մակարդակում հնարավոր է պատկերացման լիարժեք արտամղում, ապա համամարդկային մակարդակում դա սկզբունքորեն անհնարին է: Մարդկությունը, որպես մեկ ամբողջություն, միաձայն չի մերժում ցեղասպանության փաստը: Արտամղումն այստեղ կրում է մասնակի բնույթ: Իսկ չհաջողված, մասնակի արտամղումը, որպես արդյունք, հանգեցնում է հոգեշեղման՝ նեվրոզի [6, ԵՄ. 539]: Այս տեսանկյունից ցեղասպանության մերժումը հանգեցնում է համամարդկային նեվրոզի, որը դրսևորվում է վերը քննարկված դիրքորոշումների ձևով: Մենք կամ խուսափում ենք ցեղասպանության փաստի քննարկումից, կամ հարաբերականորեն արդարացնում ենք այն, անվերապահորեն դատապարտում կամ լիովին արդարացնում ենք ցեղասպանությունը: Բոլոր դեպքերում այդ դրսևորումներից յուրաքանչյուրը զրկում է մեզ ինքնաճանաչման հնարավորությունից, հեռացնում մեր իսկ իրականությունից:

Այսպիսով, ցեղասպանությունը, որպես պատմական իրադարձություն, նպաստում է համամարդկային մակարդակում հոգեախտաբանական երևույթների առաջացմանը: Ոչ ոք, անկախ բնակության վայրից և ապրած ժամանակաշրջանից, անկախ իր սեփական հայացքներից ու կենսակերպից չի կարող ապահովագրված լինել այդ երևույթների ազդեցությունից: Հարկ է հիշել, որ ցեղասպանությունը մի օղակ է մարդկության ինքնակործան դրսևորումների պարբերական շարքում: Ազատվել այդ դրսևորումներից հնարավոր է միայն պարզելով ցեղասպանության ընդհանուր պատճառները, ուրվագծելով այն հետևանքները, որոնցով հղի է այդ արհավիրքը: Դրա պատասխանատվությունն ընկած է բոլորիս ուսերին, մեղադրելով և դատապարտելով ուրիշների, հնարավոր չէ լուծել համայն մարդկության առջև

ծառացած այս ճակատագրական խնդիրը: Պետք է հավատալ, որ մարդն ի գործու է հաղթահարելու զարգացման ճանապարհին կանգնած բոլոր արգելքները, ընտրելու արարման ուղին, անցնելու կատարելության նոր մակարդակի: Թումանյանի խոսքերով՝

*Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:*

Դեպի Մարդն ընկած ճանապարհին յուրաքանչյուր մարդասպան դրսևորում ծառայում է որպես ահագանգ, որ կա այդ ճանապարհից շեղվելու հնարավորություն: Անհրաժեշտ է ոչ թե ծածկել սեփական թերությունները, այլ պարզել դրանց բնույթը, ճանաչել և ընդունել դրանք: Թվում է, թե սա պայքարի միակ ձևն է, միայն այս կերպ է հնարավոր գալիք սերունդներին ազատել մարդկության ուսերին ծանրացած սարսափելի բեռից՝ ինքնասպանության մոլուցքից: Հարկ է գիտակցել, որ մենք բոլորս ենք պատասխանատու մեր ապագայի համար: Ցեղասպանության մերժման փաստը հղի է բազմաթիվ հոգեախտածին հետևանքներով, այն հնարավորություն է ստեղծում չարիքի հետագա դրսևորումների համար: Դա կանխելու նպատակով անհրաժեշտ է մշակել քաղաքական և իրավական այնպիսի մոտեցումներ, որոնք առավելապես կնվազեցնեն սեփական մեղքը ճանաչելու դիմադրությունը: Հարկ է ընդունել, որ համայն մարդկությունն է ներդաշնակ գոյատևմանը խանգարող չարիքի սեփականատերը: Հարկ է, ճանաչելով կանխել սեփական էության բացասական կողմերի դրսևորումները: Սա ամենակարևոր, բայց ամենադժվար քայլն է դեպի ինքնաբացահայտում, դեպի կատարելություն:

Գրականություն

1. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, Տաս հատորով, Հ. 2, Քառյակներ, բալլադներ, թարգմանություններ, Երևան, ՀՀ ԳՍ հրատ., 1990:
2. Ассаджиоли Р., Психосинтез: теория и практика. – М.: «REFL-book», 1994. – 314 с.
3. Плотин. Четвертая эннеада. – СПб.: «Издательство Олега Абышко», 2004. – 480с.
4. Уилбер К., Никаких раниц: Восточные и западные пути личностного роста. – М.: ООО Издательство АСТ, 2004. – 283 с.
5. Фрейд З., Введение в психоанализ. // Психоаналитические этюды. – Минск, ООО «Попурри», 1999. с. 608.
6. Фрейд З., Психоаналитические этюды. – Минск, ООО «Попурри», 1999. - 608с.
7. Фрейд З., Страх. // Фрейд З. Остроумие и его отношение к бессознательному. – Мн.: ООО «Попурри», 1999. – 496с.
8. Фромм Э., Анатомия человеческой деструктивности. – Мн.: ООО «Попурри», 1999. - 624с.
9. Юнг К.Г. Божественный ребенок. – М.: «Олимп», «Издательство АСТ-ЛТД», 1997. – 400с.
10. Юнг К.Г. Психология бессознательного. – М.: ООО «Издательство АСТ-ЛТД», «Канон +», 1998. - 400с.
11. Glasser W. Reality Therapy: A New Approach to Psychiatry. - New York: Harper and Row, 1975, pp. 192
12. Jaspers K. The question of German guilt. - New York, Fordham University Press, 2000, pp. 117

Гагик Петросян
Факультет философии и психологии ЕГУ
Лектор кафедры социальной психологии

ПСИХОПАТОГЕННЫЕ ПОСЛЕДСТВИЯ ГЕНОЦИДА

Ключевые слова: *чувство реальности, самопознание, отношение к историческому факту, метафизическое чувство вины.*

В статье делается попытка выявления психопатогенных последствий геноцида, как на индивидуальном так и на общечеловеческом уровне. Показано, что геноцид, как историческое событие, кроме непосредственного воздействия имеет еще и опосредствованное воздействие на следующие поколения, на человека вообще, вне зависимости от времени и места его проживания. Такое воздействие обусловлено отношением человека к факту геноцида. Анализируя некоторые возможные варианты отношений к геноциду, показано, что геноцид, как исторический факт, приводит к искажению реальности, препятствует самопознанию, способен спровоцировать патогенные изменения в психике человека.

Gagik Petrosyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Lecturer of the Department of Social Psychology

PSYCHOPATHOGENIC CONSEQUENCES OF GENOCIDE

Key words: *sense of reality, self-perception, attitude toward historical fact, metaphysical guilt.*

We made an attempt to identify pathopsychological consequences of Genocide on the individual and human levels. Genocide, as a historical event, in addition to the direct impact has also indirect impact on the next generation, on people in general, regardless of the time and place of its generation. This impact is people's relation to the fact of genocide. Analyzing some possible relationship to genocide, it is shown that the historical fact of genocide leads to a distortion of reality, prevents self-knowledge, provokes pathogenic changes in the human mind.

Նելլի Հարոյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.
n.haroyan@mail.ru

ՊԱՏՄԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Հանգուցային բառեր՝ ազգային մտածելակերպ, էթնոմշակութային գործոն, էթնոպաշտպան գործառույթ, եկեղեցի, ազգային հոգեկերտվածք:

Աշխարհաքաղաքական ներկա զարգացումների համատեքստում հայ ժողովրդի և պետության առջև ծառացած հիմնահարցերի լուծման ռազմավարությունը պետք է խարսխվի համազգային շահերի գերակայությունից բխող ներքին ու արտաքին ճկուն քաղաքականության գործադրման վրա: Նման գործելակերպի որդեգրումը թելադրվում է ազգային ինքնության պահպանման, ազգային պետության զարգացման, համաշխարհային գործընթացներին ինտեգրվելու հրամայականներով, որի արդյունավետությունը մեծապես կախված է նաև ազգային հոգեբանության մեջ պատմականորեն ձևավորված, ազգային մտածելակերպի և հոգեկերտվածքին բնորոշ յուրահատկությունների ճանաչումից:

Այսպես, պատմականորեն Արևելքը և Արմուտքը միացնող առևտրական ճանապարհները անցնում էին Հայաստանով, ինչը շեշտում էր նրա կարևորությունը միջազգային քաղաքականության մեջ: Հայաստանի ռազմավարական դիրքը պատճառ է հանդիսացել Արևելք-Արևմուտք առճակատման համար: Սկսած IV-րդ դարից, երբ Հայաստանն ընդունեց քրիստոնեությունը, Արևելքի ու Արևմուտքի միջև մշտապես առկա մշակութային և քաղաքական հակասություններն առավել սրվեցին, իսկ պետականագուրկ հայ ժողովրդի դրությունն առավել ծանրացավ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականության հետևանքով, որի բարձրակետը եղավ 1915-16 թթ. երիտթուրքերի կողմից արևմտահայության նկատմամբ իրագործած ցեղասպանության դիվային ծրագիրը:

Ընդհանուր առմամբ, հայ ժողովրդի հոգեկերտվածքի ձևավորման վրա իրենց բացասական ազդեցություն են ունեցել պատմական երկարատև ժամանակահատվածներում պետականությունից զրկված լինելը, զավթիչների իշխանության ներքո գտնվելը, իսկ ցեղասպանության հետևանքով նաև հայրենիքի մեծ մասից զրկվելը: Ինչպես Հեգելն է նշում. «Ժողովրդի ոգին, նրա պատմությունը, կրոնը, քաղաքական ազատության աստիճանը ներքնապես միահյուսված են և գտնվում են փոխազդեցության մեջ: Եվ եթե առանձին մարդու բարոյականությունը ձևավորելը մասնավոր կրոնի, ծնողների, սեփական ջանքերի ու հանգամանքների գործն է,

ապա ժողովրդի ոգին ձևավորելը մասամբ ժողովրդական կրոնի, մասամբ էլ քաղաքական պայմանների գործն է» [2, սրբ. 78]:

Պատմության հոլովույթով հայի գիտակցության ու հոգեբանության միջից դուրս է մղվել պետականության գաղափարը, ազգային-պետական-քաղաքական մտածելակերպը, իսպառ ջնջվել է արժանապատիվ ապրելու գիտակցությունը և փոխարենը սերմանվել է գոյատևելու կենսափիլիսոփայությունը: Ազգային մտածելակերպի ձևավորման վրա վճռորոշ է եղել ինչպես պատմաքաղաքական պայմանների, այնպես էլ կրոնաքաղաքականի ազդեցությունը: Դարեր շարունակ պետականության բացակայության պայմաններում հայ ժողովրդի հավաքական գիտակցությունը խարսխվել է եկեղեցու, որպես ազգային բարձրագույն արժեքի վրա: Պատմական հանգամանքների բերումով, օժտվելով ազգային կառույցի դերով և վերածվելով ազգային շահերի միակ արտահայտչի ու պաշտպանի, ազգային գիտակցության և ինքնագիտակցության ձևավորման հիմք, սնուցման աղբյուր դարձած կրոնակեղեցական մտածելակերպը, արտամղելով ազգային-պետականը, գոյապայքար-գոյատևումը վերածվել է կենսագործունեության որոշիչ տարրի: Եվ գոյապահպանությունը հայի համար դարձել է գերխնդիր-գերնպատակ:

Օբյեկտիվորեն պետականության գաղափարին փոխարինել է եկեղեցու գաղափարը. ահա թե ինչու, այսօր էլ, հայը ավելի շատ եկեղեցասեր է, քան թե պետականասեր, մինչդեռ վաղուց անցել են եկեղեցիով պաշտպանվելու, եկեղեցիով ապրելու ժամանակները, դա հեռավոր անցյալին է պատկանում: Այսօր նույնիսկ արտերկրում Հայ եկեղեցին ազգապահպան իր գործառույթը լիովին կատարել չի կարող, որովհետև արմատապես փոխվել են ժամանակները: Կրոնական կառույցը, տվյալ պարագայում Հայ եկեղեցին, սոցիալ-քաղաքական կամ ազգային իդեալի քարոզիչ չէ և չի կարող լինել: Անշուշտ, Հայ եկեղեցին իբրև էթնոհոգեբանական խորհրդանիշ, խտացում և մարմնավորում է որոշակի բովանդակություն. այն դադարել է հայի համար զուտ դավանանք լինելուց և վերածվել է կրոնի. «Հայ եկեղեցին մեր կրոնն է», ասում է նաև այսօրվա հայը. «Հայ քրիստոնյա» արտահայտությունը (ազգայինի և կոսմոպոլիտիզմի համադրում) հակասություն է ինքնին, բայց և միաժամանակ էթնոհոգեբանական իրողություն՝ քրիստոնեությունը դավանող ոչ մի ժողովուրդ իրեն նման որակում չի տալիս (օր.՝ ֆրանսիացի քրիստոնյա, իսպանացի քրիստոնյա և այլն):

Նման մտայնությունը ձևավորվել է պատմաքաղաքական իրողությունների և եկեղեցական գաղափարախոսության ազդեցության ներքո: Ազգային և կրոնական արժեքների նույնացման, ազգային պատկանելիությունը կրոնական պատկանելիությամբ փոխարինելու բարոյահոգեբանական, պատմական հիմքը ազգային գիտակցության մեջ դավանական /կրոնական/ և ազգային պատկանելիության նույնացումն է, որի հիման վրա էլ ձևավորվել է ազգային միասնության գիտակցությունը: Պատմական հանգամանքների բերումով, այն է՝ պետականության բացակայության պայմաններում հայ եկեղեցին, ստանձնելով կրոնական կազմակերպությանը ոչ բնորոշ՝ մշակութային, սոցիալ-քաղաքական, դիվանագիտական գործառույթներ, վերածվում է էթնոմշակութային կառույցի և միաժամանակ, իրականացնելով էթնոտարբերիչ ու էթնոպաշտպան գործառույթ, դառնում է ազգային միասնության խորհրդանիշ, որը և, ի վերջո, նպաստում է ազգային հոգեբանության մեջ եկեղեցու,

որպես ազգային կառույցի պաշտամունքի ձևավորմանը: *Ո՞վ ենք մենք հիմա. ազգ, ժողովուրդ, թե՞ համայնք:*

Խոսելով էթնոգենեզի գործընթացում քրիստոնեական եկեղեցու պարտվողական ռազմավարության մասին՝ Ա.Նալչաչայնը, մասնավորապես, նշում է. «Եթե անգամ նույնիսկ էթնոգենեզը շարունակվում է, ապա միայն դեպի մի ամբողջ խումբ բացասական, ինքնաքայքայող գծերի, այդ թվում, վախկոտության կամ գերզգուշավորության, հարմարվողականության և ստրկամտության, մագոլիզմի, արտամղված ագրեսիայի ուղղությամբ, որը տեղափոխվում է թույլերի վրա (քավության նոխազ)» [3, էջ 155]:

Հայ ազգային մտածելակերպի մեջ նկատելի են ծայրահեղություններին միտված հակասական գծեր, որոնց մասին խոսել է նաև սփյուռքահայ մտածող Հ. Ասատրյանը: Այսպես, տալով հայ մարդու հոգեբանական բնութագիրը, նա նշում է, որ, օրինակ, հայ մարդու էության մեջ համատեղվում, գոյակցում են հայրենասիրությունը և անձնապաշտությունը, ոգեղենի պաշտամունքն ու դրամատենչությունը:

«Հայ ժողովրդի ողբերգությունը նրանում է,- գրում է Ասատրյանը, - որ արև է երգում, բայց քնամոլ է, իդեալիստ է, բայց դրամատենչ, հայրենասեր է, բայց անձնապաշտ, ուժի պաշտամունք ունի, բայց ոչ հզորության կամք, <...> մշակութային տենչ ունի, բայց ոչ քաղաքական կորով, արդարամիտ է, բայց ոչ ճշմարտասեր, ցեղ է, բայց գերադասում է ժողովրդի բարոյականը: Զգացմունքների շփոթ է հայ ժողովուրդը, շուտ եկած էություն»[1, էջ 54]:

Անշուշտ, համազգային միասնական կամքը չի կարող դրսևորվել մտախառնվածքի նման բևեռացման պայմաններում: Այդ խառնաշփոթը տիրում է նաև պետական մակարդակում, քանի որ քաղաքական միավորումների դիրքորոշումները չեն արտահայտում համապետական և համազգային շահերից ելնող երկրի զարգացման միտումները: Ասպարեզում գործող քաղաքական ուժերը առավելապես մտահոգված են կամ իշխանության վերարտադրման և մերթ ընդ մերթ արտաքին ճնշումներին թույլ հակազդելու, կամ լիովին, անվերապահորեն դրանց ենթարկվելու, տնտեսական, իրավական և քաղաքական ոլորտներում մասնակի բարեփոխումներ կատարելու գործընթացներով: Մի՞թե պետական մտածելակերպի բացակայության մասին չի վկայում, օրինակ, առաջին հայացքից աննշան թվացող այն իրողությունը, որ նույնիսկ պետական այրերի բառապաշարում՝ նախարարներ, մարզպետներ ու քաղաքապետեր, պետական կառույցների ղեկավարներ, հազվադեպ կհանդիպեք «Հայաստանի քաղաքացի» արտահայտությանը, փոխարենը հաճախ է գործածվում «Հայաստանի բնակչություն կամ ազգաբնակչություն», «հայ ժողովուրդ» բառակապակցությունները: Վերջիններս համայնքի, բայց ոչ պետականորեն կազմակերպված հանրության բնութագրություններ են: Անհրաժեշտ է ընդունել, որ ազգային հոգեբանությանը ներհատուկ բարդությոների (ազգային արժանապատվությունը վիրավորող հոգևոր ստրկամտություն, թերարժեքության զգացում սերմանող «գոյատևման» կենսափիլիսոփայություն, բարոյական հաղթանակներով սնվելու սոցիալ-հոգեբանական դիրքորոշում և այլն) հաղթահամանը հնարավոր է հասնել պետական-քաղաքական և սոցիալ-մշակութային արժեքներով կենսագործելու պարագայում:

Այսօր, միջազգային հանրության կողմից Հայոց Ցեղասպանության պաշտոնական ճանաչման բացակայության պայմաններում, պատմական արդարության

զգացումի անբավարարվածությունը հայ մարդու մոտ ստեղծում է հոգեկան անպաշտպան վիճակ, որը և շարունակում է բացասաբար ազդել ազգային մտածելակերպի վրա: Քանի որ միայն պետականության զգացում ունեցող քաղաքացին կարող է պահանջել և լսելի դարձնել իր ձայնը միջազգային ասպարեզում, ուստի և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նոր մեկնակետ պետք է լինի հայ հասարակական գիտակցության մեջ պետական-քաղաքական մտածելակերպի ձևավորման, պետականության զգացումի, պետության և օրենքի «պաշտամունքի» հաստատման համար:

Գրականություն

1. Ասատրյան Հ., «Արթնացիր հայ մարդ», Եր., 1988:
2. Гегель Г.В.Ф., Работы разных лет.-М., 1970:
3. Налчаджян А. Этногенез и ассимиляция, «Огебан», Ереван, 2003:

Нелли Ароян

*Факультет философии и психологии ЕГУ
к.п.н., доцент кафедры социальной психологии*

ВЛИЯНИЕ СОЦИАЛЬНО-ИСТОРИЧЕСКИХ ФАКТОРОВ НА ФОРМИРОВАНИЕ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО МЫШЛЕНИЯ

Ключевые слова: *национальный менталитет, этно-культурный фактор, этнозащитная функция, церковь, национальный психотип.*

В данной статье обсуждается влияние исторических и социальных факторов, в частности - роли армянской церкви и отсутствия государственности на протяжении веков, на формирование образа национального мышления и характера армянского народа.

Nelli Haroyan

*Faculty of Philosophy and Psychology, YSU
PhD, Associate Professor of the Department of Social Psychology*

THE INFLUENCE OF HISTORICAL AND SOCIAL FACTORS ON THE FORMATION OF THE ARMENIAN NATIONAL THINKING

Key words: *national mentality, ethno-cultural factor, ethno-defensive function, church, national psychotype.*

This paper reviews the historical and social factors, the role of the Armenian church, in particular, and the lack of statehood during the centuries in the formation of national thinking and the character of the Armenian people.

Матевосян С.Н.
кафедра психиатрии и наркологии факультета социальной медицины Государственной
классической академии им. Маймонида. д.м.н.

Стефаненко Т. Г.
зав. кафедрой социальной психологии Московского Государственного Университета им.
М.В. Ломоносова, д.п.н

Жмурин И.Е.
доцент кафедры психологического консультирования Московского Областного
Университета, к.п.н.

Китаина О.М.
кафедра социальной психологии Московского Государственного Университета им. М.В.
Ломоносова, психолог
s.matevossian@gmail.com

ВЗАИМОСВЯЗЬ ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ И ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ АРМЯН

Ключевые слова: *геноцид армян, историческая память, этническая идентичность.*

По мнению современных ученых, геноцидом считаются массовые убийства и депортации, осуществленные правящими кругами Турции по отношению к армянам. Организованное и планомерно осуществленное младотурецкими правителями уничтожение 1,5 - 2 млн. армян в течение 1915-23 г. в Западной Армении и других частях Османской империи явилось первым геноцидом XX века. При этом, многие исследователи отмечают, что гонения и депортации начались задолго до 1915 г. [1, 5,6].

До сих пор геноцид является одним из наиболее обсуждаемых вопросов в СМИ Республики Армения (каждую неделю в газетах публикуется не менее двух статей, так или иначе касающихся этой темы) и среди армян, независимо от того, живут ли они в Армении или в других странах. Факт его непризнания со стороны Турции обостряет психологические переживания нескольких поколений армян. Очевидно, что данная проблема до сих пор оказывает огромное влияние на самосознание армян. Предположительно, память о геноциде выступает в роли психологического передатчика травмы сквозь поколения, оказывая трансформационное воздействие на идентичность армян [3; 7; 8; 10; 11; 12].

Вместе с тем следует отметить, что эмпирические исследования этой темы ранее не проводились, хотя проблема передачи информации через поколения, которая оказывает влияние на ее носителей, уже поднималась в мировой науке. Так, существуют исследования влияния холокоста на социальную идентичность евреев [2;

4], и изучение трансформации идентичности испанцев под влиянием воспоминаний о событиях гражданской войны [8].

Наличие в истории народа факта подобного насилия, предполагает, что потомки вынуждены жить в неопределенной ситуации: с одной стороны, все произошедшее было не с ними и виноваты в этом не современники, но, с другой стороны, эти ужасающие воспоминания не могут просто «уйти», так как они не проработаны, тем более, что обвиняемая сторона не признает факт геноцида. Возможно, подобное положение формирует в сознании армян «комплекс жертвы», который влияет на развитие неадаптивных компенсаторных механизмов.

По мнению М. Карагачян (2006), в настоящее время проявления психической травмы, оставленной геноцидом, представлено неоднозначно. Так, у молодого поколения проявление памяти об этом факте менее заметны, скорее эпизодичны, они как бы вытеснены постоянными ежедневными заботами и проблемами. У старшего поколения, особенно у пожилых людей, симптомы травмы проявляются более отчетливо. Это можно заметить во время семейных бесед, когда они рассказывают о прошлом. Часто грусть, печаль и гнев, исходящие из этих воспоминаний, превращаются в возмущение по поводу того, что почти спустя век Турция, США и некоторые другие страны мира не признают геноцид как исторический факт и руководствуются политическими и экономическими интересами при обсуждении этой проблематики [3].

Для анализа особенностей проявления исторической памяти современных представителей армянского народа о факте геноцида 1915-1923 гг. и взаимосвязи с этнической идентичностью было проведено эмпирическое исследование.

Объектом исследования явились представители армянского этноса, проживающие на территории Российской Федерации (г.Москва).

Предметом исследования явились показатели этнической идентичности армян и их взаимосвязь с исторической памятью о геноциде.

Целью исследования - изучение особенностей этнической идентичности армян в условии сохранения ими исторической памяти о геноциде.

Основными задачами исследования явились:

1. Теоретический анализ современных подходов в отечественной и зарубежной психологии по исследованию исторической памяти и этнической идентичности.
2. Проведение эмпирического исследования, позволяющего установить взаимосвязь исторической памяти и этнической идентичности современных армян.

В качестве методов исследования использованы: авторский опросник, госпитальная шкала тревоги и депрессии HADS [13], статистический анализ данных.

Авторский опросник включает три основные части: в первой части – восприятие своего этноса (типичного армянина), во второй – восприятие другого этноса (типичного турка), в третьей – само-восприятие. Восприятие турок изучается в данном исследовании в силу прямого отношения Турции к геноциду армян, кроме того результаты пилотажного исследования прошлого года выявили явное негативное отношение к Турции тенденцию обвинять в геноциде не только турецкое правительство, но и турецкий народ.

Опросник содержит четвертую часть, которая отвечает намерению сбора информации о респонденте: пол, возраст, национальность, семейное положение, наличие детей.

Էպոսում այն համոզմունքը կա, որ թշնամուց վրիժառությանը, որպես Մասնա տան կյանքի, բեկումնային կենսահաստատուն պահ, պետք է ըստ ամենայնի նախապատրաստվել. այն Տան ողջ՝ ոգեկան ու նյութական, կամային ու զինական, ավանդական ու ժամանակակից, նախնի ու ներկայում ապրողների ուժերի զորաշարժ է պահանջում, այն Տան՝ **իր** ոգենյութական զենքերն ասպարեզ հանելու հրամայականն է կանխադրում, այստեղ ամեն մի թեթևամտություն, ինչ-որ զգացմունքի տրվածություն՝ հղի է վտանգներով, - ասում է Էպոսի իմաստությունը: Շատ բան ասող է այս առումով, Էպոսի այն դրվագը, որտեղ, երբ Դավիթն իր «ժանգոտ թրով, «քոսոտ ձիով» ինչպես ասում է, Պառավը՝ ձեռք առնելով իր խենթ տաքարյունին (1, 250 էջ)՝ գնում է Մելիքի դեմ կռվելու՝ Պառավը նրան խորհուրդ է տալիս Հովհանից, հոր՝ Մհերի զենք ու զրահը, ձին, խաչ պատերազմին վերցնի - նոր գնա կովի: Ասում է «Մագյար չը կա՞ր քո հոր Քուռկիկ Ջալալին (6), /Մագյար չը կա՞ր քո հոր Թուր Կեծակին (7), /...Մագյար չը կա՞ր քո հոր Խաչ պատերազմին» (8) (1, 224 էջ): Դավիթը հետևում է Պառավի խորհրդին: Շա՛տ խորհրդանշական է Դավթի՝ պատերազմի դուրս գալուց առաջ Մամիկի՝ Դեղձում Ծամի (ուս «մուրազը» կատարվել էր...)՝ Քուռկիկ Ջալալուն ասած. «-Քուռկի՞կ Ջալալի, մեռնե՞մ քե, մուրա՞զ... /իմ Դավիթը հե՞ր չ'ունի՝ անե՞ս հերություն. /Իմ Դավիթ մե՞ր չ'ունի, անե՞ս մերություն. /Իմ Դավիթ աղբեր չ'ունի, անե՞ս աղբերություն. /Իմ Դավիթ դու տանես իր կաթնով աղբյուր (9). /Դավիթ ձիուց իջնի, իջնի ջուր խըմի, / Իմ Դավիթ դու տանես իր հոր փորձաքար- /Դավիթ իր թուր զարկի, զարկի սան, փորձի: /Քուռկիկ, քե ամանա՞թ /իմ նորամանուկ Դավիթ» (1, էջ 230-231): Տեղի է ունենում այն, ինչ Պառավի և Դեղձում Ծամի իմաստությունն էր ցանկանում: Ես Դավիթը թշնամուց իր վրեժն առնում է:

Գրականություն

1. Մասունցի Դավիթ (հայկական ժողովրդական էպոս), 2-րդ հրատ., «Հայպետհրատ», Եր., 1961թ.:
2. Այս առումով, Էպոսի վրեժի խորհուրդն էպոս տարբերվում է մերօրյա հասարակական հայի «վրեժից», որը «ressentiment»-ի՝ Մեծ Եղեռնի հարուցած ապրումների, անընդհատ որոճումների բացիլն է իրենում կրում: (Նիցշե-Շելլերյան բացահայտում՝ «ressentiment»-ի պատմահոգեբանական հիմնախնդրի մասին տե՛ս Նիցշեի «Չաստվածների մթնշաղ» գրքի հայերեն թարգմանության ծանոթագրություններում՝ հասկացության վերաբերյալ արված Կարեն Սվալայանի հիմնալի ծանոթագրությունը՝ «Ապոլոն» հրատ., Եր., 1992թ., 268-270 էջ):
3. «Մասնա ծոեր», մասն երկրորդ, Մանուկ Աբեղյանի խմբագրությամբ, Եր., 1951., 308 էջ:
4. Էպոսը՝ որսը, բնության մեջ շրջելը, այդպես նրանից լիցքավորվելը, իր հերոսների ուժավորման կարևոր պայմաններից է համարում:
5. Հայոց մեջ «վանքը» նախասկզբնապես այդ գործառույթն է ունեցել...
6. Խորհրդանշում է, ինչպես արդեն նկատել ենք, Մասնա տան էությունը, նախնյաց ոգին:
7. Խորհրդանշում է Մասնա տան «երկնուց իջած» ռազմի գործությունը:
8. Ռազմի, ուխտադրության հետ կապված խորհուրդ է արտահայտում:
9. Խորհրդանշում է հայոց բնաշխարհի կենսաց գործությունը: (Էպոսի այս և մյուս՝ դիցազնական խորհրդանիշերի մասին տե՛ս Սերգեյ Մանուկյան «Պարտեզ», Գարուն, հ. 9-10, 2014, էջ 60-67):

Сережа Манукян

*Факультет философии и психологии ЕГУ
Доцент кафедры теории философии и логики*

Лили Нерсисян,

*Факультет философии и психологии ЕГУ
студент кафедры теории философии и логики*

Мариам Петросян

*Факультет философии и психологии ЕГУ
студент кафедры теории философии и логики*

"ЗАМЫСЛ МСТИ" В ЭПОСЕ САСУНЦИ ДАВИД

Ключевые слова: *мсть, воин, Мсра Мелик, Куркик Джалали, Тур кецаки, Крест войны.*

В статье делается попытка на основе замысла мести посмотреть и понять эпос. Обсуждаются такие стороны эпоса, как мсть Сасна дома, как такового, основы и условия мести, объект и субъект мести, подготовка мести и этапы, и его исход. Новый смысл обретают такие эпосные символы, как "Куркик джалали", "Тур кецаки", "Хач патеразми", "Катнахпюр", "Марута высокая богородица".

Seryoja Manukyan,

*Faculty of Philosophy and Psychology, YSU
Assosiate Professor Of The Department Of Theoretical Philosophy And Logics*

Lily Nersisyan,

*Faculty of Philosophy and Psychology, YSU
Student Of The Department Of Theoretical Philosophy And Logics*

Mariam Petrosyan

Student Of The Department Of Theoretical Philosophy And Logics

"THE IDEA OF REVENGE" IN THE EPIC DAVID OF SASSOUN

Key words: *revenge, the warrior, Msra Melik, Kurkik Jalali, Tour ketsaki, Cross War.*

In this article an attempt is made to see and understand the epic on the basis of the idea of revenge. Such parts of the epic are discussed, as revenge of Sasna home, as such, basis and conditions of revenge, object and subject of revenge, revenge preparations and stages, and its outcome. New meaning acquire such epic symbols, as "Kurkik Jalali", "Ketsaki Tour", "Cross of war", "Katnaghbyur", "Maruta Virgin".

Владимир Микаелян

Факультет философии и психологии ЕГУ

Доцент кафедры социальной психологии

v_mikaelyan@mail.ru

ПРОЕКЦИЯ ТЕНИ: К ПРОБЛЕМЕ ЭТНИЧЕСКОЙ ДЕСТРУКТИВНОСТИ

Ключевые слова: *социально-психологическая и социально-политическая теория, массовая жестокость, деструктивность.*

Любая социально-психологическая и социально-политическая теория, так или иначе, опирается на какую-то концепцию личности. Так или иначе, мы постоянно интерпретируем поведение человека, а это значит что пытаемся подвести поведение под прогнозируемую реальность. В социальном мире невозможно жить, не обладая прогнозируемой концепцией реальности. Прогнозируемость поведения, с другой стороны опирается на некую шкалу ценностных ориентаций, имеющую характер приемлемости и долженствования в конкретном этносоциальном обществе. В этом контексте рассмотрения, массовая жестокость, деструктивность, конечно же лишены признака приемлемости и часто плохо прогнозируемы. Прогнозируемыми мы можем считать такие феномены, которые могут быть подведены под какую-то шкалу ценностей. Как правило, шкала ценностей является этношкалой. Каждый этнос имеет свою ценностную шкалу, которая обеспечивает не только направленность социально-психологического развития, но и включается в общечеловеческий контекст социального развития. Такие гуманитарные катастрофы как массовое насилие и геноцид не вписываются в общечеловеческую концепцию социального развития. Однако, отрицание факта не является его уничтожением. Понимание социального зла позволяет минимизировать процесс его разрастания. Метастазы деструктивности и жестокости распространяются угрожающе интенсивно и перед человечеством остро ставится проблема спасения социальности. Никакая космическая катастрофа не способна так обезобразить мир, как человеческое зло. Акты вандализма и жестокости распространяются в целом на уничтожение социальной и психологической эволюции человека. Человеческая жестокость и агрессия, деструктивность и вандализм не првнесены извне, они являются порождением самого человека. Именно поэтому необходимо понимание тех психологических механизмов, которые порождают катастрофы социальности. Вполне очевидно, что мы имеем дело с инволютивными процессами, с инволюцией Я-сознания. Межэтническая толерантность является следствием длительной и сложной эволюции Я-сознания. Символически, этот процесс начинается с истории «смешения языков». Однако, нельзя воспринимать эту легенду столь однобоко, как

обычно это делается. Согласно Р. Фрилингу, языки были смешаны богами вовсе не для вражды людей, так как непонимание, неминуемо приводит к вражде, - языки были смешаны именно потому, чтоб люди научились на разных языках познавать и выражать истину. Это значит, что мы не можем позволить себе «бумажной» роскоши смотреть на все происходящее в контексте черно-белой реальности. Мы не можем не видеть того, что Земля пока не стала для человечества «землей обетованной». Закон психодинамической психологии гласит: бессознательное проецируется. Проекция - это один из основных механизмов, позволяющих нам вплотную соприкоснуться с бессознательным уровнем психики. Этот механизм свойственен как человеку, так и человечеству. Поэтому мы можем говорить об этнической проекции. Когда задействована проекция, тогда Я-сознание вытесняется, передавая свою функцию контроля бессознательному уровню психики. В свою очередь контроль бессознательного является хаосом, «способным порождать чужовищ», - массовую жестокость и массовый вандализм. Один акт вандализма отбрасывает психическую эволюцию в мрачные времена стадной дикости, или психической инфляции. «Следует рассмотреть форму психической инфляции, особенно важную для понимания политического поведения, а именно: коллективную психическую инфляцию, являющуюся следствием групповой идентификации с коллективным бессознательным. В этом случае коллективное или групповое Эго уступает перед напором коллективного бессознательного содержания. Вполне возможно. Что отдельные члены коллектива уже испытывают состояние психической инфляции благодаря ощущению своего единства с группой». [1,37] Акты вандализма, по сути, являются регрессией на примитивные животные уровни развития. Мы не употребляем выражения «примитивные уровни сознания», так как считаем, что любой, даже самый примитивный уровень сознания, делает невозможным акты массового насилия и жестокости. Мы считаем, что на уровне теоретического осмысления проблемы, вполне психологично приравнивать сознание социальности. Опасность психической инфляции или проявления стадной дикости более присуща полярным в социальном развитии этносам. Можно предположить, что этносы и культуры, находящиеся на уровне группового сознания более всего подвержены скатыванию на досоциальный уровень развития. В одном случае высокий психический уровень развития Я-сознания переходит в свою полярную противоположность, в другом же случае, низкий уровень развития, уровень группового сознания проявляет себя в качестве стадного Мы-сознания. Чувство превосходство, как и чувство неполноценности проецируются на внешний мир, на другие этносы. «Но в любом варианте коллективная воля группы к власти активизируется и требует выражения, временами даже в самоубийственных пределах, как показывает пример нацистской Германии». [1, 77] Насилие, геноцид не может быть определен иначе как массовый и этнический психоз. Иррациональные и примитивные разрушительные импульсы находят удовлетворение в таких катастрофах истории. Хотя и современный человек считает себя разумным существом, тем не менее, его разумность имеет весьма условный характер. Человек смог подчинить себе природные стихии, но перед лицом собственного бессознательного человек бессилен. Человек практически находится во власти своего бессознательного и максимум на что способно сознание, так это находить более или менее приемлемое объяснение

зверствам человека разумного. Рационализация деструктивности не выглядит более кошунственно нигде, кроме как при попытках политиков «объяснять» зверства политическими или историческими обстоятельствами. Попытки объяснения геноцида политическими и историческими методами открывают дорогу последующим зверствам: раз нечто можно объяснить, то это нечто вполне может повториться. И пока в мире будет существовать тенденция рационализации массовых зверств, человечество не освободится от этой опухоли в социальном организме. Важным, крайне важным является понимание психологической стороны социальных и гуманитарных катастроф. Прежде всего, нельзя постоянно убежать от признания того, что в деструкции, в массовых зверствах проецируется теневая сущность психики. Признание собственной Тени приводит к ее минимизации, вытеснение Тени приводит к проекции и массовому насилию. Тень как архетип часто воспринимают как часть, которая является полярной стороной сознательной личности. Тень — это другая сторона сознательной личности. Это непризнаваемая, несовместимая с нашим сознательным Я и низшая часть личности — «сумма всех тех непривлекательных качеств, которые мы предпочитаем скрывать, вместе с недостаточно развитыми функциями и содержанием личного бессознательного».[1, 79] Тень, по сути, асоциальна, поэтому мы можем приравнивать сознание социальности. Низшая сторона человека и этноса, расы или нации проецируется вовне, так как сознательная часть не желает ее признавать. Вытесненное имеет очевидную тенденцию возвращаться, и так как этот процесс необратим, то возвращенное вытесненное проецируется. Это и является примитивным способом иллюзорного освобождения от неприглядных черт. Однако, все вытесненное имеет тенденцию также к энергетическому разрастанию. Коллективная Тень этноса проецируется на другие этносы. Что означает, по сути, вытеснение Тени? Это сродни вытеснению социальности. Психика человека постоянно нуждается в отдыхе от социальности и если агрессия и другие стороны Тени не находят пути к сублимации, они выражаются непосредственно. Сублимация и есть процесс, с помощью которого индивид удовлетворяет свою теневую сторону в режиме наименьшего зла. Сублимация прикрывает также бегство от ответственности, так как признание Тени является принятием ответственности за свое поведение. Отрицание вины за геноцид как раз является бегством от ответственности. Однако, при этом можно допустить, что часто мы можем иметь дело с ситуацией неспособности переживать чувство вины за содеянное. Вытеснение теневых сторон одновременно может сопровождаться вытеснением чувства вины. И желание избавиться от чувства вины и собственных теневых сторон реализуется в проекции. Лучшим из наихудших и примитивных способов избавления от чувства вины является приписывание этой вины другим. Именно поэтому отрицание геноцида армян постоянно сопровождается тенденцией приписывать вину жертве. **Но приписывание вины уже означает признание геноцида.** · «Отрицательные проекции выполняют, в частности, роль защитных механизмов, помогающих индивиду или группе избежать прямого внутреннего контакта с несовместимыми и вызывающими беспокойство психическими содержаниями. Подобная экстернализация внутренних чувств-конфликтов — единственное средство для тени обрести внешнее и социально приемлемое выражение, поэтому как положительным, так и отрицательным проекциям принадлежит

важная роль и в политике».[1, 83] Мы ни на шаг не продвинемся в понимании политики, если не поставим во главу угла рассмотрение воздействия бессознательного на поведение и мировосприятие индивида. Что движет политиком, что является источником деструктивного начала массы,- эти вопросы остаются открытыми, без привлечения категории бессознательного. Вытесненная стадная дикость постоянно прорывается наружу и выливается в поведение масс. Однако, как известно, в поведение прорываются те содержания, которые были неудачно вытеснены, то есть акт вытеснения не был полноценным. Эти, неудачно вытесненные деструктивные импульсы: «Вместо того, чтобы быть выраженными в личной и поддающейся контролю форме, опускается на уровень коллективного бессознательного и возвращается в бурных массовых психозах и движениях» [1,78] Человек бессилен против своего бессознательного, он по большому сему, не контролирует его так как боится его, так как не понимает его. «И если в наше время западный человек не чувствует себя больше рабом природных стихий, он тем не менее по-прежнему смят и раздавлен силами собственного психического». [1,79] Поэтому понимание политики всецело обусловлено пониманием политиков, а точнее мотивацией их бессознательного. И пока это не сделано, над человечеством будет постоянно висеть угроза кама-локи. Попытки объяснения массовой жестокости, геноцида в границах политических и исторических теорий изначально обречены на провал, так как в этих границах мы имеем дело со следствием, но никак не с причинами, порождающими массовое безумие. Необходимо причинно рассмотреть психологические факторы. Среди этих факторов мы считаем необходимым выделить архетип Тени. Из аналитической психологии нам известна теория коллективного или объективного бессознательного. «Так как бессознательное подобно сознанию существует в двух разновидностях-личного и коллективного, то существует и коллективная Тень, то есть непризнаваемая и несовместимая низшая сторона расы, нации или группы. Поскольку тень, как личная так и коллективная содержит все те аспекты души, существование которых сознание не хочет признавать, они подвергаются, как правило, энергичному вытеснению». [1,80] Теневые неприемлемые стороны как личности, так и этноса, вытесняясь, приобретают чудовищные размеры, они разрастаются в геометрической прогрессии и пытаются найти выход. А так как уровень сознания не принимает теневые образы, и очень неохотно их сублимирует, то они превращаются в психических беспризорников. Выходом для этих содержаний становится не осознание, а избавление. Тень выбрасывается вовне с помощью движущей энергии проекции. Избегая социального выражения (сублимации) теневое содержание находит выход там, где он всегда был,- в стадной агрессии. Бессознательный уровень психики не столь предсказуем, как мы можем представлять. Вообще эмоциональный мир индивида, или бессознательность преподносит нам постоянные сюрпризы, которые мы не способны понять, а значит и принять. Понимание всегда означает принятие, однако принятие часто лишено глубокого понимания. В теневой активности бессознательного уровня психики можно легко обнаружить элементы, которые, казалось бы, не являются негативными. Принадлежность нации, уровень сознания, переживание принадлежности-это уже собственность бессознательного. Одно дело, когда индивид знает о своей принадлежности, и совсем другое дело как он пережи-

вает свою национальную идентичность. «Чувство превосходства, касающееся принадлежности человека к определенной нации, должно находить какое-то выражение; нередко осознание этого чувства происходит путем создания шовинистской мифологии и символов или даже мифологии расизма». [2,56-57] Однако чувство принадлежности к определенной нации может быть окрашено также позитивно, это чувство пронизывает патриотические настроения. Это переживание может быть отнесено к позитивным проявлениям, в том случае, что наряду с собственной нацией принимаются также другие. В такой ситуации мы имеем дело с позитивной проекцией. При отрицательной проекции задействован сильный страх, страх признания собственных темных черт, страх признания собственной неполноценности и собственного зла. Зло растет в мире по мере того, как мы отказываем ему в существовании в нас самих. Признавая же бревно в собственном глазу, мы уже не в состоянии видеть щепку в глазу ближнего. Но для этого надо иметь полноценно и спиритуально развитые психические способности. «Анализ происходящего при этом психологического процесса показывает, что, по существу, проекция разоблачает наши собственные, хотя и неосознаваемые нами качества: «Мы просто обвиняем нашего врага в недостатках, которые не хотим признать за собой». Самый приговор, который мы выносим врагу, фактически является приговором нашей бессознательной половине. Мы злимся на непризнаваемые нами составные части собственного существа. Вот почему лучший способ распознать отрицательную проекцию и научиться понимать свою тень — это обратить внимание как раз на тех людей и на те ситуации, которые вызывают у нас особенно сильное беспокойство, враждебность и злобу». [1, 84] В Теневой реальности содержатся эмоции и конфликты эмоций, но при этом не даны готовые сублимированные пути их разрешения. Этот эмоциональный хаос постоянно требует от нас траты энергии. Теневые стороны не могут быть вытеснены раз и навсегда, они не могут быть уничтожены, но могут быть преобразованы. Дальше-больше. При нашем бессознательном искусстве проецирования негативных черт, мы сами себя отбрасываем назад в нашем психическом развитии. Спроецировав на другой этнос собственную деструктивность, этнос – убийца подвергает себя опасности ослепнуть, опасности так и не увидеть свое истинное лицо. Агрессия против других, – это, прежде всего, агрессия против собственной эволюции. Это борьба с собственным эмоциональным рабством. Конечно же негативные проекции выполняют защитную роль, они несут в себе функции иллюзорной самотерапии. Индивид или этнос, проецирующий свои негативные черты, формирует для себя иллюзию психического благополучия. «Само существование врага, на которого можно свалить все зло, включая сюда и наши несбывшиеся мечты о перевоспитании и усовершенствовании жизни, – огромное облегчение для нашей совести и для компенсирующего чувства идеализма». [1,87]. При слишком высоком уровне накопления темных содержаний у этноса формируется потребность в образе внешнего врага, на которого можно легко спроецировать нежелательные психические черты. Причину собственных бед, собственной неполноценности легко найти во внешнем мире, так как путь к собственному бессознательному, к этнической душе слишком болезненный. Быть может, психический уровень развития этноса этим и определяется: насколько этнос готов принять собственную деструктивность, насколько полноценно видит в себе этнос темные

стороны, настолько можно говорить о его психической эволюции. Поиск врага, потребность в образе врага всегда скрывает потребность в проекции теневых переживаний. Каждый этнос нуждается в психической интроверсии, каждый этнос нуждается в том, чтоб открыто принять собственную теньевую структуру. В человеческом мире народы всегда находят выход негативной энергии Тени в войнах, в массовой жестокости, в геноциде. «Наше психическое, следовательно, нуждается во враге и даже вносит вклад в его создание» [1,88] Тот, кто ищет причины своих бед во внешнем, кто испытывает постоянную потребность такого поиска, тот является рабом собственной Тени. Этнос, постоянно ищущий врагов, находится в плену собственной коллективной Тени. Однако эта тенденция винить во всем своих врагов, никак не уменьшает энергию Тени, а наоборот питает ее. В действие вступает закон снежного кома, разрушающий все на своем пути, однако в итоге уничтожающий сам себя. Проекция Тени является одновременно процессом саморазрушения, процесс достаточно мучительный для проецирующего субъекта, будь это индивид, группа или этнос. Создается впечатление, что этнос уничтожающий другой этнос, сам стремится бессознательно к саморазрушению. «Эти саморазрушительные тенденции особенно заметны в поведении индивидов-невротиков и психотиков, но свойственны и большим группам». [1,86]. Так формируется психотическое общество. А так как процесс проекции продолжается, то в качестве психического наследства он передается от поколения к поколению. А это означает, что этнос, допустивший для себя идею геноцида, постоянно будет находиться в том же самом Теневом плену. Признание геноцида, является признанием этнической Тени. Признание Тени в таком случае запускает длительный процесс трансформации или энантиодромии, избавляющий данный этнос от компульсивной активности зла.

Литература

1. В. Одайник. Психология политики. „ЮВЕНТА" 1996.
2. Адольф Гуггенбуль-Крейг Наивные старцы. Анализ современных мифов Б.С.К.; 1997
3. К. Линденберг. Технология зла. Энигма, 1997.
4. Р.Фриллинг. Христианство и ислам. Энигма, 1997.

Վլադիմիր Միքայելյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դոցենտ

ՍՏՎԵՐԻ ՊՐՈՑԵՎՑԻԱՆ. ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՊԱԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

Հանգուցային բառեր: *սոցիալ-հոգեբանական և սոցիալ-քաղաքական տեսություն, զանգվածային դաժանություն, դեստրուկտիվություն:*

Դաժանության և վանդալիզմի գործողությունները, ընդհանուր առմամբ, ուղղված են մարդու սոցիալական և հոգեբանական զարգացման ոչնչացմանը: Վանդալիզմի գործողությունն, ըստ էության, հետընթաց է դեպի զարգացման կենդանական պարզագույն մակարդակ: Նման ապակառուցողականությունը և վայրենությունը, քողարկվելով քաղաքական և/կամ պատմական «բացատրություններով», միայն ու միայն նոր ուղիներ են ստեղծում այլ վայրենությունների համար. ինչու չանել այն, ինչը վերջում կարելի է «բացատրել ու արդարացնել»:

Vladimir Mikaelyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Associate Professor of the Department of Social Psychology

A PROJECTION OF SHADOW: ON THE PROBLEM OF ETHNIC DESTRUCTIVENESS

Key words: *social-psychological and social-political theory, mass cruelty, destructiveness.*

The act of cruelty and vandalism is generally directed to the distortion of social and psychological evolution of human. Act of vandalism in its nature is regress to the primitive level of development. New ways for other violations can be created when destructions and violations are concealed under the political and historical “explanations”: why not to do the things, which we can “explain and justify”.

Հայկունիի Կնյազյան
*Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնի դոցենտ*
Haykuhi.petrosyan2012@mail.ru

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԿԱՆ ՏՐԱՎՄԱՅԻ ՆԵՐԿԱ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

*Հանգուցային բառեր՝ հոգեկան տրավմա, պաշտպանական մեխանիզմներ, հետցե-
ղասպանական սթրես, ագրեսիվ վարք, կոլեկտիվ անգիտակցական, ազգային բնավորություն:*

Էթնոսի անցած ուղում լինում են ժամանակաշրջաններ, որոնք իրենց ամուր կնիքն են դնում այդ էթնոսի հոգեբանության վրա՝ վերափոխելով, էլ ավելի ամրացնելով հոգեկան կերտվածքը, կամ էլ խեղիչ ազդեցություն թողնելով ազգի և՛ հոգեբանական առանձնահատկությունների, և՛ հոգեվիճակների, և՛ վարքագծային դրսևորումների վրա: Այդպիսի քայքայիչ ազդեցություն հայ ազգի հոգեբանության վրա թողել է հայոց Մեծ եղեռնը:

Ցեղասպանությունը մարդկության հանդեպ կատարված ամենադաժան հանցագործությունն է, մարդկանց մի ողջ խմբի ոչնչացումը ռասսայական, ազգային-էթնիկական կամ կրոնական նշանների հիման վրա, ինչպես նաև միտումնավոր այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որը տանում է այդ խմբերի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը (5): Ցեղասպանությունը ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական երևույթ է: Այն իր ազդեցությունն է թողնում տվյալ ազգի էթնոբնորոշիչ գրեթե բոլոր հատկանիշների՝ լեզվի, մշակույթի, պատմական հիշողության և հոգեբանության վրա: Ցեղասպանությունը հանցագործություն է, որը բնութագրվում է ոչ միայն գոհերի, այլև հանցագործների մեծ քանակով:

Ցանկացած իրադարձություն, որն առաջացնում է սարսափի, վախի, ամոթի, հոգեկան ցավի տառապալից զգացում, հոգեկանի համար տրավմա է: Ցեղասպանությունն արտակարգ տրավմատիկ իրադարձություն է ինչպես առանձին անհատի, այնպես էլ մարդկանց հսկայական զանգվածների համար, ովքեր վերապրել են այդ իրադարձությունը: Հոգեկան տրավման ապրում է, որը դուրս է գալիս սովորական փորձի շրջանակներից՝ պայմանավորված այն իրադարձությամբ, որը մարդկանց մեծամասնության մոտ առաջացրել է վախ, սարսափ, անգործություն: Դա հասկապես վերաբերվում է այն իրավիճակներին, որը անձը ընկալում է որպես իրեն կամ իր ընտանիքի անդամներին սպառնացող վտանգ (3):

Ժամանակակից հոգեվերլուծության մեջ հոգեկան տրավմա հասկացությունը մեկնաբանվում է հետևյալ կատեգորիաներով՝

1. անհատի փորձում տրավմատիկ իրադարձության առկայություն,

2. տրավմատիկ իրադարձության հոգեախտաբանական հետևանքներ, որոնք ընդգրկում են էգոի գործառնության սահմանափակումը, օբյեկտիվ հարաբերությունների խանգարումը, հոգեսոմատիկ ու աֆեկտիվ խանգարումները և այլն,

3. տրավմատիկ իրադարձության հետևանքով հետագա տրավմատիկացիայի ուժգնացում (7):

Կյանքին վտանգ ներկայացնող տրավմատիկ իրադարձությունը անձին դեմ առ դեմ կանգնեցնում է կենդանի մնալու խնդրի առջև, նրա ողջ հոգեկան կյանքը ենթարկվում է դաժան ցնցման, և անձի էգոն ստիպված ենթարկվում է ինքնապահպանման բնագոյին: Առաջ է գալիս անձի հոգևոր կյանքի ճգնաժամ: Բայց անձի մոտ ինքնապահպանման բնագոյն ունի նաև երկրորդ կողմ՝ ինքնորոշման պահանջ-մունք, և եթե նա չի մահանում տրավմատիկ իրադարձությունում, ապա անխուսափելիորեն բախվում է նոր, հոգետրավմատիկ իրականության հետ՝ ապրելու և լինելու ձգտման խախտման հետ («ինչի՞ համար ապրեմ, ու՞մ համար ապրեմ»): Ցեղասպանության դաժան փորձը բացասական ազդեցություն է թողնում ներկայի վրա:

«Ցեղասպանության զոհեր», «ցեղասպանության զոհերի հիշատակի օր» արտահայտությունների հետ ապրում են հայոց ցեղասպանությունն ապրածների արդեն երրորդ և չորրորդ սերունդները: «Զոհի» հասկացությունն անբաժան է ցեղասպանությունից: Զոհը ցեղասպանության պահին չէ, որ դառնում է զոհ, և ոչ էլ դահիճն է դահիճ դառնում ցեղասպանության իրականացման ժամանակ: Այդ երևույթը բարդ գործընթաց է, որն ավելի վաղ է սկսվում, քան բուն ցեղասպանությունը (1): Զոհի կերպարի հետ էթնիկական նույնացումը (իդենտիֆիկացիան) իր քայքայիչ ազդեցությունն է թողնում ազգի վրա՝ առաջացնելով հոռետեսություն, անլիարժեքության բարդույթ, անգործության, օտարվածության զգացում:

Յուրացրած անգործության տեսության հեղինակ Մ. Մելիզմանը անգործությունը բնորոշում է որպես վիճակ, երբ մարդուն թվում է, թե արտաքին իրադարձություններն իրենից կախված չեն և ինքը ոչինչ չի կարող անել դրանք կանխելու կամ փոփոխելու համար: Շրջապատող աշխարհի անվերահսկողության կրկնությունը բավարար է, որպեսզի ձևավորված անգործությունը սկսի գործել ինքնուրույն և ղեկավարի անձի վարքը: Մելիզմանը պնդում է, որ անգործություն ստեղծում են ոչ թե այդ իրադարձություններն ինքնին, այլ այդ իրադարձությունների անվերահսկողության փորձը (6): Մասսայական գիտակցությունը, որը հավատում է արդարամիտ աշխարհին, հեշտությամբ ընդունում է այն միտքը, որ եթե հայերին սպանում են, ուրեմն նրանք ինչ-որ բանում մեղավոր են: Հակառակն ապացուցելու անգործությունը ստեղծում է թերարժեքություն, իսկ երբեմն էլ կոնֆորմիստական վարքագիծ: Անձը դառնում է անօգնական, եթե սովորում է այն բանին, որ իրենից ոչինչ կախված չէ: «Մա մեր չար բախտն է», «աստված մեզ պատժել է» ճակատագրապաշտական (ֆատալիստական) գաղափարները հայ ազգի մի մասի մշտական ուղեկիցն են («մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր»):

Հոգեկան տրավման կամ դրա մասին հիշողությունը գործում է որպես օտար մարմին, որը օրգանիզմ ներթափանցելուց հետո դեռ երկար մնում է գործուն: Զ. Ֆրոյդն իր «Հիստերիայի հետազոտություն» աշխատության մեջ նշում է, որ նույնիսկ վաղուց տեղի ունեցած իրադարձությունները նորից կարող են անձի վրա զգայական ազդեցություն թողնել: Ի տարբերություն այլ հիշողությունների՝ դրանք տարիների հետ չեն դառնում պակաս ցավազին: Բոլոր դեպքերում տրավմատիկ ռեակցիան

ունի հակազդման լայն շրջանակ՝ անմիջական կամ նույնիսկ տասնյակ տարիներ հետո արտահայտվող սովորական լացից մինչև դաժան վրիժառություն (8): Նույնիսկ ցեղասպանության հաջորդ սերունդները, ովքեր չեն հանդիսանում դրանց անմիջական մասնակիցներ, ունեն վրեժի ու հատուցման գաղափարներ և ցանկություններ:

Ցեղասպանության հոգեկան տրավման գենետիկ հիշողությամբ փոխանցվում է սերունդներին: Դա զգալու համար պարտադիր չէ լինել այդ տրավմայի անմիջական մասնակիցը. բավական է նաև այդ ամենի մասին լսելը, տեսնելը: Ցավի, կորստի, վիրավորանքի, վախերի այդ ողջ ինֆորմացիան ենթագիտակցորեն փոխանցվում է և արտացոլվում գենետիկ հիշողության մեջ: Կ. Յունգը պնդում է, որ էթնիկական հիշողությունները որպես այդպիսին չեն ժառանգվում, այլ, ավելի շուտ, ժառանգվում է փորձի կրկնակի ապրման հնարավորությունը: Դրանք հանդես են գալիս որպես նախահակվածություններ, որոնք ստիպում են մեզ աշխարհին հակազդել որոշակի կերպով: Լատենտ հիշողությունները կախված են ժառանգական կառուցվածքներից, որոնք արմատավորվում են ուղեղում անձի կոմույալատիվ ապրումների արդյունքում [10]: Հետևելով Յունգին՝ կարելի է ենթադրել, որ մեր ազգի մոտ ձևավորվել է հատուկ ցեղասպանության արքետիպ, որոշակի գաղափար, որը պարունակում է նաև նշանակալից հուզական տարրեր: Դա ապրումների մշտական նստվածքն է, որը կրկնվում է շատ սերունդների անձնական փորձում:

Հայերի դաժան կոտորածները, չգտնելով իրենց ռացիոնալ բացատրությունը և ունենալով նսեմացման տարրեր, առաջ են բերում վախի, տագնապի, տխրության, մեղքի զգացման, հոգեկան անտանելի ցավի զգացումներ: Վախը ոչ միայն մարդկային կեցության բաղկացուցիչ մասն է, այլև XX դարի, ըստ Ա. Կամյուի «վախի դարի», կենտրոնական պրոբլեմներից մեկը, ավելի ստույգ այդ դարում ապրող մարդու պրոբլեմը: Ցեղասպանվածի սինդրոմի վախն ուղղված է իր էթնոսի պահպանմանը: Իզուր չէ, որ շատ հետազոտողների կողմից հայ մայրերի՝ իրենց երեխաների գերխնամակալությունը, օրորոցից մինչև հասունություն անընդհատ ու անդադար հոգածությունը դիտվում է որպես էթնիկական վախի ու տագնապի նշան: Իսկ հայ մոր «երեխան» մշտապես հովանավոր ունենալու ներոտիկ պահանջմունք է զգում, վախենում է մնալ միայնակ և լքված: Հայն անընդհատ սոցիալական աջակցության որոնումների մեջ է, միշտ իր հայացքն ուղղում է դուրս, դեպի օտարին: Միքո և խրախուսանքի արժանանալու ներոտիկ պահանջմունքը բնութագրվում է ուրիշներին հաճույք պատճառելու և նրանց սպասումներին համապատասխանելու ցանկությամբ: Անձն ապրում է իր մասին լավ կարծիք ստեղծելու համար և չափազանց զգայուն է անբարյացակամության և մերժման նշանների հանդեպ: Այստեղից էլ, երևի, օտարերկրացիների կողմից միշտ նշվող հայերի հյուրասիրության պատճառները:

Ցեղասպանության հոգեկան տրավմայի անբաժանելի մասը խորունկ ու անտանելի հոգեկան ցավն է, դեպրեսիվությունը: Ցեղասպանության զոհերն արդեն չեն տառապում, տառապում են կենդանի մնացածները (5): Հայերի դեպրեսիվության արտահայտությունները (անտարբերություն, աստենիա, անհեղոնիա, խորը տխրություն) իրենց դրոշմն են դրել հետցեղասպանական շրջանի և՛ մշակույթի, և՛ աշխարհընկալման, և՛ նույնիսկ արտաքին կառուցվածքի վրա, որի ակնառու ապացույցը հայերի խոշոր և թախճոտ աչքերն են:

Հետցեղասպանական սթրեսից հոգեբանական պաշտպանությունը թույլ է տալիս հարմարվել ստեղծված հանգամանքներին և ենթադրում է հուզական լարվածության հաղթահարման որոշակի միջոցների կիրառում: Հոգեբույժները, ովքեր գործ են ունեցել հոգեկան տրավմա տարած մարդկանց հետ, նրանց վիճակը գնահատում են որպես աֆեկտիվ-շոկային ռեակցիաներ, այսինքն այնպիսի էքստրեմալ ազդեցություններ, որի դեպքում անձը կա'մ դադարում է որպես այդպիսին գոյություն ունենալուց, կա'մ մտնում է «խոր հոգեբանական պաշտպանության մեջ»: «Ես դա չեմ լսել», «դա ինձ չի վերաբերվում», «ես դրա հետ գործ չունեմ»՝ այսպես են մեկնաբանվում այդ լուրերն անձի կողմից և ոչ մի հակազդում դրանց չի տրվում: Արտամոման պաշտպանական մեխանիզմը ամուր արմատներ է գցել հայերի հոգեբանության մեջ: Համիդյան ջարդերը, որոնք տեղի ունեցան Արևմտյան Հայաստանում 19-րդ դարավերջին, մոռացվեցին երիտթուրքերի իշխանության գլուխ գալով, որի հետևանքը եղավ 1915 թ. ցեղասպանությունը: Յոթ տարի անց, 1922 թ. Զմյուռնիայում քրիստոնյա բնակչությունը, որը չէր հավատում (չէր ուզում հավատալ) կոտորածի մասին լուրերին, ոչնչացվեց քեմալականների կողմից: 20-րդ դարակզբի վերջին նորից ջարդեր՝ այժմ էլ Սումգայիթում, Բաքվում և Կիրովաբադում: Սակայն հոգեբանական պաշտպանության մեխանիզմներն ամենակարող չեն. նրանք միայն կարող են դրանք արտամղել գիտակցությունից, բայց ոչ երբեք հոգեկան տիրույթից: Սրա հետևանքով սկսվում են սոմատիկ դրսևորումները, հոգեկան առանձնահատկությունների և վարքագծային փոփոխությունները:

Ցեղասպանությունը շատ հայերի մեջ առաջացրել է թերաթժեքության բարդույթներ, ազգի ապագայի նկատմամբ թերհավատություն, որոշ դեպքերում նույնիսկ ինքնաստյացություն՝ ազգային շահերի ու արժեքների մերժում ու օտարամոլություն: Անձի ներքին պասիվությունն ամբողջական համակարգի միայն մեկ կողմն է, որը կարելի է անվանել «օտարացման սինդրոմ»: Նա իրեն ընդունակ չի համարում ինչ որ բան փոխելու, այդ պատճառով զգում է իրեն անզոր, միայնակ և տագնապած: Նա իրեն չի տեսնում ամբողջի մաս և չի նույնանում նրա հետ: Կոնֆորմիզմը նրա համար անտանելի տագնապից ձերբազատվելու միակ եղանակն է, բայց և կոնֆորմիզմն էլ ոչ միշտ է թեթևություն բերում: Այդ պատճառով հայը բռնում է արտագաղթի ճանապարհը՝ դրսևորելով եզրեսիվ վարք (լատ. *egredior*- դուրս գալ, փախչել բառից), որը ֆրուստրացիոն, դժվար իրավիճակից փախուստն է: Այն առաջանում է հետևյալ հանգամանքների պատճառով՝

- ուրիշների կողմից դրական հուզական հարաբերությունների բացակայություն,
- ինքնագնահատման և ուրիշների գնահատման միջև տարբերությունների առկայություն,
- անհաջողությունների նկատմամբ մշտական վախ,
- անզորության զգացում, դժվարությունների հաղթահարման հույսի կորուստ,
- ներկայացվող պահանջների նկատմամբ բացասական վերաբերմունք [2]:

Հայերի ազրեսիվ վարքի առաջացմանը նպաստում են նաև բարձր ներշնչվողականությունը, ուրիշներին նմանակումը, հնարավոր անհաջողություններից խուսափումը, անսահմանափակ ազատության, ինքնուրույնության սպասումը: Արտագաղթը հարմարվողական վարքի ձև է անձի մակարդակում, սակայն անհարմարվողական և վնասակար՝ ազգային մակարդակում: Նոր սոցիալական միջավայրում

հայտնվելուց հետո ամիսների ու տարիների ընթացքում տեղի է ունենում հայրենիքից հեռացած անհատների ասիմիլյացիա՝ էկզոգամ ամուսնությունների ու իդենտիկության կորստի հետևանքով, և սեփական ազգի հետ օտարացման խորացում (ուծացում):

Ասիմիլյացիայի հետևանքով հայերի փոքր խումբը մի քանի սերունդ հետո միտում ունի դառնալու մշակութային և նույնիսկ ֆիզիկական առումով մեծ խմբից չտարբերվող, որը փաստորեն տանում է փոքր խմբի փաստացի վերացմանը: Հոգեբանական առումով ասիմիլյացիան այլ մշակույթի անհանդուրժողականության ավելի «փափուկ» ձևն է, «սպիտակ եղեռն», որի մասին դեռ դարասկզբին զգուշացնում էր Վ. Տերյանը՝ «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին...»: Ինքնակամ ասիմիլյացիան, որի նպատակը «ուրիշների» մեջ ապրելն է, նպատակ ունի հոգեբանորեն պաշտպանվել հնարավոր ագրեսիայից առավել ուժեղ «մենքի» մեջ մտնելով: Բայց սա հարցի լուծում չէ: Մարդը չի կարող ինքն իրենից փախչել: Հետցեղասպանական սթրեսը փոխել է ազգային բնավորությունը, հային դարձրել եսակենտրոն, անտարբեր երկրի և պետության հանդեպ:

Ազգի պատմությունը միշտ բխում է նրա հոգեկան կերտվածքից: Առանց այն իմանալու՝ նրա պատմությունը մեզ թվում է քառսային, պատահական իրադարձությունների շղթա: Իսկ երբ գիտես այդ կերտվածքը, ազգի կյանքը դիտվում է նրա հոգեբանական գծերի ճիշտ և ճակատագրական հետևանք: Կյանքի բոլոր դրսևորումներում ազգի անփոխարինելի հոգեկանն ինքն է ստեղծում իր ճակատագիրը [4]:

Դեպի անցյալն ուղղված դիրքորոշումը մարդկանց մեջ առաջացնում է հնազանդության և անելանելիության վիճակ և մարդիկ դառնում են «իրենց անցյալի գերին» (Կ. Յունգ): Եղածն արդեն չես փոխի: Նայել առաջ և տեսնել այն երկիրը, որի համար կարելի է ապրել: Է. Ֆրոմը մարդու կարևոր հատկանիշ համարում է հուսալը՝ *Homo esperans*՝ «հուսացող մարդ»: «Դա մարդու մարդ լինելու հիմնական պայմանն է: Եթե մարդը էլ ոչ մի հույս չունի, նա արդեն մտել է դժոխքի դռներից ներս և իր հետևում թողել է ողջ մարդկայինը» [9, էջ 262]:

Գրականություն

1. Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002:
2. Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб. 2000.
3. Калшед Д. Внутренний мир травмы. М., 2001.
4. Лебон Г. Психология толп. М., 1998.
5. Решетников М. М. Психическая травма. СПб, 2006.
6. Селигман М. Новая позитивная психология: Научный взгляд на счастье и смысл жизни. М., 2006.
7. Трубицына Л.В. Процесс травмы. М., 2005.
8. Фрейд З. Исследования истерии. СПб. 2005.
9. Фром Э. Психоанализ и этика. М., 1993.
10. Юнг К. Архетип и символ. М., 1991.

Айкуи Князян

*Доцент кафедры психологии Гюмрийского государственного педагогического
института имени М. Налбандяна, к.п.н*

СЕГОДНЯШНИЕ ПРОЯВЛЕНИЯ ПСИХИЧЕСКОЙ ТРАВМЫ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА

Ключевые слова: *психотравма, защитные механизмы, постгеноцидный стресс, агрессивное поведение, коллективное бессознательное, национальный характер.*

Геноцид – психическая травма, которая передается по наследству через генетическую память. Последствия этого касаются всех общих механизмов человеческой психики: культурно-исторические особенности, традиции, верования, речь, психо-физиологические особенности. В статье рассматриваются психологические последствия геноцида, осознание которых – важнейший путь преодоления психической травмы.

Haykuhi Knyazyan

*Associate Professor of Gyumri State Pedagogical Institute after M. Nalbandyan,
Department of Psychology, PhD*

THE PRESENT DISPLAYS OF THE PSYCHOLOGIC TRAUMA OF THE ARMENIAN GENOCIDE

Key words: *psychotrauma, defense mechanisms, post-genocide stress, aggressive behavior, collective unconsciousness, national character.*

The genocide is a psychic trauma which transfers to the generations' memory geneticist. Its consequences touch upon the most general mechanisms of the human psych: the historical-cultural peculiarities, traditions, language, even and the psycho-physiological peculiarities. The realization of the consequences of the genocide, and their clarification are the important way for overcoming the psychic trauma.

Իզաբելլա Ղազարյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի ասիստենտ
belkazar@gmail.com

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Հանգուցային բառեր՝ ցեղասպանություն, պատմական հիշողություն, քաղաքական և հոգեբանական «հաղորդագրություն»:

Հայոց Մեծ Եղեռնից հետո անցած հարյուր տարվա ընթացքում այն հիմնականում լուսաբանվել է պատմական տեսանկյունից: Պատմական լուսաբանումը կարևոր դեր է ունեցել՝ Ցեղասպանության հիմնահարցը քաղաքականացնելու, դրա՝ տարբեր երկրների կողմից ճանաչմանը ուղղված քայլերում: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ պատմական իրողությունների շարադրումը և դրանց մասին տեղեկատվության տարածումը (ինչով հիմնականում զբաղված էին թե Խորհրդային և թե՝ անկախ Հայաստանի իշխանությունները) ոչ բավարար արդյունքի բերեց: Աշխարհի մի շարք երկրներ, իհարկե, ճանաչեցին Ցեղասպանությունը, նույնիսկ դրա հերքման համար քրեական հետապնդում հայտարարեցին: Սակայն Ցեղասպանության ոճրագործը՝ Թուրքիան ոչ միայն չճանաչեց Ցեղասպանությունը, այլ նաև ակտիվ արտաքին քաղաքականություն վարեց և շարունակում է վարել այդ փաստի արժեզրկման ուղղությամբ: Ակնհայտ է, որ հիմնախնդրի միայն քաղաքական լուծումների որոնումը ծուղակ է, որում հայտնվել է այսօրվա հայ հասարակությունը՝ թե սփյուռքում և թե՝ Հայաստանում: Մեկ դար առաջ կատարված ոճրագործության վկաներ չեն մնացել, մնացել է միայն պատմական հիշողությունը և ծանր հոգեբանական բեռը, որն ընկել Ցեղասպանության հաջորդ սերնդների վրա: Եվ ոչ մի պատմական իրողություն և ճանաչում չեն թեթևացնում այդ բեռը: Այսօր արդեն կան հետազոտություններ, որոնք վկայում են այն մասին, որ Ցեղասպանության փաստը հայ ժողովրդի վրա ազդել է՝ որպես զանգվածային վնասվածք (տրավմա) [3]: Ինչպես երևում է հոդվածից, նման հետազոտություններ արվել են արևմուտքում, իսկ ժամանակակից Հայաստանի տարածքում Ցեղասպանության հոգեբանական հետազոտությունները հատուկենտ են [1, 2]: Մինչդեռ, մեր խորին համոզմամբ, հայ գիտնականները, հատկապես՝ հոգեբանները, պետք է կարողանան գիտական մշակման ենթարկել մեր ժողովրդի համար դարերով ցավոտ դարձաց հարցը: Բազմաթիվ և բազմակողմանի հետազոտությունների կարիք կա՝ սոցիալ-հոգեբանական, էթնոհոգեբանական, քաղաքական և կլինիկական- հոգեբանական և այլն: Հայտնի հոգեբանական օրինաչափություն է՝ կորուստը, ցավը վերապրելու համար դրա գիտակցման որակապես այլ մակարդակ է պահանջվում: Եվ այդ

գիտակցման գործում իրենց դերը պետք է ունենան հոգեբանները, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, հիմնախնդիրը պատմական-քաղաքական դաշտից տեղափոխվել է հոգեբանական դաշտ: Մեր հոդվածում մենք ներկայացնում ենք Ցեղասպանության քաղաքական-հոգեբանական կողմը: Ինչպես հայտնի է, ցեղասպանությունը քաղաքական հոգեբանության շրջանակներում դիտարկվում է՝ որպես քաղաքական բռնության յուրահատուկ ձև: Դ. Օլշանսկին նշում է, որ այն տարբերվում է քաղաքական բռնության այլ ձևերից նրանով, որ ոճրագործ են դառնում ոչ միայն պետական մարմինները և ուժային կառույցները այլ նաև սովորական մարդիկ: Ցեղասպանության ժամանակ հանցագործների թիվն այնքան շատ է, որ զանգվածային խանգարման տպավորություն է ստեղծվում, չնայած ոճրագործները հոգեպես առողջ մարդիկ են (4): Ինչպես տեսնում ենք, ցեղասպանությունը ուղղված է կոնկրետ քաղաքական հարցեր լուծելուն, և այդ իմաստով Հայոց Եղեռնը բացառություն չէր: Եվ այսօր էլ, Ցեղասպանության ճանաչման հարցը, դրա հետ կապված բոլոր միջազգային, մշակութային և գիտական միջոցառումները ծառայում են քաղաքական նպատակներին՝ և՛ Հայաստանում, և՛ Թուրքիայում: Մեր հոդվածում մենք չենք անդրադառնում այդ միջոցառումների մանրամասն ուսումնասիրությանը, չնայած դրանց ազդեցությունը Ցեղասպանության հիմնահարցի ընկալման վրա համարում ենք չափազանց կարևոր: Մեր հետազոտության շրջանակներում ընդգրկել ենք այլ բնույթի տեղեկատվություն, այն է՝ հայ քաղաքական դաշտի ներկայացուցիչների պաշտոնական ելույթները Ցեղասպանության հիմնախնդրի վերաբերյալ: Մեր նպատակն էր գտնել և ընդգծել այն ուղերձը, որը առկա է նշված ելույթներում. կարևոր էր բացահայտել այդ ուղերձի հոգեբանական իմաստը, հասցեատիրոջը և դրանում առկա գաղափարների ներազդման ուժգնությունը: Հոդվածի սկզբում արդեն ընդգծել ենք այն փաստը, որ Ցեղասպանության հիմնախնդիրը այսօր հայտնվել է հոգեբանական դաշտում, ուստի այս թեմայով բոլոր քաղաքական հայտարարություններում պետական-հասարակական մակարդակում արտացոլված է վերաբերմունքը խնդրին: Եվ այստեղ արդեն կարող ենք առնչվել հոգեբանական բախման հետ. հայ ժողովուրդը ազգային ինքնության մակարդակում ցեղասպանությունը վերապրում է՝ որպես հոգեբանական վնասվածք (3), իսկ պետական քաղաքական մակարդակում, որն ավելի գիտակցված և վերբալիզացված է, առկա են այլ երևույթներ: Կատարելով ելույթների տեքստերի բովանդակային վերլուծություն՝ մենք մտադիր ենք նկարագրել դրանք և պարզել, թե ինչպիսի հարաբերության մեջ են այդ երևույթները Ցեղասպանության հետ կապված տրավմատիկ ապրումների հետ: Այս նպատակով մենք ուսումնասիրել ենք ՀՀ նախագահի և պաշտպանության նախարարի, ԱԺ նախագահի, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն Արմեն Այվազյանի, Եվրոպայի հայերի հանրագումարի նախագահ Կարո Հակոբյանի և մի շարք այլ գործիչների ելույթները, որոնցում խոսվել է Ցեղասպանության մասին տարբեր միջազգային միջոցառումների ժամանակ:

Հատկանշական է, որ ընդհանուր առմամբ նման ելույթների քանակությունը բավականին քիչ էին: Ցեղասպանության մասին հայտարարությունները քաղաքական հարթակներից մեծ քանակություն են կազմում, սակայն դրանցում արձանագրվում է փաստը և դրա միջազգային ճանաչման կոչ է արվում: Վերջին տասնամյակներում մենք միայն Ցեղասպանությունը ճանաչած երկրների և պաշտոնյաների «հաշվառմամբ» ենք զբաղված: Փորձը ցույց է տալիս, որ դա քաղաքական հարց չի լուծում,

իսկ հոգեբանական էֆեկտն այդ պահին բավարարվածություն զգալն է. այն արագ անցնում է, և մենք սպասում ենք մյուս երկրի հայտարարությանը՝ այդ վայրկենական հաճույքը ևս մեկ անգամ զգալու համար: Արդյունքում մենք արդեն մոտեցանք Ցեղասպանության 100-րդ տարելիցին վշտի ծանր բեռով, որը չի անցնում Ցեղասպանությունը ճանաչած երկրների քանակի ավելացման հետ: Բացի այդ, Ցեղասպանության հարցի ընկալումները մեր հասարակության մեջ չեն փոխվում, քանի որ չկան բավարար քանակությամբ ազդակներ թե հասարակության ներսից և թե՝ պետական-քաղաքական ատյաններից: Հասարակության ներսում չկա համապատասխան մասնագետների՝ հոգեբանների, պատմաբանների, սոցիոլոգների համագործակցություն, որի արդյունքում նոր, գիտական հայացքով հնարավոր կլինի նայել հիմնախնդրին: Քաղաքական դաշտի ներկայացուցիչներն էլ սևեռված են Ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա՝ դարձնելով այն Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնաքարերից մեկը: Իսկ ներքաղաքական դաշտում ամեն ինչ սահմանափակվում է յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին Ցեղասպանության հուշարձանում ծաղկեպսակների հանդիավոր տեղադրմամբ: Մինչդեռ, մեր կարծիքով, Ցեղասպանության հարցը կարիք ունի ճանաչված և «մարսված» լինելու հայկական հասարակական-քաղաքական դաշտում: Եվ մեր տեսական ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ այդ հարցը շատ հաճախ է քաղաքական հայտարարությունների թեմա դառնում, սակայն բացի Ցեղասպանության փաստը հերթական անգամ նշելուց, ոչ մի այլ «հաղորդագրություն» հասարակությանը չի հասցեագրվում: Այնուամենայնիվ, որոշ ելույթներում քաղաքական գործիչները ավելի խորն են անդրադառնում Ցեղասպանության հարցին: Մենք փորձեցինք դուրս բերել հիմնական հասկացությունները և երևույթները, որոնք հիշատակվում են Ցեղասպանության հիմնահարցի հետ միասին:

Մենք արդեն նշել ենք, որ քաղաքական գործիչների ելույթներում հիշատակվում են միայն Ցեղասպանության փաստը և դրա ճանաչման համար անհրաժեշտ պայմանները: Տասնամյակներ շարունակ մենք ամեն տարի լսում ենք, որ Ցեղասպանությունը դարի ոճրագործություն է և ամբողջ քաղաքակիրթ աշխարհն այն պետք է ճանաչի: Ինչպես բռնության ենթարկված կամ պատերազմ անցած մարդու գիտակցության մեջ վառ պահպանվում է իր հետ կատարվածը, և նա միշտ կարիք ունի պատմելու այդ մասին, հիշատակելու, որ նրա հետ այդպիսի դժբախտություն է պատահել [5]: Որքան էլ քաղաքական դաշտը հեռու լինի հոգեբանականից, այնուամենայնիվ, քաղաքականության մեջ արտացոլվում են ոչ միայն սոցիալ-հոգեբանական երևույթները, այլև անհատական հոգեբանությանը վերաբերող խորքային երևույթները:

Ցեղասպանության մասին ելույթներում աչքի է ընկնում «հայ, հայկական, հայություն, համահայկական» բառերի ամեն երկրորդ նախադասության մեջ օգտագործումը: Մի կողմից այս փաստը տրամաբանական է, բայց մյուս կողմից, մեր կարծիքով, այդ բառերի կիրառումը չափազանցված է: Վերջին տարիներին հայ ինքնության ուսումնասիրությունների մեջ առաջ է քաշվում վարկած առ այն, որ Ցեղասպանությունը վնասել է ինքնությանը, քանի որ նրան ոչնչացման լուրջ վտանգ է սպառնացել: Ուստի հասարակական գիտակցության մեջ անհրաժեշտ է մշտապես «հեռարձակել» «հայ»-ի գաղափարը՝ որքան էլ տարօրինակ չի հնչում այս միտքը մեր մոտեցնիկական հանրության համար:

9. Шутценбергер А. А., (2005). *Синдром предков: Трансгенерационные связи, семейные тайны, синдром годовщины, передача травм и практическое использование геносоциограммы* /А. А. Шутценбергер ; пер. с нем. – М.: Изд-во Института психотерапии, – 256 с.
10. Alayarian, A., *Consequences of Denial, The Armenian Genocide*, KARNAC, 2008
11. Laplanche J., Pontalis J.-B., (1967). *Vocabulaire de la psychanalyse*, PUF, éd. 1973 p. 228.
12. Karakashian M. (2000). *Trauma, Adaptation and Cultural Resilience: Psychological Perspectives*. Journal of Genocide Research, 1, 65-80.

Хачатур Гаспарян

Зав. кафедрой медицинской психологии ЕГМУ, к.п.н., доцент

Гаяне Казарян

Доцент кафедры медицинской психологии ЕГМУ, к.п.н.

Лилит Мнацаканян

Преподаватель кафедры медицинской психологии ЕГМУ, к.п.н.

МЕТОД СВОБОДНЫХ АССОЦИАЦИЙ, КАК СПОСОБ ИЗУЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКИХ ТРАВМ ПРИЧИНЕННЫХ ГЕНОЦИДОМ

Ключевые слова: *геноцид, психологическая травма, свободные ассоциации, преемственность, посттравматический рост.*

Исследования проводились в рамках темы «Передача психологической травмы геноцида армян от поколения к поколению». Целью исследования является изучение механизмов и закономерностей трансгенерационной передачи психологической травмы геноцида. В данной статье представлены результаты по одному из методов нашего исследования – Методу свободных ассоциаций.

В заключение, мы пришли к выводу, что травматические события геноцида все еще имеют актуально влияние в проявлении социальной памяти, в некоторых случаях они приобретают положительные оттенки, которые мы считаем, позволяют преодолеть трудности и переосмыслить травматические компоненты памяти в нашей социальной памяти.

Khachatur Gasparyan

Head of the Department of Medical Psychology, Phd, Associate Professor of YSMU

Gayane Ghazaryan

Phd, Associate Professor of the Department of Medical Psychology, YSMU

Lilit Mnatsakanian

Department of Medical Psychology, YSMU

FREE ASSOCIATIONS AS A METHOD TO STUDY OF PSYCHOLOGICAL TRAUMA CAUSED BY GENOCIDE

Key words: *Genocide, psychological trauma, free associations, succession, posttraumatic growth.*

This is a report about part of "Transgenerational transmission of psychological trauma caused by the Armenian Genocide" research study. Among other methods and instruments we also used free association method to look at the mechanisms and patters of traumatic contents and the way that they transmitted from generation to generation. In this article we will first analyze theoretical background of trauma psychology with special focus on "trauma transmission" aspect and present here analysis of free associations based on results from 83 participants.

*Մարի Ավետիսյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի ավագ լաբորանտ
avemari88@gmail.com*

ԱՆՁԻ ԿՈԳՆԻՏԻՎ ՄԽԵՄԱՆԵՐԻ ԴԵՐՐ ՎՇՏԻ ԱՊՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հանգուցային բառեր՝ հոգետրավմա, կոգնիտիվ սխեմա, վիշտ, ցեղասպանություն:

Մարդկային կեցության հիմնական էքզիստենցիալ խնդիրներից մեկը, որի հետ առնչվում է յուրաքանչյուր անձ, մահն է և կյանքի վերջավորության ու սահմանափակության գիտակցումը: Կյանքի ճգնաժամային, գոյությանը վտանգ ներկայացնող իրավիճակներում մարդն անդրադառնում է մահվան խնդրին՝ փորձելով հասկանալ և վերակառուցել իր վերաբերմունքը կյանքի և մահվան հանդեպ: Ստորև կվերլուծենք, թե հարազատի մահը, որպես հոգետրավմա, ինչպես է ազդում անձի համոզմունքային համակարգի փոփոխության վրա և ինչ նշանակություն ունեն անձի կոգնիտիվ սխեմաները վշտի ապրման և հաղթահարման գործընթացում:

Ըստ Ռ. Յանոֆֆ-Բուլմանի աղճատված համոզմունքների հայեցակարգի՝ մարդկանց բնորոշ է սեփական անձի անձեռնմխելիության, պաշտպանվածության և սեփական անձի կարևորության իմպլիցիտային համոզմունքները, որոնք ապահովում են անձի հոգեկան ամբողջականությունը և կայունությունը շրջապատող իրականության հետ փոխազդելիս: Հոգետրավման ազդում է անձի բազային համոզմունքների անբարենպաստ փոփոխության վրա: Դրանք համոզմունքների երեք խմբեր են՝ *աշխարհի բարենպաստության, իմաստավորվածության և սեփական անձի նշանակալիության* վերաբերյալ: Կյանքի անբարենպաստ իրավիճակները նախևառաջ աղճատում են այս համոզմունքները (3, էջ 116-117): Ընդ որում, նշված համոզմունքների փոփոխությունը տեղի է ունենում հետևյալ կերպ. կամ անձը վերագնահատում է իրավիճակն այնպես, որ հոգետրավմատիկ իրադարձությունը համապատասխանի իր նախկին համոզմունքներին, ինչը չի ենթադրում նախկին համոզմունքների փոփոխություն և հանգեցնում է ապահարմարողական վարքի, կամ տեղի է ունենում նախկին համոզմունքների փոփոխություն, որպեսզի անձը կարողանա հոգետրավմատիկ իրադարձությունն ինտեգրել իր համոզմունքային համակարգում: Որպես կանոն, երբ հոգեկան տրավման ծայրահեղ ինտենսիվ է, այդ պարագայում տեղի է ունենում համոզմունքային համակարգի զգալի փոփոխություն, հակառակ դեպքում անձը չի կարողանա ընդունել տրավման և դա դեզադապտացիայի, հետևաբար, հոգեկան խանգարումների հիմք կհանդիսանա: Հոգետրավմատի կիրադարձությունը մարդուն կանգնեցնում է կոգնիտիվ դիլեմմայի առաջ, քանի որ դրա ազդեցությամբ անձի նախկին համոզմունքները դառնում են ոչ կենսունակ և, հետևաբար, նա ստիպված է վերանայել և վերափոխել դրանք (նույն տեղում, էջ 120-122):

Ֆոայի և Ռիզսի հետազոտությունները փաստում են, որ երբ անձն իր կենսափորձի ընթացքում ձևավորում է բացասական համոզմունքներ սեփական անձի և աշխարհի վերաբերյալ, ապա հոգետրավմայի ազդեցությամբ նա հակված է հաստատել և ամրապնդել իր համոզմունքները: Հոգետրավման առավել դժվարությամբ են հաղթահարում հատկապես նման համոզմունքներ ունեցող մարդիկ, քանի որ հաղթահարումը ենթադրում է բավականին ռիզիկո կոգնիտիվ սխեմաների և բազային համոզմունքների վերափոխում (5, էջ 64): Կոգնիտիվ սխեմաները պահպանելու հաստատունությունը և դրանք փոխելու դժկամությունը պայմանավորված է նրանով, որ մարդու կոգնիտիվ հայեցակարգային համակարգին բնորոշ է *հաստատունության և հաջորդականության պահանջը* և, քանի որ սխեմաները ձևավորվել են երկար ժամանակի ընթացքում և փորձառությամբ ամրապնդված են, դրանք հաստատուն ճանաչողական կառույցներ են, որոնք ապահովում են անձի հոգեկան հավասարակշռության և ամբողջականության պահանջմունքը փոփոխվող իրականության հետ փոխհարաբերվելիս (4, էջ 115): Սա նշանակում է, որ ցանկացած հոգետրավմայի պարագայում անձը կարիք ունի իր կոգնիտիվ բացասական սխեմաների և համոզմունքների վերանայման և փոփոխման, ինչն անհրաժեշտ պայման է հոգետրավմայի հաղթահարման և կենսափորձի մեջ դրա իմաստավորման ու ինտեգրման համար:

Անդրադառնալով հարազատի կորստին, որպես մարդու կյանքում հոգետրավմատիկ իրադարձության, որին անձը հակազդում է վշտի ապրմամբ, Մ. Էյզտեյնը նշում է, որկախված նրանից, թե ինչպես է անձը ընկալում և մեկնաբանում կորուստը, դրանով էլ պայմանավորված են վշտի հակազդումների հարմարողական կամ ոչ հարմարողական լինելը: Նա նշանակալից անձի կորստի դեպքում մեծ նշանակություն է տալիս *անձի մերժվածության, չընդունվածության, անօգնականության և կախյալության* կոգնիտիվ հիպերակտիվ սխեմաներին: Այսպես, եթե անձը վաղ կենսափորձից ելնելով, ունի լքվածության, մերժվածության և չընդունման հիպերակտիվ սխեմաներ, ապա նա նշանակալից անձի կորուստը կմեկնաբանի որպես լքվածություն ու մերժում: Այսինքն, անձը խոցելի է դառնում նման իրավիճակների հանդեպ, քանի որ ունի անհարմարողական սխեմաներ՝ կապված անօգնականության և չընդունվածության հետ: Դա նշանակում է, որ ենթագիտակցական մակարդակում անձի չգիտակցված խորքային համոզմունքները վճռորոշ դեր ունեն վշտի ապրման ընթացքում և պայմանավորում են դրա ելքը (8, էջ 122-123): Ժամանակակից մի խումբ հոգեբանների (Bonanno, 2002-2004, Lichtenthal, 2004, Currier, 2006) հետազոտություններն այս ոլորտում ցույց են տալիս, որ կորուստն ակտիվացնում է անձի բացասական համոզմունքները, որոնք ձևավորվել են կյանքի տարբեր անբարենպաստ ազդեցությունների արդյունքում: Այսպես, մարդն, ով ունի բացասական համոզմունքներ սեփական անձի մասին, նշանակալից կորուստը կարող է մեկնաբանել որպես պատիժ, անեծք և այլն: Նույն կերպ, եթե անձը հավատում էր, որ կյանքն անիմաստ է, ապա կորուստը կարող է մեկնաբանել որպես դրա հաստատում, ինչն էլ կնպաստի անհարմարողական հակազդումների պահպանմանը և վշտի չհաղթահարմանը (մեջբերվում է՝ ըստ 2, էջ 191-192): Մ. Հորովիցը նշում է, որ վշտի ապրման ժամանակ նշանակալից ազդեցություն են ունենում անձի լատենտ Ես-կերպարները՝ կապված սեփական անձի անօգնականության, անկարողության և թուլության հետ, որը խոչընդոտում է վշտի ապրման և հաղթահարման գործըն-

թացին (մեջբերվում է՝ ըստ 7, էջ 59): Բոելենի և Բուտի վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ կորուստ ապրած մարդիկ, ովքեր տարիներ շարունակ ունենում են վշտի դրսևորումներ, որն այսօր գրականության մեջ ընդունված է անվանել «երկարաձգված վիշտ» կամ «բարդեցված վիշտ», պայմանավորված է կորուստն ընդունելու անկարողությամբ, անձի գլոբալ բացասական համոզմունքներով և վշտի հակազդումների սխալ մեկնաբանումներով: Եթե կորուստն ակտիվացնում է անձի բացասական համոզմունքները կամ հաստատում դրանք, ապա դժվարանում է վշտի հաղթահարումը (1, էջ 113-119):

Ըստ Ռ. Թեդեշիի, կորուստի դեպքում, առնչվելով մահվան խնդրի հետ, մարդը ունենում է աշխարհայացքային հարցադրումներ, որոնց լուծումից է կախված վշտի հաղթահարումը և հոգետրավմատիկ փորձի ինտեգրումը հոգեկանում, ինչը նպաստում է հոգեկան ցավի թուլացմանը և հոգետրավմայի իմաստավորմանը: Դրանք էկզիստենցիալ հարցադրումներ են, որոնք ենթադրում են անձի համոզմունքների վերանայում՝ կապված կյանքի և մահվան իմաստի, հավատի, մահից հետո կյանքի գոյության, կյանքի նպատակների և արժեքների, սեփական անձի, մարդկային հարաբերությունների ընկալման հետ: Անձը, հաղթահարելով վիշտը, ձևավորում է այնպիսի համոզմունքներ, որոնք նրան առավել ուժեղ և ճկուն են դարձնում կենսական դժվարությունների հանդեպ [9]: Հոգետրավմայի ազդեցությամբ անձը պայքարում է իր գոյության նոր իրականության հետ, ինչը ենթադրում է նախևառաջ անձի կոգնիտիվ սխեմաների և համոզմունքների փոփոխություն, որի արդյունքում տեղի է ունենում դրական փոփոխություններ՝ կապված *ես-ի ընկալման, միջանձնային հարաբերությունների և կյանքի փիլիսոփայության փոփոխության հետ* (մեջբերվում է՝ ըստ 5, էջ 67-68): Ունենալով հարազատի կորուստ և վերապրելով վիշտը, մարդիկ փաստում են, որ իրենց շրջապատողների հանդեպ դարձել են առավել հոգատար, ապրումակցող և չքնադատող, սկսել են զգալ և գնահատել կյանքի յուրաքանչյուր վայրկյանը, վերանայել իրենց արժեքները և նպատակները, փոխել իրենց կենսառճը և այլն: Այսինքն, անձը, վերապրելով վիշտը և վերակառուցելով իր անձի, այլ մարդկանց և աշխարհի հանդեպ իր համոզմունքները, ձևավորում է նոր նույնականություն՝ հաստատելով իր կյանքի և գոյության նոր իմաստը, ինչը անհատական գործընթաց է (6):

Անդրադառնալով ցեղասպանությանը, որպես ազգի կողմից կորստի ապրման և հոգետրավմատիկ իրադարձության, կարող ենք ասել, որ այն, անշուշտ, ազդել է մեր ազգային ինքնագիտակցության և աշխահընկալման վրա: Ինչպես փաստում են Ա. Կալաշյանի և Մ. Վալդերգի հետազոտության արդյունքները, հայոց ցեղասպանության վերապրածների սերունդները կրում են իրենց նախնիների հուզական հիշողությունը և վերարտադրում իրենց ծնողների բարկությունը և տխրությունը՝ զգալով դրանք պահպանելու և փոխանցելու պատասխանատվության ծանրությունը: Դրա հետ մեկտեղ նրանց է փոխանցվել *անվստահության և թշնամանքի* զգացումն արտաքին աշխարհի հանդեպ, ինչպես նաև *անօգնականության զգացումը* անձնային, գլոբալ և կոլլեկտիվ մակարդակներում, որը կապվում էր ցեղասպանության փաստի համամարդկային չընդունման և աշխարհի անարդարության հետ: Նշված համոզմունքներն ակտիվանում են գոյատևման համար վտանգ սպառնացող իրավիճակներում (4):

Հայ ազգը, դարեր շարունակ պայքարելով պետականության, տարածքային ամբողջականության համար, լինելով գերտերությունների շահերի բախման խաչմերուկում, ապրել է իր գոյատևման մշտական վտանգի պայմաններում, ինչն առաջ է բերել անպաշտպանվածության զգացում, որն իր հերթին ամրապնդել է թուլության, անօգնականության և անկարողության համոզմունքները: Ցեղասպանությունը ևս իր բացասական ազդեցությունն է ունեցել մեր ազգային ինքնագիտակցության մեջ՝ ամրապնդելով ճնշվածության և խոցվածության համոզմունքները: Մակայն, հայ ազգը իր զարգացման արդի փուլում, հիշելով իր պատմական անցյալը և դրա մաս կազմող ցեղասպանության փաստը, իր առջև ունի խնդիր՝ գիտակցելու և իմաստավորելու տեղի ունեցածը, ինչը կարևոր նշանակություն ունի մեր ներքին համախափվածության, միասնության և ազգային գաղափարախոսության ձևավորման համար:

Գրականություն

1. Boelen P., Hout M., Bout J., “A cognitive-behavioral conceptualization of complicated grief”, Clinical Psychology: Science and Practice, N 1(13), 2006, 109–128
2. Currier M., Holland J., Neimeyer R., “Assumptive Worldviews and Problematic Reactions to Bereavement”, Journal of Loss and Trauma, N 14, 2009, p.181–195
3. Janoff-Bulman R., “Assumptive world and the stress of traumatic events: Applications of the schema construct”, Social Cognition, Guilford Press, V. 7, N 2, 1989, p. 113-136
4. Kalayjian A., Weisberg M., Generational Impact of Mass Trauma: The Post-Ottoman Turkish Genocide of the Armenians, <http://www.humiliationstudies.org/documents/KalayjianGenerationalTransmissionChapter.pdf>
5. Lawrence R., Pieter L., Stein D., Young J., “Cognitive schemas and core beliefs in psychological problems: a scientist-practitioner guide”, 2007, p. 248
6. Neimeyer R., Burke L., Mackay M., Dyke J., “Grief therapy and the reconstruction of meaning: from principles to practice”, Springer Science, 2009, http://www.traumaptsd.com/uploads/library/gt_practice_j_contemp_psync.pdf
7. Osterweis M., Solomon F. and Green M., “Bereavement, Reactions, Consequences and Care”, National Academy Press, Washington, 1984, 373 p.
8. Stroebe M., Stroebe W., Hansson R., “Handbook of bereavement, Theory, research, and intervention”, Cambridge University Press, 1993, p. 546
9. Tedeschi R., Calhoun L., “Helping the bereaved parent. A clinician’s guide”, Brunner-Routledge, New York, 2004, p.189

Мари Аветисян

*Факультет философии и психологии ЕГУ
Лаборант кафедры социальной психологии*

РОЛЬ КОГНИТИВНЫХ СХЕМ ЛИЧНОСТИ В ПРОЦЕССЕ ПЕРЕЖИВАНИЯ ГОРЯ

Ключевые слова: *психотравма, когнитивная схема, горе, геноцид.*

В статье проанализировано влияние психотравмы на неблагоприятное изменение когнитивных схем личности в контексте переживания горя. Представлена важность изменения негативных убеждений личности, осмысления и интегрирования психотравмы в процессе ее преодоления, в том числе во время утраты близкого. Отмечена роль восприятия и осмысления Армянского Геноцида в процессе развития национального самосознания.

Mari Avetisyan

Faculty of Philosophy and Psychology, YSU

Research Assistant of the Department of Social Psychology

THE ROLE OF COGNITIVE SCHEMAS OF PERSONALITY IN THE PROCESS OF GRIEVING

Key words: *psychotrauma, cognitive schema, grief, genocide.*

The article analyzes the impact of trauma on the adverse change in cognitive schemes of the individual in the context of grief. It is presented the importance of changing negative beliefs of personality, meaning making and integration of trauma in the coping process of trauma, including bereavement. It is noted the role of perception and making sense of Armenian Genocide in the development of national self-consciousness.

Ֆենյա Բազոյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դասախոս
fen.bazoyan@gmail.com

ՀԱՅԵՐԻ ԷԹՆՈՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

Հանգուցային բառեր՝ մշակույթ, էթնոս, բազային անվտանգության պահանջմունք, հոգեբանական ներգործություն, մշակութային չափումներ:

Մեփական ժողովրդի անցած պատմական ուղին, նրա ճակատագրի ու դերի մասին պատկերացումները ազգի հոգեբանության ձևավորման համար կարևոր հենաքարեր են հանդիսանում: Այս տեսակետից, հայոց պետականության ձևավորման ուղու հետհայաց վերլուծությունը թույլ է տալիս հասկանալու հայ ժողովրդի հոգեկերտվածքի որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես, պատմության երկարատև ժամանակահատվածում ազգային պետականության բացակայությունը և տարբեր տերությունների ներքո սահմանազատված գոյությունը, տարբեր զավթիչների կողմից վարած հայատյաց քաղաքականությունը մեծ ազդեցություն են ունեցել հայերի հոգեկերտվածքի ձևավորման վրա: Ավելին, իրենց պատմական զարգացման ընթացքում հայերը բազմիցս կանգնած են եղել ազգային ոչնչացման վտանգի առաջ: Թերևս Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականությունը՝ երիտթուրքական պարագլուխների ղեկավարությամբ, պատմությանը հայտնի այդպիսի ամենավաղ օրինակներից է:

Ընդ որում, թե՛ ամբողջատիրական հասարակարգերում, թե՛ բռնի զավթողական քաղաքականությունը որդեգրած տերություններում մինչ իրենց հպատակության տակ գտնվող ժողովրդի ֆիզիկական բնաջնջման փորձերին դիմելը, դրան հաճախ նախորդել է համապատասխան հոգեբանական մթնոլորտի ձևավորումը, որն աստիճանաբար թուլացնելով անձնային ինքնավարությունը՝ կհանգեցներ նրանց սոցիալական գոյության ոչնչացմանը: Այս իմաստով, հոգեբանական գիտության շրջանակներում մեզ համար առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում մարդկանց, ժողովուրդների հանդեպ կիրառվող զանգվածային ճնշման ռազմավարության կառուցման հոգեբանական հենքերի ուսումնասիրությունը:

Այս տեսակետից հետաքրքիր անդրադարձ է արվել հայտնի հոգեվերլուծաբան Բրունո Բետելիեյմի կողմից, ով հոգեբանական վերլուծության ենթարկելով գերմանական համակենտրոնացման ճամբարում իր բանտարկյալ տարիները՝ փորձել է այն ձևակերպել որոշակի տեսական դրույթների տեսքով, որոնք ներկայացնում են զանգվածային ճնշման պետական քաղաքականության էությունը: Ըստ նրա, այդ ճամբարները նման էին ինքնատիպ «փորձարարական լաբորատորիաների», որտեղ

մշակվում էին զանգվածների առավել արդյունավետ կառավարման մեթոդներ և ձևավորում էին ամբողջատիրական պետության պահանջներին համապատասխան սուբյեկտներ: Հեղինակը, մասնավորապես, վերլուծության է ենթարկել նման պայմաններում անձնային ինքնավարության ոչնչացման նպատակով կիրառվող հոգեբանական մեթոդները:

Համառոտ ներկայացնենք դրանք: Ըստ նրա, այդ ճամբարներում բանտարկյալների հանդեպ իշխող վերաբերմունքը հիշեցնում էր անգութ հոր և անօգնական երեխաների միջև հարաբերությունների: Նման պայմաններում բանտարկյալների մոտ աստիճանաբար կուտակվող անգոր ցասման զգացումը և ագրեսիան հաղթահարելու միակ անվտանգ միջոցն էր դառնում այն դեպի իր անձին ուղղելը, քանի որ ցանկացած ըմբոստության դրսևորման համար նրանց էլ ավելի խիստ պատիժ էր սպասվում: Նման հարաբերությունները աստիճանաբար նպաստում էին վարքի պասիվ-կախյալ մոդելի ձևավորմանը, որը թվացյալ անվտանգության զգացում էր ապահովում՝ իբրև թե ապահովագրելով նրանց ավելի սուր ընդհարումներից և պատիժներից: Նրանց կողմից կիրառվող հաջորդ հնարը դա խմբային ճնշման գործադրմամբ մարդու անհատականության փոխակերպումն էր անդամ խմբային դիմակի՝ նրան զրկելով ազատ կամքի արտահայտումից և ընտրության հնարավորությունից: Ի վերջո, հաջորդ, թերևս ամենաազդեցիկ ներգործող մեթոդներից էր նպատակադրման հնարավորության և ապագայի հանդեպ հավատի ոչնչացումը: Սահմանված կարգին անվերապահ հետևելը և պատժի մշտական սպառնալիքը՝ սոցիալական մեկուսացման պայմաններում ձևավորում էր անելանելիության մթնոլորտ, կոտրում էր ապրելու, ապագայի հանդեպ կամքը (1):

Ինչ խոսք, վերոհիշյալ ուսումնասիրությունը զանգվածային ճնշման գործադրման մասնակի օրինակ է, սակայն դրա իրականացման հոգեբանական մեխանիզմը կարող է գործի դրվել տարբեր սոցիալ-քաղաքական իրավիճակներում՝ բավարարելու համար համապատասխան շահերը: Ավելին, պատմական տևական ժամանակահատվածում նման քաղաքականություն որդեգրած տերությունների իշխանության ներքո գոյատևումը իր ազդեցությունն է թողնում նաև տվյալ ազգի հոգեբանության, աշխարհընկալման, մտածելակերպի առանձնահատկությունների ձևավորման վրա:

Մասնավորապես, օտարի կամքից և որոշումներից կախվածությունը, սեփական ճակատագիրը կառավարելու անհնարիությունը, ազգային ոչնչացման մշտական սպառնալիքի առկայությունը հայերի մոտ հաճախ են սրել սոցիալական կայուն և իմաստավորված գոյության կորստի վտանգը, և նպաստել բազային անվտանգության պահանջմունքի անբավարարությանը: Մտեղծված պայմաններում սեփական գոյությունը պահպանելու համար մշակված հարմարվելու հոգեբանական ստրատեգիաները էթնոսի կողմից սեփական կենսական հնարավորությունների գնահատման և կատարվող իրադարձությունների ապրման և իմաստավորման միջոցների ինքնատիպ արտահայտումներ են հանդիսանում: Հետևաբար, կարելի է ասել, որ ընտրված այդ ստրատեգիաներն իրենցից ներկայացնում են պատմական կենսագործնեության ընթացքում նրանց առաջադրված տարբեր իրողություններին, հանգամանքներին տրված յուրօրինակ «լուծումներ», որոնք սոցիալական կյանքում կողմնորոշման դեր են կատարում: Դրանք իրենց մեջ ընդգրկում են հասարակայնորեն ընդունելի վարքի նորմեր և մոդելներ, արժեքներ, համոզմունքներ, որոնք

դրսևորվում են սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում: Նշված բովանդակությունը այդ իմաստով առավել լավ ներկայացնում է Գ. Հոֆսթեդի առաջարկած «մշակութային չափումներ» հասկացությունը:

Նա համարում էր, որ մշակույթն արմատավորված է հասարակության արժեքային հարթությունում, որն արտահայտվում է տվյալ ազգին բնորոշ սոցիալական վարքի տարբեր ձևերում: Համաձայն նրա տեսության, գոյություն ունեն չորս չափումներ, որոնցով կարելի է նկարագրել ազգային մշակույթը: Այդ չափումները դուրս են բերվել նրա կողմից իրականացրած երկարատև տեսական ուսումնասիրությունների, հետազոտության և վիճակագրական վերլուծության արդյունքում:

Դրանք են՝ ա. «ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ», որն արտահայտում է տվյալ հասարակության մեջ անհատական և խմբային նպատակների, շահերի գերակայության հարաբերակցությունը, բ. «իշխանությունից հեռավորությունը», որը վերաբերվում է տվյալ հասարակության մեջ իշխանության և սոցիալական անհավասարության դրսևորման աստիճանին և առանձնահատկություններին, գ. «անորոշությունից խուսափումը», որը ներկայացնում է, թե տվյալ հասարակության անդամները ինչպես են արձագանքում ապագային ուղղված ոչ պարզորոշ իրավիճակներին, որոնք իրենց համար նոր են, անսպասելի, անծանոթ, տարբերվում են իրենց համար սովորական դարձած կենսակերպից: Մշակույթները, որոնք բնութագրվում են անորոշությունից խուսափման բարձր մակարդակով, փորձելով նվազեցնել նման իրավիճակների առաջացման հավանականությունը՝ մշակում են վարքի խիստ նորմեր, կանոններ, օրենքներ, քննադատաբար են վերաբերվում համընդհանուր ընդունված գաղափարներից, նորմերից շեղվելուն՝ հաճախ դրանց տալով սուր հուզական հակազդումներ, դ. «մասկուլինություն-ֆեմինինություն», որը ներկայացնում է տվյալ սոցիումի գենդերային խմբերում արժեքների և դերերի բաշխման առանձնահատկությունները: Ավելի ուշ, Գ. Հոֆսթեդը, հիմնվելով կանադացի հոգեբան Մ. Ն. Բոնդի, իսկ այնուհետև բուլղարացի սոցիոլոգ Մ. Մինկովի կատարած ուսումնասիրությունների վրա, իր մոդելը համալրեց նրանց կողմից առանձնացված ևս երկու չափումներով, որոնք համապատասխանաբար ներկայացնում են՝ տվյալ հասարակության ժամանակային կողմնորոշումը (դեպի անցյալը, ներկան կամ ապագան), ինչպես նաև՝ մարդկային բազային պահանջմունքների բավարարման աստիճանը, որն արտահայտում է կյանքից բավականություն ստանալու և ինքնավերահսկողության հարաբերակցությունը (2):

Այսպիսով, եթե Գ. Հոֆսթեդի առաջարկած մոդելի հիման վրա հայերի էթնոհոգեբանական վերլուծություն փորձ կատարենք, ապա կարելի է ասել, որ նրանց առավել տիպական բնութագրող մշակութային չափումը՝ անորոշությունից խուսափման բարձր մակարդակն է, որն արտահայտվում է ավանդույթների հետևողական պահպանմամբ, հասարակական հարաբերությունները կարգավորող հստակ, այսպես կոչված՝ «չգրված կանոնների» գերակայությամբ, նորի և փոփոխությունների հանդեպ դրսևորվող մեծ զգուշավորությամբ, արմատական փոփոխություններից խուսափումով: Կյանքի այս ստրատեգիայի հիմնական գործառույթը պաշտպանվածության պատրանքի ձևավորումն է, որն ազատում է ապագայի հանդեպ տագնապից և անորոշության զգացումից: Սակայն, առաջին հայացքից թվացող կյանքի պահպանողական այս ձևը չպետք է շփոթել նոր ձեռքբերումներից հրաժարվելու միտման հետ, ընդհակառակը, հայն իր էությունը ստեղծարար է: Տևական

Ժամանակ նա չի ունեցել պետականություն, սակայն ունեցել է հայրենիք, հող, որը միշտ սրբացրել է: Պետականությունից զրկված հայը տարիներ շարունակ փորձել է հաստատվել հայրենի հողում՝ եկեղեցիների, դպրոցների կառուցմամբ՝ գիտակցելով, որ դրանք կարող են ավերվել թշնամու կողմից:

Հայերին հատուկ մի շարք էթնոհոգեբանական բնութագրիչներ էլ պայմանավորված են ժամանակի ընկալման առանձնահատկություններով: Ընդ որում, հետաքրքրական է, որ մեր էթնոսի մակարդակում այս չափումը երկակի դրսևորում ունի. այն մի կողմից արտահայտվում է դեպի անցյալը վերադառնալու միտումով, անցյալի իրողությունները (այդ թվում և՛ հալածանքի, և՛ հաղթության) գերարժևորելով, իսկ մյուս կողմից՝ «հետաձգված կյանքի բարդությունով», որի պարագայում գերարժևորվում է ապագայի դերը, իսկ ներկայիս կյանքը դիտվում է որպես լոկ նախերգանք, առավել լիարժեք կյանքի նախապատրաստում: Ինչ խոսք, ժամանակի ընկալման նման առանձնահատկությունը հաճախ խոչընդոտում է ներկայի հնարավորությունների ճիշտ գնահատմանն ու արժևորմանը:

Ամփոփելով նշենք, որ ազգի կազմավորման պատմական գործընթացում հալածանքների և հաղթանակների մասին ձևավորված պատկերացումները, դրանց ուղղված հուզական վերաբերմունքն ու գնահատականները կարևոր հենք են ազգային ինքնագիտակցության ձևավորման համար: Հետևաբար մեր պատմական անցյալի փորձի բազմակողմանի իմաստավորման միջոցով է միայն հնարավոր վերադառնալ ազգային կեցության արմատներին, ճիշտ գնահատել սեփական ժողովրդի կենսական հնարավորությունները՝ ապագայի մարտահրավերներին առավել վստահորեն դիմագրավելու համար:

Գրականություն

1. Бруно Беттельхейм. Люди в концлагере // Чернявская А.Г. Психология господства и подчинения: Хрестоматия.-Минск: Изд-во “Харвсет”, 1998г., OCR Палек, 2000г., 311с.
2. Хофстеде Г. (Маастрихт, Нидерланды) Модель Хофстеде в контексте: параметры количественной характеристики культур (перевод с английского В.Б. Кашкина) // Язык, коммуникация и социальная среда – Language, Communication and Social Environment: Ежегодное научное издание / под ред. В.Б. Кашкина. – Вып. 12. / Воронежский гос. Университет. Воронеж: НАУКА-ЮНИПРЕСС, 2014, 276с.

Fenya Bazoyan

*Faculty of Philosophy and Psychology, YSU
Lecturer of the Department of Social Psychology*

HISTORICAL AND CULTURAL ASPECTS OF ARMENIAN ETHNOPSYCHOLOGY

Key words: *culture, ethnos, basic need of safety, psychological influence, cultural dimensions.*

This article discusses the psychological mechanisms of mass pressure and its influence on the psychology of the ethnic groups and life strategies of the society. For psychological description of ethnos, we relied on Geert Hofstede's model of cultural dimensions.

Феня Базоян

*Факультет философии и психологии ЕГУ
Преподаватель кафедры социальной психологии*

ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЕ АСПЕКТЫ ЭТНОПСИХОЛОГИИ АРМЯН

Ключевые слова: *культура, этнос, базовая потребность в безопасности, психологическое влияние, культурные измерения.*

В статье обсуждаются психологические механизмы массового давления, ее влияние на психологию этноса и на стратегии жизни данного общества. Для психологического описания этноса мы опирались на модель культурных измерений Гирта Хофстеда.

Նելլի Վարդանյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ
գիտական դեկավար՝ Գայանե Շահվերդյան
nelly.vardanyan@yahoo.com

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ,
ԴԵՌՆԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՂ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔ**

Հանգուցային բառեր՝ *ցեղասպանություն, ընկալում, տրավմա, տարիքային առանձնահատկություններ, սոցիալական միջավայր:*

Հայոց ցեղասպանության հիմնահարցը, լինելով հայության առաջնային խնդիրներից մեկը, 100 տարի անց էլ շարունակում է մնալ խոցելի և տրավմատիկ յուրաքանչյուրի համար: Հարց է առաջանում, ինչն է հիմք հանդիսանում տրավմայի փոխանցման համար, որը հատկապես ընդգծված լինելով որոշակի նշանակալից տարեթվերի ժամանակ՝ ասես վերակենդանացնում է տրավմատիկ դեպքերը: Գոյություն ունեն փոխանցման բազմաթիվ կլինիկական ապացույցներ, սակայն դեռևս հստակ չէ, ինչպիսիք են ձեռք բերված հատկանիշների փոխանցման ճանապարհներն (ներոլոգիական կամ գենետիկ) ու գործոնները (8, էջ 205-206):

Ցեղասպանությունը, լինելով կոլեկտիվ տրավմա, անդրադառնում է հայի ազգային նկարագրի վրա: Չնայած մարդիկ վերապրում են այն յուրովի, դրա արտացոլումը պատմական հիշողության մեջ նպաստել է խնդրի միջսերնդային փոխանցմանը: Կոլեկտիվ հիշողությունը ակտիվ անցյալն է, որը ձևավորում է մեր ինքնությունները, քանզի հիշողությունն անխուսափելիորեն ճանապարհ է տալիս պատմությանը, երբ մենք կորցնում ենք կապը մեր անցյալի հետ (2, էջ 24):

Առաջին կապող օղակն ազգային ինքնության հետ ստեղծում է ընտանիքն ու սեփական տոհմի պատմությունը: Վերապրողների անցյալի փորձն ուղիղ կերպով ներթափանցել է ծնողների դաստիարակման ոլորտը: Բազմաթիվ գործոններ, որոնք դարձել են հոգեցնցման հետևանք, ազդել են ծնող-երեխա փոխհարաբերությունների վրա (1, էջ 38):

* * *

Հոդվածում ներկայացված է մեր կողմից իրականացված հետազոտությունը, որի **նպատակն** է դուրս բերել ցեղասպանության ընկալման առանձնահատկությունները երեխաների և դեռահասների մոտ՝ հաշվի առնելով տարիքային տարբերությունները, դաստիարակությունն ու կրթական համակարգի ազդեցությունը:

Ըստ հետազոտության **վարկածի՝** ենթադրվում է, որ տարբեր տարիքի դպրոցականների մոտ նույն տեղեկատվության առկայության դեպքում ցեղասպանության փաստի նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում է անմիջական միջավայրի ազդեցության ներքո:

Հետազոտությունն արվել է 6 ուսումնական հաստատություններում սովորող դպրոցականների հետ՝ ք. Երևանի միջնակարգ դպրոցներում, ՀՀ մարզերում (Կոտայքի մարզի Պռոշյան գյուղ, Արմավիրի մարզի Մեծամոր քաղաք) և Երևանի գիշերօթիկ հաստատություններում: Ընտրվել են 3 տարիքային խմբեր՝ կրտսեր դպրոցական, դեռահասության և վաղ պատանեկության տարիքում:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել հարցման, դիտման և պրոյեկտիվ մեթոդները:

Բանավոր հարցման մեթոդն իրականացնելու համար կազմվել էին հարցեր. հաշվի էր առնվել տարիքային առանձնահատկությունները և հետազոտության մասնակիցների տեղեկացվածությունը՝ ըստ դասագրքերի և կրթական համակարգի: Բաց հարցերի (1-4) միջոցով նրանք կարող էին ազատ արտահայտել սեփական վերաբերմունքը, հույզերն ու զգացմունքները, ինչպես նաև ունեցած տեղեկատվությունը, իսկ վերջին 5-րդ հարցն ուղղում էր նրանց սեփական դատողությունները տրամաբանական ավարտին հասցնելուն:

Հաջորդ քայլով նույն դասարաններում իրականացրինք ցեղասպանության փաստերի մասին պատմող ֆիլմի դիտում: Ֆիլմի տևողությունը 15 րոպե էր:

Այս ընթացքում մենք կիրառեցինք **դիտման մեթոդը**: Այն թույլ տվեց հասկանալ դպրոցականի մտքերը, հուզական և վարքային դրսևորումները: Այս պարագայում դիտման մեթոդը ամենաարդյունավետն էր, քանի որ դպրոցականը հաճախ հույզերը դժվարանում է արտահայտել խոսքերով: Ֆիլմն անմիջականորեն ազդող գործոն էր նրանց հուզական աշխարհի վրա: Կազմվեց հարցման թերթիկ ըստ երեք գործոնների՝ հույզերի, մտքերի և վարքի:

Պրոյեկտիվ մեթոդի կիրառությունը: Դպրոցականներին տրվեց առաջադրանք. շարադրության տեսքով գրելու այն ամենն, ինչ զգացին և հասկացան ֆիլմից: Նրանց ասվեց, որ պետք է արտահայտեն սեփական մտքերը, հույզերն ու ապրումները, ինչի համար ունեին 15 րոպե ժամանակ:

Հետազոտության արդյունքների վերլուծության համար կատարել ենք քանակական և որակական **վերլուծություն**: Ներկայացնում եմ այս մեթոդիկաների կիրառմամբ դուրս բերված հիմնական արդյունքները՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկություններն ու այն սոցիալական միջավայրը, որն անմիջականորեն ազդել է դպրոցականի՝ ազգային ընկալումների ձևավորման վրա:

Կրտսեր դպրոցական տարիքից սկսած (6-11 տարեկան) առկա է ազգային պատկանելիության գիտակցման որոշակի մակարդակ: Այս տարիքը ընդունված է համարել երեխայի սոցիալականացման և հոգեկան զարգացման կարևոր փուլ, որտեղ ձևավորվում է ինքնաճանաչումը և անհատական ռեֆլեքսիան՝ որպես ունակություն ինքնուրույն որոշելու սեփական հնարավորությունների սահմանը (6, էջ 232):

Դպրոցը, որը հանդիսանում է կարևորագույն սոցիալականացման միջավայր, ծանոթացնում է երեխային ազգային սիմվոլներին, մշակութային արժեքներին: Կրտսեր դպրոցականը, լսելով ցեղասպանության մասին, այն առաջնային ընկալում

է սիմվոլիկ՝ տարածական և տեսանելի պատկերների տեսքով («Թուրքերը գրավել են Արարատ լեռը», «Մենք քարտեզի վրա չենք երևում» և այլն): Այս տարիքում առաջնայինը շեշտադրվում են տարածքային կորուստները՝ (40%-ի մոտ) անգամ տեղեկատվության բացակայության պարագայում, այն ինչ մարդկային կորուստների մասին շեշտվել էր միայն 24%-ի մոտ: Երեխաները չհասկանալով թուրք, ցեղասպանությունն բառերի բուն իմաստը, ծանոթ չլինելով ջարդերի նկարագրություններին՝ հիմնականում ունենում են ուժեղ հուզական ռեակցիա, որն արտահայտվում է անգիտակցական մակարդակում: Ինչպես նշել է Կ. Գ. Յունգն անձնային անգիտակցականից ավելի խոր մակարդակ է կոլեկտիվ անգիտակցականը, որը ընդգրկում է նախկին սերունդների փորձը: Այն պարունակում է ունիվերսալ էվոյուցիոն կապեր և կազմում է անձի հիմքը՝ դրսևորվելով արքետիպերի և սիմվոլների մեջ. այն չի հասունանում անհատական մակարդակում, այլ անցնում է մեզ ժառանգաբար (5, էջ 6):

Երեխայի աճին գուզրնթաց զարգանում են ոչ միայն վերջինների հոգեկան գործընթացներն, այլև մեծանում է տեղեկացվածության մակարդակը: Եթե կրտսեր դպրոցականի մոտ ավելի շատ գերակշռում է ցեղասպանության ընկալումն անգիտակցական մակարդակում, ապա դեռահասն ու հատկապես պատանին ունի ձևավորված և հիմնավոր պատկերացումներ: Ի տարբերություն կրտսեր դպրոցականների, դեռահասները հակված են ավելի շատ վերարտադրելու իրենց գիտելիքները՝ երբեմն գեղարվեստական մեջբերումներով:

Այս տարիքը կարելի է անվանել նաև շատ հակասական: Դեռահասը մտածողության գործընթացում օրինաչափություններ փնտրելիս հանգիստ կարող է ընդունել պատահականը՝ որպես ընդհանրական և կոնկրետը՝ որպես աբստրակտ (4, էջ 517): Հարցումների ժամանակ հնչում էին ֆիքսված նախադասություններ «Թուրքերը ուզում էին սպանել հայերին և թողնել մեկին, այն էլ որպես թանգարանի նմուշ», և ի տարբերություն կրտսեր դպրոցականների, ցեղասպանությունը 56%-ի մոտ դիտարկվում է, որպես սպանություն, մարդկային կորուստ: Այս հուզական խոսքերի վերարտադրության մեջ թաքնված է վիշտ և տագնապ, որը դիտման արդյունքում նկատելի էր ժեստերի, միմիկայի դրսևորումներից: Այս տեսակետին հակառակ առկա է նաև զոհերին հերոսացնելու միտում: Որոշ հերոսական օրինակներ, որոնք անգամ կապված չէին 20-րդ դարի առաջին կեսի իրադարձությունների հետ, ընդհանրացված տարածվում էին ցեղասպանություն հասկացության վրա: Դեռահասների մի մասը (15.5%)՝ հատկապես մարզերում բնութագրում էր այն, որպես հերոսական պատերազմ, որտեղ հայերը մեծ թվով զոհեր են տվել, որոշ դեպքերում նաև «հաղթել, ջախջախել թշնամուն»: Այս հանգամանքը կարող է բացատրվել մի կողմից որպես ճնշված ինքնության դրսևորում, մյուս կողմից ազգի մեծարման և իրականության հերքման չգիտակցված ցանկություն, որը բերում է մինչև իսկ տեղեկացվածության ծայրահեղ աղճատումների: Կարելի է ասել, որ ցեղասպանության և ազգի պատկանելիության հետ կապված ցանկացած հուզական միտք ազդում է դեռահասի ընկալման վրա և կարող է իր տեղն ունենալ նրա աշխարհայացքի և ազգային գիտակցության ձևավորման մեջ:

Ձ. Ադելսոնն իր քաղաքական մտածողության զարգացման ուսումնասիրություններում եկել է այն եզրահանգմանը, որ 11-13 տարեկան հասակում չափազանց արագ են սկսում զարգանալ քաղաքական պատկերացումները, ընդ որում վաղ դե-

ռահասության տարիքում ընկալումները կոնկրետ են, անհատականացված և եսակենտրոն (7, էջ 156): Այսինքն երեխան դիտարկում է իրեն այդ գործընթացների կենտրոնում և ոչ միայն ընդհանրացնում, այլև անձնայնացնում է վերոհիշյալ գաղափարները: Դեռահասության տարիքի ավարտով ձևավորվում է ինքնաձանաչումը: Մեծերի տված գնահատականները փոխարինվում են ինքնագնահատականով:

15 տարեկանից սկսած անձն արդեն ընդունակ է աբստրակտ, ֆորմալ-տրամաբանական մտածողության: Կոգնիտիվ զարգացմանը զուգընթաց կարևոր փոփոխություններ են կատարվում նաև քաղաքական մտածողության և դատողությունների մեջ: Վաղ պատանեկության տարիքը (15-17 տարեկան) առանձնանում է գաղափարական նորամուծություններով, կյանքի փիլիսոփայական իմաստավորմամբ: Ինքնուրույն հասարակական-աշխատանքային գործունեության սկզբի հետ կառուցվում է անձի սեփական կարգավիճակը: Սեփական կարգավիճակի զարգացման հետ մեկտեղ հաստատվում է նաև ազգային կարգավիճակի ընկալումը:

Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, ազգային պատկանելիության գիտակցումն ու ցեղասպանության գիտելիքների առկայությունն ավելի ներքնայնանում և խոր հուզական հետք են թողնում ավագ դպրոցականի մոտ: Այն դեպքում, երբ դեռահասը կարող է օգտագործել տարբեր պաշտպանական միջոցներ, չհամակերպվել ցեղասպանության փաստին կամ դիտարկել այն, որպես աբստրակտ, իրենից հեռու երևույթ, ավագ դպրոցականը ֆորմալ-տրամաբանական օպերացիաների միջոցով ի վիճակի է հստակ նկարագրել պատճառահետևանքային կապերն ու իրեն տեղավորել այդ համակարգում՝ որպես իր ազգի պատմության և մշակույթի կրող:

Ավագ դպրոցականներն առաջին հերթին տարբերվում են ձևավորված կարծիքի և մեծ հետաքրքրության առկայությամբ: Ուսուցիչներից մեկի խոսքերով. «Աշակերտները հատուկ շեշտադրություն էին դնում ցեղասպանության դասերի վրա, տարբեր տեղից հավելյալ տեղեկատվություն որոնում, և անգամ դիտարկում՝ ինչքանով է հնարավոր ցեղասպանության կրկնումը: Նրանք կազմակերպում էին միջոցառումներ՝ նվիրված ցեղասպանության զոհերի հիշատակին»: Պատանու համար ավելի արժեքավոր են մարդկային կորուստները (69%): Նրանք սրտանց ցավում են այդ դեպքերի համար, իրենց զգում ցեղասպանության վերապրածների սերունդներ: Ավագ դպրոցականները կարող են դատել մարդկային արժեքների և արդարության մասին: Այդ հումանիստական գաղափարների հոսքի մեջ հաճախ նաև արդարացվում է ժամանակակից թուրքը, որը «մեղք չունի իր պապերի չարագործությունների համար»: Ըստ մեր դիտարկումների՝ այս գաղափարները սերմանվում էին նաև որոշ ուսուցչական անձնակազմի կողմից, հատկապես Երևան քաղաքում:

Հաճախ ուսուցչի՝ մեր կողմից անվերահսկելի միջամտությունը հետազոտության գործընթացում լինում էր վճռական: Հատկապես կրտսեր դպրոցական և դեռահասության տարիքում մեծ է վերջիններիս վերբալ և ոչ վերբալ ներգործությունը: Սակայն այս հանգամանքը ոչ թե խափանում է հետազոտության ընթացքը, այլ, ընդհակառակը, ցույց տալիս, թե ինչ դաստիարակչական մեթոդներ են կիրառվում դպրոցում:

Ինչպես տեսնում ենք երեխայի՝ ցեղասպանության ընկալումները կախված են ոչ միայն նրանց կոգնիտիվ գործընթացներից և տեղեկատվության տրամադրումից, այլև սոցիալական միջավայրի ներգործությունից:

Դիտարկենք՝ ինչքանով են տարբերվում երեխաների ցեղասպանության ընկալումները կախված սոցիալական գործոններից՝ բնակության վայրից, սոցիալական պայմաններից, դաստիարակությունից, կարգավիճակից: Հաշվի առնենք, որ ուսումնասիրություններն անց են կացվել քաղաք Երևանի, ՀՀ մարզերի դպրոցներում և գիշերօթիկ հաստատություններում, որտեղ ուսուցիչների կողմից նախապես հաստատվել էր, որ ամենուր գործում էին միևնույն դասագրքերը և ուսումնական ծրագրերը, այսինքն՝ արդյունքների տարբերությունները չէին կարող դիտարկվել երեխաներին տրվող տեղեկատվության փոփոխությունների հիման վրա:

Ցեղասպանության ու թուրքերի մասին մեկնաբանությունները մարզերի դպրոցներում առաջացրեցին գրեթե համատարած ագրեսիա և բացասական հուզական ֆոն (77% դեռահասների և 83% պատանիների մոտ): Երևանյան դպրոցներում ավելի ներողամիտ և դրական ուղղվածության պատասխանները գերակշռում էին: Միայն դեռահասների 46%-ը պատրաստակամություն հայտնեց ներելու թուրքին: Այս երևույթը բացատրելու համար կարող ենք առաջարկել այն վարկածը, որ Երևանում բնակվող երեխաներն ավելի շատ են առնչվել հանդուրժողական գաղափարների հետ, որին անմիջականորեն նպաստել է դպրոցի և ընտանիքի դրվածքը, ՁԼՄ-ն և այլն: Բացի այդ Երևանում ավելի շատ է նկատվում ցեղասպանության փաստերի քաղաքականացում. ավագ դպրոցականների մոտ առկա են որոշ իմաստով ձևավորված քաղաքական հայացքներ: Նրանց զգալի մասն առաջարկում էին խնդրի լուծման ավելի քաղաքակիրթ տարբերակներ, այնինչ Պոռոյան գյուղի և Մեծամոր քաղաքի դպրոցներում ընդհանուր տրամադրվածությունը մարտական և ագրեսիվ էր՝ երբեմն ուղեկցվող ազգային հերոսների, իդեալների շեշտադրմամբ և հույսով ապագայի հանդեպ:

Ամբողջովին այլ է պատկերը գիշերօթիկ հաստատություններում, որտեղ նման իդեալները բացակայում են: Այստեղ երեխաների մոտ նկատվում է հակառակ ռեակցիան. ուժեղ ագրեսիա ոչ միայն թուրքերի, այլև սեփական ազգի ներկայացուցիչների հանդեպ: Նման միտում փոքր քանակով նկատվում էր ամենուր, սակայն այստեղ այն հասավ համատարած վիրավորանքների կիրառմանը: Գիշերօթիկ հաստատություններում տիրող մթնոլորտը չի ապահովել սիրված, պաշտպանված լինելու պահանջմունքը: Ըստ «Ասոցիալ ագրեսիայի թեորիայի» երեխայի ագրեսիվ վարքը նախ և առաջ ձևավորվում է մեկ կամ երկու ծնողի հոգ տանելու, քնքշության և կապվածության բացակայության դեպքում: Այդ ֆրուստրացիան բերում է երեխայի մոտ մշտական թշնամության զգացողության: Եթե երեխայի հետ վատ են վարվել, գուցե պարբերաբար պատժել են, հարվածել (ինչը բնական երևույթ է գիշերօթիկ հաստատություններում), այդ մեծահասակները դառնում են նմանակման օբյեկտ երեխայի համար: Այդ հարաբերությունները նրանք տեղափոխում են կյանքի բոլոր ոլորտներ, օրինակ՝ ընկերական միջավայր, քանի որ ագրեսիան փոխակերպվում է այլ՝ ավելի հասանելի օբյեկտի վրա (3, էջ 72): Ագրեսիայի հիմքի վրա ձևավորվում է երեխայի աշխարհայացքը, որն իր տեղն է գտնում նաև ազգային պատկանելիության մեջ: Գիշերօթիկ հաստատությունների պատանիները, հաճախ նվաստացնում էին սեփական ազգը՝ նշելով, որ հայերն են մեղավոր եղել իրենց կոտորածների մեջ: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում նաև անտարբեր կամ անտեղյակ պատանիները (մոտ 30%): Դա հասկանալի է վերջիններիս մշտական «գոհի կարգավիճակում» գտնվելու և իր անցյալը չիմաստավորելու պայմաններում:

Ցեղասպանության փաստի ընկալումը սերտ կապված է նաև երեխաների ընտանիքների անհատական պատմության և արմատների գիտակցության հետ: Ինչպես ասում էր Պոռշյան գյուղի միակ դպրոցի տնօրենը, երեխաները արմատներով սասունցի են, մեծանում են ազգային դաստիարակությամբ և նվաճողական գաղափարներով, ինչը նկատելի էր վերջիններիս վարքում և դատողություններում: Միանշանակ, երբ խոսքը գնում է սեփական ընտանիքի պատմության, հարազատների մասին, անձն իրեն զգում է ցեղասպանության հետևանքների կրող, չնայած որ անմիջականորեն չի առնչվել այդ դեպքերին: Որոշ պայմաններում ընտանիքի պատմությունը կարող է փոխարինվել իր ազգի ներկայացուցիչների անցյալով, ում հետ անձը նույնանում է:

Ինչպես տեսնում ենք՝ այն սոցիալական միջավայրը և դաստիարակությունը, որի ներքո անցել է երեխայի կյանքը, ազդում է նրա ազգային «Ես»-ի ու թշնամու ընկալման վրա, որը պետք է դառնա ուսուցիչների, մանկավարժների, հոգեբանների և ծնողների լուրջ դատողությունների առարկա:

Ներկայիս ուսումնասիրությունները և աշխատանքները պետք է ունենան երկու կարևոր խնդիր. մի կողմից անհրաժեշտ է նվազեցնել սթրեսների հավանականությունը, որոնք առաջ են գալիս ցեղասպանության տրավմատիկ փորձի փոխանցման հետևանքով: Մյուս կողմից ցեղասպանության խնդրի մասին ուսուցանումն իրական փաստերի հիման վրա անհրաժեշտ է այդ խնդրի արդիականության պահպանման, և ազգային գիտակցության բարձրացման համար:

Եզրակացություններ.

- Եթե կրտսեր դպրոցական երեխաները հիմնականում չունեն ստույգ տեղեկատվություն ցեղասպանության վերաբերյալ և նրանց ընկալումները հիմնականում ենթագիտակցական մակարդակում են, ապա տարիքի աճին զուգընթաց ընկալումները դառնում են ավելի գիտակցված, խորը և հուզական:

- Կախված սոցիալական միջավայրից, դաստիարակությունից և արմատների գիտակցումից, դպրոցականների մոտ ցեղասպանության փաստի հետևանքների տարբեր գործոններ տարբեր կերպ են ընկալվում:

- Ի տարբերություն երևանյան դպրոցների, Կոտայքի և Արմավիրի մարզի դպրոցականների շրջանում ավելի շատ է նկատվում իր ազգի մեծարման, հերոսացման և պայքարի ձգտումը:

- Սոցիալապես ծանր վիճակում գտնվող աշակերտներն առանձնանում են ագրեսիայով սեփական ազգի նկատմամբ և ազգային թույլ մտածելակերպով, որը բխում է վերջիններիս սոցիալական կարգավիճակից:

Գրականություն

1. Գարագաշեան Մելինե, Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը, Հոգեբանական վերլուծություն, Ե., 2006 թ., 112 էջ:
2. Մարության Հ. Տ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2006, 89 էջ:
3. Агрессия у детей и подростков: Учебное пособие/Под ред. Н. М. Платоновой.: СПб.: Речь, 2006, 336 с.
4. Абрамова Г. С., Психология Возрастная: Учеб. пособие для студ. Вузов, 4-е изд., стереотип, М: Издательский центр «Академия», 1999, 672 стр.
5. Юнг К. Г., Архетип и символ, Издательство "Ренессанс" СП "ИВО-сид", 1991, 208 էջ.
6. Шаповаленко И. В., Возрастная психология, М., Гардарики, 2005, 349 стр.

7. Шестопап Е.Б. Политическая психология. . М.: Инфра-М, 2002. - 448 с.
8. Шутценбергер А. Синдром предков. Трансгенерационные связи, семейные тайны, синдром годовщины, передача травм и практическое использование геносоциогаммы. — М.: Изд-во Института Психотерапии, 2001. — 240 с.

Нелли Варданыан

*Факультет философии и психологии ЕГУ
Аспирант кафедры истории философии
научный руководитель Гаяне Шавердян*

ВОЗРАСТНЫЕ ОСОБЕННОСТИ ВОСПРИЯТИЯ ГЕНОЦИДА АРМЯН. МЛАДШИЙ ШКОЛЬНЫЙ ВОЗРАСТ, ПОДРОСТКОВЫЙ И ЮНОШЕСКИЙ ВОЗРАСТ

Ключевые слова: *Геноцид, восприятие, травма, возрастные особенности, социальная среда.*

Геноцид армян оставил неизгладимый след и глубокие психологические последствия на весь армянский народ благодаря отражению этого факта в исторической памяти, что способствовало его межпоколенственной передаче. До сих пор представители армянского народа испытывают травматические последствия геноцида с детского возраста, что мы наблюдаем в результате проведенных нами исследований. Очень важно обращать внимание на возрастные особенности детей, а так же знать, что восприятия геноцида зависят не только от когнитивных процессов школьника, от представления информации о геноциде, но и от влияния социальной среды. Подобные исследования ставят цель выявить особенности восприятия школьниками факта геноцида и их использования в области образования.

Nelly Vardanyan

*Faculty of Philosophy and Psychology, YSU
PhD student of the Department of Social Psychology
Scientific Supervisor Gayane Shahverdyan*

THE SPECIFICS OF PERCEPTION OF THE FACT OF ARMENIAN GENOCIDE AMONG DIFFERENT AGE GROUPS

Key words: *Genocide, perception, trauma, age peculiarities, social environment.*

Genocide has left indelible traces and deep psychological impact on the whole Armenian nation. The reflection of that fact in the historical –genetic memory contributed to its inter-generational transfer. Still, after so many years have passed, the Armenian nation carries its traumatic effects since childhood, and it is noted especially in the results of our research with school-age students. It is important to pay attention to the children's age peculiarities. The perception of the Genocide depends not only on the students cognitive processes and informational provision to them, but also on the impact of the social environment. This research aims to find out the peculiarities of children's perception of Genocide and apply them in the educational field.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԽՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Ապրիլ 17, 2015

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Չափսը՝ 70x100 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 11,75:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1